

Մ. ՎԱՍԻԼԵՆԿՈ

**ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ
ՄԱՐՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ
(Կ Մ Ծ)**

ՅԵԿՐՈՐԴ ՎԵՐԱՄՇՈՒՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

355-2

4-26

ՊԵՏՂՏՐԱՏ

ՌԱԶՄՀՐԱՏԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

1933

Մ. ՎԱՍԻԼԵՆԿՈ

355.2

4-26

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՄԱՐՏԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ
(Կ Մ Ծ)

ՅԵՐԿՐՈՐԻ ՎԵՐԱՄՇՈՒՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



ՌԱԶՄԶՐԱՏԲԱԺԻՆ

Մ. ՎԱՍԻԼԵՆԿՈՒ.—Կարմիր բանակայինի ծառայությունը,
յերկրորդ վերամշակված հրատարակություն.

Հեղինակին հաջողվել է համարյա լիովին ընդգրկելու
Կարմիր բանակայինի ծառայությունը մարտում: Այս գիրքը
հետևակի մարտական ծառայության II մասի և մյուս հրա-
հանգիստերի սրբող պատմվածք է, այլ մի ձևովարկ է, վորի
մեջ ընթերցողը կգտնի շատ գործնական ձևեր ու հմտություն-
ներ, թե ինչպես պետք է վարվել մարտական պարագայի այս
կամ այն դեպքում: Այդ տեսակետից ԿՄԾ գանահատելի մի
ձևովարկ է հետևակի կարմիր բանակայինների և ջոկերի
հրամատարների համար: ԿՄԾ ձևովարկը գրված է սրբող և
շատ հասկանալի լեզվով, մարտիկները հեշտությամբ կարող
են կարգավ:

Այս ձևովարկը կարելի է հանձնարարել ոգտվելու նաև
քաղաքացիական ԲՈՒՀ-երին, Ռազմ. տեխ. դպրոցներին,
տեխնիկումներին, բանֆակներին, վորոնք անցնում են բարձր
արտադրային, բարձր նախակուչյան և ուղղմական պատրաս-
տությունը: Այս բրոշյուրն ոգտակար կարող է լինել նաև
Պաշտպանության միջոցների համար, վորոնք ուղղմական ուսու-
ցումն անցնում են վարժակայաններում և ուղղմական գիտե-
լիքների խմբակներում:

Պատ. խմբ. Մ. Դավթյան
Տեխ. խմբագիր Գ. Զեմյան
Թարգմանիչ Լ. Ալեքյան, Գրաբիս
Սրբագրիչ՝ Ա. Յերիցյան

Պատկեր 1573. Գլխիկ 8206 (բ) Հրատ. 2636 Տիբած 5000
Հանձնված է արտադրության 26 Հունիսի 1933 թ.
Ստոլ. ագրված է Տպագրչու 23 Ոգտասի 1933 թ.

ՆԱԽԱԲԱՆ.

Ժամանակակից բանակները հաղեցվածությունը մարտական
տեխնիկայով քանի գնում ավելի ու ավելի յե հարկադրում մար-
տիկներին ցրվելու մարտադաշտում, իսկ վերջինս իր հերթին
ստեղծում է այնպիսի պարագա, վորի ժամանակ հրամատարը չի
կարող լիակատար հաջողությամբ ղեկավարել մարտը, յեթե կար-
միր բանակայինը ակտիվորեն չոգնի նրան:

Յեզ մեր կարմիր բանակայինը այդ շատ լավ է հասկանում:
Նա չի բավարարվում միայն պարագմունքներով, վորոնք անց են
կացվում հրամատարի ղեկավարությամբ: Կարմիր բանակայինն
ուզում է ինքնուրույն կերպով հրամատարի ոգնությամբ, նույն-
պես և կուսակցական ու հասարակական կազմակերպությունների
ազնությամբ, ամրացնել ու ընդլայնել իր գիտելիքների, գործնա-
կան ունակությունների ու հմտությունների ծավալը: Այդ աշխա-
տանքում կարմիր բանակայինը հարկադրված է լինում հանդիպել
համապատասխան ձևովարկների բացակայության:

Գոյություն ունեցող կանոնադրերը լիովին չեն լրացնում
այդ բացը: Այդ կանոնադրերի մեջ կամ փոքր չափով կամ բոլո-
րովին տեղ չի տրված լինում կարմիր բանակայինների պարտակա-
նություններին, կամ քիչ բան է լինում, վոր վերաբերի անհատ
մարտիկին, այն էլ կգտնեք շատ կանոնադրերի առանձին եջե-
րում:

«Կարմիր բանակայինի մարտական ծառայությունը» մի ձեռ-
նարկ է, վոր հանդիսանում է մի փորձ կարմիր բանակայինի ձեռ-
քը տալու մի տեղ ամփոփված նրա գլխավոր պարտականություն-
ները՝ մարտական աշխատանքի տարբեր դեպքերում:

Վորպես առաջին փորձ, այս աշխատությունն ունի իր թերու-
թյունները:

Ոնդրվում է կարմիր բանակայիններին և հրամատարներին,

վորոնք սղտվում են «Կարմիր բանակայինի մարտական ծառայու-
թյունը» ձեռնարկից, մաքերի փոխանակութուն ունենալ հեղթ-
նակի հետ, պատասխանելով հետևյալ հարցերին.

- 1) Ի՞նչն է պակասում զբքի մեջ.
- 2) Ի՞նչ կարելի յե կրճատել.
- 3) Ի՞նչն է աահանջվում ճշտորոշել և փոփոխել:

1. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԶԻՆՎԱԾ ՀԵՆԱՐԱՆՆ Ե

ԽՍՀՄ բանվոր դասակարգը, դաշնակցած աշխատավոր դյու-
ղացիության հետ և բայլչեիկյան կուսակցության ղեկավարու-
թյամբ հեղափոխական խանդավառությամբ սոցիալիզմ է կառու-
ցում իր յերկրում: Նա արդեն ձեռք է բերել հսկայական արդյունք-
ներ: Նա աղքատ, տեխնիկապես հետամնաց յերկիրը դարձրել է
մի հզոր, տեխնիկապես առաջավոր և կապիտալիստական տնտե-
սությունից անկախ սոցիալիստական մի պետություն:

Իր կուսակցության և իր առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավա-
րությամբ բանվոր դասակարգը ստեղծել է առաջնակարգ ծանր
արդյունաբերություն, գլխովին ջախջախել է կուլակային դասա-
կարգը, մեր յերկրում կապիտալիզմի այդ վերջին հենարանը,
ժաղմակերպել է կոյտնտեսությունների մեջ չբավորա-միջա-
կային գյուղացիության հիմնական մասսա, զինել է նրան
գյուղատնտեսական բարձր տեխնիկայով և արագ տեմպերով
առաջնորդում է նրան սոցիալիստական ուղիով: Այս բոլորի հե-
տևանքով—մեր յերկրի ներսում արդեն գոյություն չունի այնպի-
սի մի ուժ, վորը կարողանար խանգարել սոցիալիզմի լիակատար
հաղթանակին:

Սակայն, չնայած կապիտալիստական յերկրներում հեղափո-
խական շարժման մեծ աճմանը, ԽՍՀՄ շարունակում է մնալ միակ
պրոլետարական պետությունը իմպերիալիստական շրջափակման
մեջ: Անխուսափելի յե զինված ընդհարումը յերկու թշնամական
ֆանալիների միջև, այն է՝ սոցիալիստական պետության և կապի-
տալիստական աշխարհի միջև: Այդ ընդհարման մոմենտը քանի
գնում այլևի յե մոտենում, չնայած խաղաղության քաղաքակա-
նությանը, վորն ամբողջ հաստատակամությամբ և հետևողակա-
նությամբ անց է կացնում Խորհրդային կառավարությունը: Տըն-
տեսական ճգնաժամի հետևանքով առաջացած կապիտալիստական

անտեսութեան քայքայումն իմպերիալիստներին մղում է դեպի
ռազմական ավանտյուրաներ, դեպի վարորդներ ճգնաժամից յելք
դանելու նոր համաշխարհային սպանդում և առաջին հերթին նոր
հակախորհրդային արշավի մեջ:

Խորհուրդները յերկրի հսկայական չափով ամբողջած պաշտ-
պանունակութունը՝ առաջին հնգամյակը չորս տարում հաղթա-
կանորեն ավարտելու հետևանքով, հնարավորութիւնն է տալիս
բանվոր դասակարգին և բոլոր աշխատավորներին, Կարմիր բանա-
կի պաշտպանութեան տակ հանդիսատէ վստահորեն շարունակելու
սոցիալիզմի շինարարութիւնը, հենվելով ամբողջ աշխարհի
ճնշվածների համակրանքի և ոգնութեան վրա: Կարմիր բանակը
պրոլետարական պետութեան հիմնական գինոված ուժն է, վորը
գերազանցորեն հասկանում է այն բարձր դերը, վորը նա կատա-
րում է և կկատարի բանվոր դասակարգի կամքով: Կարմիր բանա-
կը հարվածային տեմպերով առաջ է տանում իր մարտական ու
քաղաքական ուսուցումը, պատրաստվելով կապիտալիստական աշ-
խարհի հետ զալիք ընդհարման համար: Յուրաքանչյուր կարմիր
բանակային պետք է զիտակցորեն և հեղափոխական ամբողջ յե-
ռանդով պատրաստի իրեն կապիտալի դեմ «զալիք և վճռական
մարտի համար»: Կարմիր բանակի յուրաքանչյուր մարտիկ պետք
է մանրամասնորեն ուսումնասիրի այն մարտական խնդիրները,
վորոնք կդրվեն նրա վրա բանվորների ու աշխատավորների և ամ-
բողջ աշխարհի շահագործողների ու ճնշողների միջև տեղի ունե-
նալիք զալիք ճակատամարտերում: Կարմիր մարտիկը հեղափո-
խական խանդավառութեամբ իր հրամատարների և քաղաքական
ղեկավարների ղեկավարութեամբ պետք է ուսումնասիրի մարտա-
կան ձևերը (պրիմները), ստանա մարտական հմտութիւններ,
կատարելապես տիրապետի իր զենքին, իր մարտական տեխնիկա-
յին:

Դրա հետ միասին, կարմիր բանակայինն իր կուսակցական
կազմակերպութեան ղեկավարութեամբ պետք է կոփի իր դասա-
կարգային զիտակցականութիւնը, իր անձնուրաց նվիրվածու-
ծութիւնը սոցիալիզմի գործին, իր պատրաստակամութիւնը՝
պաշտպանելու սոցիալիստական սեփականութիւնը զենքը ձեռքին:
Ամեն կերպ աջակցելով սոցիալիստական շինարարութեանը մեր
յերկրում, կտոմիս բանակայինը պետք է աշխրջութեամբ հետևի
թե ինչ է կատարվում կապիտալիստական պետութեաննեքի բա-
նակներում:

Կարմիր մարտիկը հաստատ պետք է հիշի Կարմիր բանակի
առաջնորդ-Կ. Յե. Վորոշիլովի խոսքերը, արտասանած Հոկտեմ-
բերի 15-ը տարեդարձի որը.

«Մենք պատերազմելու մտադրութիւնն չունենք. սակայն
յերբեք և վոչ վոքի թույլ չենք տա ձեռք բարձրացնելու մեր սահ-
մանների ամբողջականութեան վրա: Մեր սահմանները սրբազան
են և անխորտակելի: Նրանք վորողված են բանվորապաշտպան-
կան արյունով, և այդ սահմանները վոչ վոքի, յերբեք, վոչ մի
պարագայում թույլ չենք տա անցնելու»:

Կարմիր մարտիկը կուսակցութեան և կառավարութեան առա-
ջին կոչին պետք է պատրաստ լինի զենքը ձեռքին կրճքով պաշտ-
պանելու Հոկտեմբերյան նվաճումները, պաշտպանելու սոցիալիս-
տական պետութիւնը, համաշխարհային պրոլետարական հեղա-
փոխութեան այդ բազան:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՐՏԱԿԱՆՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Ինչ է ՊԱՀԱՆՁՎՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻՑ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ԽՆԴԻՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ.

Ամեն տեսակ պարագայում, ամեն տեսակ խնդիր կատարելու
ժամանակ, թե ուսուցման ժամանակ և թե մարտում կարմիր բա-
նակայինը պարտավոր է.

ա) Իմանալ, հասկանալ և միշտ հիշել իր մարտական խնդիրը
և իր ջոկի ու դասակի խնդիրը:

Մարտական խնդրի կատարման համար կարմիր բանակայինը
պատասխանատու յե հրամատարին հավասար:

Յեթե դու խնդիրը չես հասկացել և չզիտես այդ խնդիրը,
վոչ միայն իրավունք ունես, այլև պարտավոր ես դիմելու քո մեր-
ձակա հրամատարին բացատրութիւն ստանալու համար:

բ) Հասկանալ հրամատարի դերը և անպայման վստահել նրան:

Կարմիր բանակի մարտիկը միշտ պետք է հիշի, վոր Կարմիր
բանակի հրամատարը նշանակված է Խորհրդային իշխանութեան և
Կոմունիստական կուսակցութեան կողմից, նրա համար, վորպետքի
խաղաղ ժամանակ սովորեցնի և դաստիարակի, իսկ պատերազմի
ժամանակ ղեկավարի մարտում կարմիր բանակայիններին:

Կարմիր բանակի մարտիկը պետք է որինակ վերցնի իր հրամատարից և մարտում ազատի նրան վտանգից, չխնայելով իր կյանքը:

գ) Լինել ուշադիր դեպի պետի հրամանները, ազդանշանները և նշաններն ու արագորեն կատարել այդ հրամանները. ստացած կարգադրությունը խսկույն կրկնել:

Ուշադրութեամբ հետևել իր մերձակա պետի տեղաշարժերին և իմանալ թե վորտեղ է դանդում նա:

Միշտ պատրաստ լինել փոխարինելու վիրավոր կամ սպանված ջոկի հրամատարին և կատարել նրան առաջադրված խնդիրը:

Հանդիպելով ավագ պետին, յեթե հարցնի, զեկուցել նրան թե վորտեղ է ջո գործասը, ինչ է անում, ո՞ւր էս գնում և ինչ հանձնարարութունն էս կատարում:

դ) Ամեն կերպ ամրացնել հեղափոխական կարգապահությունը, հիշելով կարմիր բանակի առաջնորդ ընկ. Վորժիլովի խոսքերը այն մասին, վոր «կարգապահությունը մեզ հարկավոր է ինչպես ողբ»: Առանց առարկության կատարել հրամատարի հրամաններն ու կարգադրությունները. յեթե հրաման չես ստացել՝ գործի ինքնուրույն, ձգտելով կատարելու ջոկին, դասակին և վաշտին առաջադրված խնդիրը (հայտարարել նախաձեռնությունը):

ե) Որինակ տալ իր ընկերներին:

Մարտում միշտ չի պատահում, վոր աշխատես հրամատարի աչքի առաջ: Հրամատարի աչքից հեռու նույնպես պետք է գործել վճռահանորեն և ինքնուրացութեամբ, ինչպես և նրա ներկայութեամբ: Վորքան ել ծանր լինի դրությունը, չպետք է ընկճվել: Այս պետք է տոանձնապես հիշել բռնամարտի ժամանակ, վորտեղ շարքային մարտիկի անվահերության որինակը հաճախ ընկերներին խրախուսելով առաջ է մղում և հաղթանակ է տալիս: Բարձր պահելով իր ընկերների առույգ արամադրությունը, անհրաժեշտ է խուսափել այնպիսի խոսքերից, բացականջություններից և գործողություններից, վորոնք կարող են առաջ բերել անհանդստություն և խուճապ:

զ) Ոգնել իր հարևանին մարտում կրակով, սվիճով, բահով, նռնակով—այդ կարմիր բանակայինի առաջին պարտականությունն է:

Միայն ամբողջ ջոկի, դասակի, վաշտի և յուրաքանչյուր կարմիր բանակայինի առանձին վերցրած միահամուռ աշխատանքով կարելի յե կատարել մարտական խնդիրը:

Յերբեք մի խուսափիր ընկերոջդ ողնելուց:

ը) Ամեն տեսակ պարագայում խնայել գեմքը փչանալուց և խնայողաբար ծախսել փամփուռները. հիշել, վոր անսարք գեմքով կամ առանց փամփուռների չի կարելի կատարել առաջադրած խնդիրը. գեմքի ու մարտաքերքի կորուստի համար յուրաքանչյուր մարտիկ խիստ պատասխանատվությունն է կրում:

Մարտում միշտ պետք է ոգտագործել փամփուռները սպանվածներից և ծանր վիրավորներից: Հենց վոր ծախսված կլինի ջո փամփուռների պաշարի կեսը, պետք է զեկուցել այդ մասին ջոկի հրամատարին:

Փամփուռները խնայելու լավագույն միջոցը կլինի սովորել այնպես կրակել, վոր յուրաքանչյուր արձակած գնդակ դիպչի Պշանին:

թ) Մարտական աշխատանքի բոլոր դեպքերում կարողանալ հարմարվել տեղանքին:

Արտում այնպես պետք է հարմարվել տեղանքին, վորպեսզի լավ տեսնել թշնամուն և զնդակոծել նրան. իսկ այդպիսի դեպքում ինքն ել մնա քեզ նկատելի և վորքան հնարավոր ե՛ր լավ ծածկված մնալ հակառակորդի զնդակներից:

Ինչպես տեղում դասավորված ժամանակ, այնպես և շարժման ընթացքում մարտիկները պետք է կարողանան քողարկվել, վորպեսզի քիչ նկատելի լինեն և այդպիսով իսկ պահպանեն իրենց հարվածումից:

Բահը հարկավոր է ոգտագործել վոչ միայն խրամատ փորելու համար, այլև հակառակորդի զնդակից պաշտպանվելու համար:

ժ) Վիրավորվելու դեպքում, կարողանալ «անհատական ծրարի» ոգնությունը կապել վերքը, առանց ձեռք տալու վերքին կեղտոտ ձեռքերով:

Յերբ վերքը հնարավորությունն չի տալիս մնալու շարքում, այն ժամանակ հարկավոր է փամփուռներն ու նռնակները հանձնել ընկերոջը և հրացանով ուղեվորովել բժշկական ողնության կայանը մերձակա հրամատարի թույլտվութեամբ: Ծանր վիրավոր-

վելու գեպընամ սողալով գնա մի ծածկված տեղ և սպասիր այն-
տեղ սանիտարներին :


բ) Ոգնել վիրավոր ընկերոջը վերքը կապելով . բայց յերբեք
չքողնել քակատամարտի դաշտը իբրև թե ոգնում ե վիրավորին :

Վիրավորվածներին թիկունք կարող են ուղեկցել միմյան
սանիտարները, իսկ մարտիկները, սանիտարների բացակայութան
դեպքում, միայն հրամատարի հրամանով :

լ) Շփում չունենալ հակառակորդի հետ :

Հակառակորդը գնդակահարում է իր այն զինվորներին, վո-
րոնք փորձ են անում խոսակցել կարմիր բանակայինների հետ .
միևնույն ժամանակ հակառակորդի սպաներին հանձնարարվում
է հարկավոր դեպքում (մանավանդ խրամատային պատերազմում)
խոսակցությամբ բռնվել կարմիր բանակայինների հետ, միայն
նրա համար, վորպեսզի հարկավոր տեղեկություններն իմանան
մեր զորքերի և մեր մտադրությունների մասին :

Սպայի ամեն մի այդպիսի փորձին գնդակով պետք է պատաս-
խանել և այդպիսի ամեն մի փորձի մասին և քո «պատասխանի»
մասին իսկույն պետք է ղեկուցես քո հրամատարին :



Նկ. 1. Սպայի ամեն մի փորձին՝ խոսակցել քեզ հետ, պատաս-
խանիր դիպուկ գնդակով

Յերբ հակառակորդի զինվորները փորձ են անում խոսակցել
մարտիկների հետ, հարկավոր է պատասխանել նրանց դերի ընկ-
նելու առաջարկով և իսկույն այդ մասին ղեկուցել հրամատարին :
Վոչինչ այլ բանի մասին թույլ չի տրվում խոսելու հակառակոր-

դի զինվորների հետ, վորպեսզի չհայտնվի, թեկուզ պատահաբար,
ազդական դադանիքը :

Կարմիր բանակի մարտիկը չպետք է մոռանա, վոր թե ու-
սուցման ժամանակ և թե մարտում հաղթում է նա, ով գիտե թե
ինչ է ուղում և ինչի համար է մարտնչում : Հաղթում է նա, ով իր
գիտակցությունն ամրացնում է կրակելու լավագույն հմտու-
թյուններով, ով լավ է սովորում հարմարվել տեղանքին և քո-
ղարկվել, առաջ շարժվել հմտորեն և արագորեն, ով լավ սովորում
է դիտել և վորոնել հակառակորդին, իսկ ինքը իրեն չի պատկե-
րում վորպես թիրախ, այսինքն՝ չի մնում թշնամու հրաձիգները
առաջ յերկար ժամանակ բաց և անչարժ :

ԽՍՀՄ պաշտպանության համար գալիք մարտերում, սոցիա-
լիզմի համար մարտերում հաղթանակները կուրվելու յեն բոլոր
մարտիկների միաձուլությամբ՝ իրենց պլուխ ունենալով իրենց
հրամատարներին և քաղաքական ղեկավարներին, միաձուլվելով
Կոմունիստական կուսակցության, ՀամԿ(բ)Կ բջիջների, իր զո-
րամասի, իր վաշտի շուրջը :

Յուրաքանչյուր մարտիկ պետք է հարվածային լինի, լինի
մարտական ակտիվիստ, հայտարերելով իր նվիրվածությունն ու
հեղափոխական կուրվածությունը Խորհրդային իշխանության հա-
մար մղվող մարտերում :

3. ԻՆՉՈ՞Ւ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՊԵՏԻ Ե
ԻՄԱՆԱ ԻՐ ՋՈԿԻ, ԴԱՍԱԿԻ. ՎԱՇՏԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Ժամանակակից մարտադաշտը շատ ամայի յե : Հաճախ մար-
տիկները ցվրված են լինում մեկ մեկուց տասնյակ քայլերով հե-
ռու : Նրանք հարմարվում են տեղանքին, քողարկվում են : Այդ
շատ լավ է, վորովհետև հակառակորդը նրանց չի տեսնում : Սա-
կայն միաժամանակ այդ դժվարացնում է ղեկավարությունը,
վորովհետև հրամատարները չեն տեսնում իրենց բոլոր մարտիկ-
ներին, իսկ մարտիկները—իրենց հրամատարին : Մյուս կողմից
մարտի պարագան հաճախ փոխվում է, հայտնվում են նոր նշան-
ներ և այն ել կարճ ժամանակով : Միայն այն մարտիկը, վորը դե-
տե, հասկանում է իր և ամբողջ ջոկի, դասակի խնդիրը, կարող
է այդպիսի ղեպքերում ինքնուրույն վճիռ ընդունել և իր գործո-
ղություններով ոգնել կատարելու ընդհանուր խնդիրը :

Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է պատրաստ լինի ֆոխարիններու շարքից դուրս յեկած իր հրամատարին. իսկ նա ֆոխարիններ կարող է միայն այն ժամանակ, յերբ լավ կլիմանա իր ջոկի և դասակի խնդիրը:

Յուրաքանչյուր կարմիր բանակային պարտավոր է իր անձնական սրինակով ողնել իր ընկերներին կատարելու ընդհանուր խընդիրը. իսկ դրա համար նա նույնպէս պետք է հասկանա ջոկի և դասակի խնդիրը:



Նկար 2. Ժամանակակից մարտադաշտը շատ ամալի յե

Մարտում կարմիր բանակայինը գործում է վոչ թե մենակ, այլ ջոկի կազմում, և նա պետք է կարողանա իր գործողութիւնները համաձայնեցնել ջոկի ընկերների գործողութիւնների հետ: Չոկերը հաճախ գործում են դասակի կազմում. իսկ դասակները վաշտի կազմում: Նրանց գործողութիւնների, նրանց կրակի համաձայնեցումից է կախված մարտի հաջողութիւնը: Իսկ համաձայնեցրած գործողութիւններ կարող են լինել միայն այն ժամանակ, յերբ հարեան ջոկերն ու դասակները գիտեն մեկմեկու խնդիրը և յերբ յուրաքանչյուր կարմիր բանակային կլիմանա և կհասկանա իր ջոկի, դասակի և վաշտի խնդիրը:

Այն դասակը, ջոկը, վորտեղ բոլոր մարտիկները գիտեն ու հասկանում են մարտական խնդիրը, կհայտարարի թե՛ յեռանդ, թե՛ մարտական թափ՝ խնդիրը կատարելու գործում:

Որինակ՝ յեթե կարմիր բանակայինը հարձակողական մարտում գիտե, վոր վաշտի խնդիրն է դուրս քշել հակառակորդին ճապարակի ուստից, իսկ այդ վաշտի, դասակի և ջոկի խնդիրն է դուրս

քշել հակառակորդին այդ ազարակի հարավային ծայրամասից այն ժամանակ բոլոր տեսակի պայմաններում նա համառորեն կձգտի հասնել այդ նպատակին: Այդ նպատակին կձգտեն նաև մնացած կարմիր բանակայինները: Այն ժամանակ կստացվի այն վոր բոլոր մարտիկները գիտակցաբար իրենց ջանքերը կուղղեն կատարելու մի նպատակ, այն է՝ մարտական խնդիրը:

Այն դասակը, վորի մարտիկները չեն հասկանում իրենց խընդիրը, այդ դասակը մարտում կլինի վոչ թե դասակ, այլ մարդկանց անկազմակերպ մի խումբ, վորոնք սպասում են հրամաններին ու կարգադրութիւնների և անընդունակ են գործելու առանց այդ հրամանների:

4. ՈՎ Ե ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մարտական խնդրի կատարման համար պատասխանատու յե վոչ միայն հրամատարը, այլև յուրաքանչյուր կարմիր բանակային:

Դեռևս խաղաղ ժամանակ մարտիկները սովորում են կատարել ամենադժվարին խնդիրներ:

Պատերազմի ժամանակ հարկ է լինում կատարելու մարտական խնդիրներ և՛ անձրև, և՛ ձյուն, և՛ սառնամանիքների ժամանակ, հաճախ հարկ է լինում գիշերներով չքնել, կերակուր ստանալ վոչ ժամանակին, հաճախ սնվել պաքսիմատով (սուխարով), իսկ յերբեմն ել ամբողջ որերով մնալ առանց կերակրի:

Վոչ մի գրկանք պատճառ չի կարող լինել մարտական խնդիրը չկատարելուն:

Նույնիսկ խաղաղ ժամանակ հրամատարից ստացած հրամանը կամ խնդիրը պետք է կատարել առանց առարկութեան, թեկուզ այդ հրամանի կամ խնդրի կատարումը կապված լինի մեծամեծ դժվարութիւնների, գրկանքների հետ, իսկ յերբեմն ել առողջութեան համար վտանգի հետ և նույնիսկ կյանքի համար վտանգի հետ:

Յուրաքանչյուր մարտիկ իր անձնական որինակով պետք է վառ պահի ջոկի հոգնած մարտիկների արիութիւնը:

Մարտիկը պատասխանատու յե վոչ միայն իր խնդրի կատարման համար, այլև այդ խնդիրն իր ամբողջ ջոկի կողմից կատարելու համար:

Հրամանների չկատարումը մարտում անխուսափելիորեն պարտություն է առաջ բերում :

5. Ինքուր կԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ ՊԵՏՔ Ե ՀԱՐԵՎԱՆԻՆ ՈԳՆԻ ԿՐԱԿՈՎ, ՍՎԻՆՈՎ, ԲԱՀՈՎ ՅԵՎ ԱՅՆ ԱՄԵՆՈՎ, ԻՆՉՈՎ ԿԱՐՈՂ Ե (ՓՈՆԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ)

Նախ և առաջ յուրաքանչյուր մարտիկ պետք է հասկանա, վոր ինքը մենակ չէ կռվում, այլ կռվում է ամբողջ զորամասի կաշմում—ջոկի, դասակի, վաշտի և այլն կազմում, և մարտում հաջողությունը, հաղթանակը ձեռք է բերվում միայն առանձին մարտիկների և ամբողջ զորամասերի փոխադարձ ուղնությամբ :

Յերբեք չպետք է ընկերոջը թողնել փորձանքի մեջ վոչ միայն մարտում, այլև խաղաղ ժամանակ :

Ընկերոջն ոգնելու որինակներ

1. Սվինամարտում ջո ընկերոջը նեղն են դցել յերկու հակառակորդ սվինով. իսկ ջո դիմաց վոչ վոք չկա : Հասիր ոգնության, կսպանես մեկին, մյուսին յերկուսով կհաղթեք : Յեթե չողնես ընկերոջը, հակառակորդը կսպանի նախ նրան, և հետո քեզ :

2. Հակառակորդի փոքր խմբակը հարձակվում է ընկերոջը վրա, վոր խրամատումն է նստած : Հակառակորդի գնդակները նրան հնարավորություն չեն տալիս կրակելով պաշտպանվել և նրա կորուստն անխուսափելի յե : Կրակ բաց արա հարձակվողի թևից և դիպուկ գնդակներով ոգնիր ընկերոջը. իսկ նա ել քեզ կողմի այն ժամանակ, յերբ թշնամին ջո վրա կգա : Դրանումն է կրակով ոգնությունը, ալելի ճիշտ՝ գնդակով ոգնությունը :

3. Վազեվազքով հասնելով նոր դիրք, դու դատար քեզ համար ծածկված տեղ արկից առաջացած ձաղարում, իսկ ջո ընկերը ծածկված տեղ չունի : Քո բահը կարող է ոգնել ընկերոջը, յեթե դու ջո ձաղարում փորես նրա համար նույնպես ծածկված տեղ :

4. Սվինամարտում թշնամին սվինը թախհարում է ջո հրամատարի վրա, դու յետ ես հրում հարվածը և ազատում ես հրամատարին : Այդպիսով դու ոգնում ես վոչ միայն հրամատարին, սպանվեր, այն ժամանակ մարտիկները կմնային առանց ղեկավարության, իսկ այդ պատճառ կղառնար ամբողջ միավորման անհաջողության :

5. Տանկիտկան ընկել է կոճղի վրա և նրան վտանգ է սպանում հակառակորդի արկերից : Նետվիր ոգնության, կիբրկես տանկիտաներին, նրանք ել իրենց հերթին կողնեն վոչնչացնելու քեզ և ջո ջոկը գնդակոծող գնդացիքը :

Միշտ նեղ տեղից ազատիր ընկերոջդ, ոգնիր նրան ինչով կարող ես—դրանումն է հաղթության գրավականը :



Նկար 3. Ոգնիր ընկերոջդ մարտում


Ընկերոջն ազատել նեղ տեղից, այդ միայն այնպիսի ոգնություն է, վորը կատարվում է ծառայության ողտի համար : Իսկ յեթե այդ ոգնությունը վնասակար է ծառայության համար, Կարմիր բանակի համար, Խորհրդային իշխանության համար, այն ժամանակ, այդ արգեն վոչ թե ընկերոջը նեղ տեղից ազատել է, վոչ թե ընկերական ոգնություն է նշանակում, այլ այդ նշանակում և մասնակցել հանցանքի մեջ, յերդման խախտման մեջ, դավաճանության մեջ : (նկ. տես 16-րդ էջում)

6. ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀՆՏ

Կարմիր բանակը խորհուրդների յերկրի սոցիալիստական շինարարության անխորտակելի հենարանն է : Կարմիր բանակը հանգիստանում է ազատագրված բանվորների ու գյուղացիների բանակը : Համկոմկուսի և խորհուրդների ղեկավարությամբ աճում ալ

ամբանում և Կարմիր բանակի կապը զործարանների, Փաբրիկների և բոլոր աշխատավորների հետ:

«Աշխարհում վոչ մի տեղ այնպիսի հոգատար վերաբերմունք չկա դեպի բանակը ժողովրդի կողմից, ինչպես մեզանում: Մեզանում սիրում են բանակին, հարգում են նրան, հոգ են տանում նրա մասին»:



Նկար 4. Ոգնիր բնկերոջդ բաժով

Ընկ. Ստալինի այս խոսքերը լիովին հաստատվեցին քաղաքացիական պատերազմի ժամանակ, հաստատվում են նաև ուսուցման շրջանում:

Յուրաքանչյուր կարմիր բանակային իր վարչութային պետք է ապացուցի, վոր նա արժանի յե այդպիսի սիրուն, այդպիսի հոգացողությանը:

Կարմիր բանակի մարտիկը բնակչության աչքում պետք է դասակարգային դիտակցականության, քաղաքական ակտիվության և հեղափոխական կարգապահության որինակ ծառայի:

Առանձին կարմիր բանակայինի վարչութային դատում են ամբողջ Կարմիր բանակի մասին: Յուրաքանչյուր կարմիր բանակային իր վարչութային, բնակչության հետ իր փոխհարաբերությանը պետք է ցույց տա Կարմիր բանակի ԽՍՀՄ ղեկաված հե-

նարանի հեղափոխական դեմքը, վորպես իմպերիալիզմի լծից աշխատավորներին ազատագրողի դեմքը: Ամենանվազ չարիով հարբեցողության, խառնակչության, թափթիվածության, անկար-



Նկար 5. Ոգնիր հրամաարին մարտում

գապահության և այլն հայտարարումը հանցանք է թե՛ իր գործաժախ, և թե՛ խորհրդային իշխանության հանդեպ:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԴԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅՈՐԹՈՒՄ

7. ԻՆՉ ԳԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ ՅԵՐԹՈՒՄ

Յերթերը (մարչերը), 'այսինքն' յերթային շարժումները սովորական ճանապարհներով կատարվում են հակառակորդին մոտենալու և նրա դեմ մարտ մղելու, ջախջախված հակառակորդին հետապնդելու, կամ նրա հարվածի տակից դուրս գալու համար: Բոլոր դեպքերում զորքերից պահանջվում է շարժման արագության պահպանում յերթից հետո առաջիկա մարտի համար:

Զորքերի մարտական պատրաստականությունը պահպանելու և մարտիկների ուժերը խնայելու համար անհրաժեշտ է, վորպես-

ա) մարտիկները պարտավորված են հարդարել զինասարքը և պահպանել իրենց վարչությունը:



բ) կարողանան ճշտորեն ոգտագործել հանգստի համար գաղափարները,

դ) խոտորեն պահպանեն շարժման կարգը (յերթի կարգապահությունը),

դ) կարողանան պայքարել թշնամու հանկարծակի հարձակումների դեմ:

8. ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆԵԼ ՎՈՏՔԵՐԸ

Հետևակի համար վոտքերը նույնն են ինչ վոր ձին հեծելակի համար, ինչ մոտորը սավառակի համար: Իդուր չե ասված, վոր հետևակի ուժը վոտքերի մեջ է. յեթե կարմիր բանակային-հետևակի վոտքերը հիվանդանան, նա կորցնում է առաջ շարժվելու բնութագրությունը, դառնում է մի ծանր բեռ և միայն ծանրաբեռնում է գումակներն ու հիվանդանոցները:

Հետևակները շատ հաճախ փչացնում են իրենց վոտքերը ցըրտահար անելով կամ վոտքերի հարում առաջ բերելով:

Վոտքերը ցրտահար չանելու համար, հարկավոր է կոշիկներ ընտրելիս, ընտրել այնպիսիները, վոր նեղ չլինեն: Վոտքերը ցըրտից պահպանելու համար ոգտակար է, բացի փաթաթաններից, փաթաթել նաև լրագրի թղթով: Գաղափարներում և դիշերոթում հարկավոր է փոխել փաթաթանները կամ չորացնել:

Վոտքերը հարելուց զերծ պահելու լավագույն միջոցն է ճիշտ հարգարել վոտնամանները. թե նեղ, և թե ավելորդ ազատ վոտնամանները միատեսակ հարում են վոտքերը: Մեծ կոշիկներ ունենալու դեպքում պետք է վոտքերը փաթաթել յերկու, և նույնիսկ յերեք փաթաթաններով. յեթե չկան յերկրորդ գույգ փաթաթաններ, այն ժամանակ յերկրորդ գույգը կարելի յե փոխարինել ներքանի տակադրով (ստեղիկ) թեկուզ ծղոտից:

Նոր վոտնամանը նույնպես յերթի ժամանակ վոտքերի հարում է առաջացնում: Այդ պատճառով, յերթից առաջ նոր կոշիկներ ստանալիս, հրամատարը խնդիր է առաջադրում 2—3 օրում զեչ մաշել:

Յերթից առաջ պետք է լվալ վոտքերը. կեղտոտ վոտքերը կոշտացած կաշիով ավելի շատ են հարվում, քան մաքուր վոտքերը: Լվալով վոտքերը, լավ պետք է սրբել-չորացնել, մանավանդ մատների արանքները, քրտնախաշից խուսափելու համար:

Մաքուր, փափուկ փաթաթաններն ավելի լավ են պահպանում վոտքերը հարելուց, քան թե կեղտոտ, կոշտացած փաթաթանները:

Յեթե յերթի ժամանակ կոշիկն սկսում է հարել վոտքերը, հարկավոր է հենց առաջին փոքր դադարքում հանել նորից հագնել:

Յեթե վոտքերն արդեն հարվել են, անհրաժեշտ է իսկույն դիմել բուժակին: Ժամանակին փոշի ցանելով կամ հարած տեղի վրա բամբակ դնելով, կարելի յե վոչ միայն հետագայում հարումը սաստկացնելուց խուսափել, այլև բոլորովին վերացնել:

Սմառը դադարքներում ոգտակար է հանել կոշիկները:

Կարմիր բանակայինները, սովորաբար, չեն սիրում զեկուցել հրամատարին վոտքերի աննշան վնասվածքների մասին, այդ մասը բան համարելով, մի բռն, վոր հրամատարին չի հետաքրքրեցնի: Այդ սխալ է:

Հիշել, վոր դու մենակ չես կատարում յերթը, այլ ջոկի, դասակի, վաշտի և այլն կազմում:

Հիշել, վոր յուրաքանչյուր մարտիկ, վոր շարքից դուրս է գալիս, թուլացնում է իր ջոկի, դասակի, վաշտի մարտական հզորությունը:

Ոգնիր քո ընկերներին խնայելու իրենց ուժերը: Գո անձնական որինակով և խորհուրդներով սովորեցրու նրանց յերթային շարժման բոլոր կանոնները:

9. ԻՆՉՊԵՍ ՀԱՐԳԱՐԵԼ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԸ ՅԵՐԹԻՑ ԱՌԱՋ

Հետևակ-մարտիկը յերթում իր վրա կրում է մոտ 32 կգ (2 փութ) հանդերձանք, զինասարք և սպառադիմում:

Միայն այդ բեռան ճիշտ բաշխումը և հանդերձանքի պերագանց հարգարումը հնարավորություն կտան մարտիկին կրել այդ բեռը տանյակ կիրմեոթեր, առանց հոգնելու:

Հագնելով հանդերձանքը, պետք է հետևել, վոր չճնշի շնչառությունը, վոչ մի տեղ չհարի, չծակի, վորպեսզի բահը չխփի վոտքերին և այլն:

Այս կանոնների խախտումը հանդիսանում է յերթում մարտիկների ավելի հոգնածություն հիմնական պատճառներից մեկը:

ՈՐԻՆԱԿՆԵՐ
Մի մարտիկ, հոգնելով իրերի տոպրակը, քաշիկը շատ է ձգել. նա սկսում է դժվարություններ չնչնել: Նրա սիրտը անկանոն է աշխատում:

Նա բոլորից չուտ է հոգնում:

Մի ուրիշ մարտիկ վատ ե կապել դռան և քաշիկը, նրա վրա ամեն ինչ շարժվում է, նրան ամեն տեղ իրերը հարում են:

Որազնացքի վերջում անխուսափելի յե կաշու հարումը մինչև արյունհոսություն և ընդհանուր հոգնածություն:

Յերրորդ մարտիկը վատ ե հարգարել բահը: Ամեն քայլափոխում բահը խմվում է նրա վրաքին: Հարվածն այնքան ել ուժեղ չե և իր վրա ուշադրություն չի դարձնում: Մակայն չե՞վոր մի որազնացքում նա անցնում է 30 հազար քայլ. ուրեմն և ստացվում է 30 հազար հարված, և դրա հետևանքը—հոգնածություն և բարոյալքում:

10. ԻՆՉՊԻՄԻ ԴԱԴԱՐՔՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՈԳՏԱԳՈՐԾԵԼ ԱՅՅ ԴԱԴԱՐՔՆԵՐՆ ՈՒԺԵՐԸ ԵՆԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Յերթում շարժման ամեն 50 րոպեյից հետո 10 րոպե հանգիստ ե արվում—փոքր դադարք, վորպեսզի հնարավորություն արվի հարգարել, ուղղել հանդերձանքը, զինասարքը, վտանամանները հանել նորից հազնել՝ յեթե վատ են փաթաթված փաթաթանները, հոգալ բնական կարիքները:



Նկար 6. Հանգիստ փոքր դադարում

Յեթե վատ ճանապարհ ե և որազնացքն ել 20 կելոմետրից ավելի յե, այն ժամանակ ելի մեկ մեծ դադարք են անում 1½—3 ժամ: Մեծ դադարքը պետք է ուղտադործել ճաշելու, ել ավելի հանգիստ առնելու համար՝ ծախսած ուժերը վերականգնելու նպատակով:

Բացի մեծ ու փոքր դադարքներից. յերթում համախ լինում

են չնախատեսված կանգառումներ շարժման ժամանակ, վորոնք մարտիկները նույնպես կարող են ուղտադործել հանգստի համար:

Կանգ առնելով փոքր դադարքում, հանիր և կողքիդ դիր հրացանդ, կոլովը և ըստ հնարավորության իրերի տոպրակը և մյուս գինասարքը: Արձակիր գոտիդ, ամառը հանիր գլխարկդ: Յեթե տեղանքն ու յեղանակը թույլ են տալիս, նստիր և նույնիսկ պառկիր: Յեթե հողը խոնավ է, պառկիր փոքրիկ վրա, վորպեսզի չմըրսես:

Ամառը թրջիր յերեսդ ու գլուխդ ջրով: Յեթե պահանջվում է, վտանամաններդ հանիր նորից հազիր, ուղղիր փաթաթանները: Յեթե նկատում ես վտաքի հարում, դիմիր բուժակին կամ ինքդ հիվանդ տեղի վրա բամբակ դիր: Հարկավոր ե դեռևս մինչև յերթը սովորել արագ հանել ու հազնել զինասարքը, վորպեսզի վոչ մի վայրկյան չկորցնես հանգստից:

Մեծ դադարքում կանգառման ժամանակ հրացաններից բուրդ են կաղժում, հանում են զինասարքը, վորից հետո, տաք յեղանակին ուղտակար ե հանել կոշիկները և մի 15 րոպե պառկել, վտաքերն այնպես դնել, վորպեսզի գլխից և իրանից բարձր լինեն: Յեթե մոտիկում ջուր կա, լավ ե լվացվել կամ թեկուզ չիել մարմինը թաց սրբիչով և լվալ վտաքերը: Հարկավոր ե մանրազնին նայել վտաքերը և ամբողջ մարմինը և, յեթե կան հարած տեղեր, շանդրոված տեղեր, դիմել բուժակի ոգնություն:

Ճաշելուց հետո հանգստացիր, առանց վոչ մի րոպե կորցնելու ավելորդ շարժումների համար, մանավանդ պարերի համար և այլն: Պարեր կարելի յե կազմակերպել հանգստից հետո ել, յեթե ժամանակ կա:

11. ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ԸՆԿԵՐՈՋԸ ՅԵՐԹՈՒՄ

Վոչ բոլոր մարտիկներն են միատեսակ ուժեղ, վոչ բոլորն են միատեսակ պատրաստված յերթի համար:

Յեթե տեսնում ես ընկերդ հոգնել է, սկսում ե ծանր շնչել, թեթևացրու նրա բեռը. որինակ՝ վերցրու նրա հրացանը, հնարավորություն տուր քիչ հանգստանալու, և նա յետ չի մնա:

Ոգնություն կարիք են զգում առանձնապես զնդացորդները: Թե՛ յերթում և թե՛ մարտում նրանք ավելի ծանր բեռ ունեն, քան մյուս մարտիկները: Ամենից առաջ նրանց ուժերը խնայելու մասին պետք է հոգ տանել: Յեթե հնարավորություն կա զինասարքի

մի մասը դնել սայլի վրա—առաջին հերթին գնդացրորդներ պետք է դնել: Յեթե հնարավորութուն կա սայլ նստել—առաջին տեղը գնդացրորդինն է:

Հողնածուծի մասնում մեծապես ուղնում է յերթի ժամանակ մարտական խնդրի հասկանալը, խմանալ թե ինչի համար է կատարվում յերկար ու դժվար յերթը: Ով այդ չզրկու, պետք է նրան բացատրել:

Գանգատվելը հողնածուծի մասնում են տրամադրություններ և միայն ավելացնում են հողնածուծի մասնում:

Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է իր անձնական սրինակով վողեորի ավելի թույլերին և թույլ չտա, վոր բարոյալքվեն, վորը նպատում է ուժերի ջլամամանը:

12. ԻՆՉՊԵՍ ԶՈՒՐ ԽՄԵԼ ՅԵՐԹՈՒՄ

Հիշի՛ր կանոնը. վորքան շատ ջուր խմես յերթում, այնքան շատ կծարավես, այնքան շատ կքրտնես, այնքան ավելի կհոգնես:

Շող որին, յերթից առաջ, ճաշելուց հետո կուշտ ջուր խմիր: Մի կտոր հաց կեր լավ աղ արած վրան (մինչև 3 գրամ մի մարդու համար). դրանից հետո ջուր խմիր մինչև ծարավը կուտրելը:

Յերթի դուրս գալուց առաջ լավ լվացիր ջրամանը և ջուր ցրու, կամ ավելի լավ է թեյ ցրու:

Շարժման ժամանակ յերթեք ջուր չխմես: Ընթացքի առաջին յերկու ժամում ջուր մի խմիր, նույնպես և դադարքներում:

Յեթե շարժման ժամանակ բերանդ չորանում է, շնչիր քթածակերով և, ծամելու շարժումներ կատարելով, լորձունք առաջ բեր բերանումդ: Յեթե այդ չի ոգնում, ուղտակար է ջրամանից վերցնել 2—3 կուճ ջուր և ողողել բերանը և կոկորդը:

Շարժման յերթորդ ժամի վերջում, փոքր դադարքում, հանգրտանալուց ու քրտինքը չորանալուց հետո, կարելի յե ջուր խմել 1—2 բաժակ փոքր կուճերով, աշխատելով յերկար պահել բերանում:

Մեծ դադարք հասնելով, նույնպես պետք է սկզբում ողողել բերանը և, քառորդ ժամ հանգրտանալուց հետո միայն, կարելի յե յերկու բաժակ ջուր խմել (վոչ ավելի):

Շող յեղանակին շարժման ժամանակ, մեծ դադարքում, նույնպես յերթից առաջ, յուրաքանչյուր մարտիկ պետք է ուտի վոչ

պակաս 10 գրամ (մի թեյի դդալ) այ՛ հացի վրա շաղ տալով: Ուտելուց հետո, այլև մեծ դադարքից հետոնալով, կարելի յե նորից ջուր խմել մինչև ծարավը կուտրելը:

Մեծ դադարքում ջրամանը նորից պետք է վողողել և ցնել թարմ ջուր:

Առաջին փոքր դադարքում, ճաշից հանգստից հետո ջուր չդետք է խմել: Յերկրորդ և յերրորդ փոքր դադարքներում կրկին կարելի յե խմել 1—2 բաժակ ջուր:

Գիշերոթ գալով, նորից վողողի՛ր բերանդ, մի 15 բույս հանգրտացիր և ապա խմիր 2 բաժակ ջուր. ընթրիքից հետո խմիր մինչև ծարավը կուտրելը:

Առանց հրամատարի թույլտվության արգելվում է ողտվել ջրհորների և առուների ջրից, վորոնք հանդիպում են ճանապարհին: Նրանք կարող են թունավորված լինել:

Վերոհիշյալ կանոնների պահպանումը կոչվում է խմելու ռեժիմ, վորը չող ժամանակ սրազնացքի յուրաքանչյուր ետադում սահմանվում է հրամատարի կողմից:

Կարմիր բանակայինի պարտականությունն է խստորեն պահպանել ցույց տրված խմելու ռեժիմը: Ոգնիր այդ բանում ընկերներիդ քո անձնական սրինակով և խոսքով:

Ամբողջ ջուր վորպես մի մարդ պետք է պահպանի խմելու ռեժիմը:

13. ԻՆՉ ՊԵՏԳ Ե ԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ ՅԵՐԹԻ ԴՈՒՐՄ ԳԱՆՈՒՅ ԱՌԱՋ ՅԵՎ ՅԵՐԹԻՅ ՀԵՏՈ

Յերթի դուրս գալուց առաջ, այլև մեծ դադարքը վերջանալուց հետո և գիշերոթ գալով, յուրաքանչյուր կարմիր բանակային պարտավոր է.

- 1) Ստուգել հրացանի (գնդացրի և մյուս զենքի) ու հակադադի սարքինությունը:
- 2) Ստուգել փամփուշտների ու նոնակների կոմպլեկտի և մյուս կրելի մարտամթերքի առկայությունը: Գնդացրորդները պետք է ջուր վերցնեն գնդացրերի համար:
- 3) Ստուգել գինասարքի և կոլոլի իրերի առկայությունն ու սարքինությունը: Չմոտանաս վերցնել ասեղ և թել:
- 4) Մտածիր, չե՞ս մոտացել արդյոք վորևէ բան (բահը, կողմ-

նացուցցը, փամփշտակալը) և լցրել ե՞ս արդյոք ջրամանիդ մեջ ջուր:

5) Հիշիր, թե ինչպիսի ազդանշանով ե տեղեկացվում ողային և քիմիական տազնապը և թե ինչ պետք է անել այդ ազդանշաններին համաձայն:

6) Յերթի ժամանակ յուրաքանչյուր կարմիր բանակային նախ և առաջ պետք է հոգ տանի իր դեմքի և հակազպի խնայման մասին:

Պահպանիր հատիկն ու նշանոցը, վորպեսզի չծուլեն և չջարգվեն: Պահպանիր փողանցքը կեղտոտելուց, իսկ ամբողջ հրացանն՝ անձրևներից, ավազից ու փոշուց:

Գիշերոթ դալով հարկավոր ե սրբել զենքը և յուղել այն:

Հսկիր, վորպեսզի քո ջոկի բոլոր ընկերները կատարեն այս պահանջները:

14. ԻՆՁ ԿԱՆՈՆՆԵՐ ՊԵՏՔ Ե ՊԱՀՊԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՑԻՆԸ ՅԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ.

(Յերթի կարգապահություն).

Միայն գերազանց կարգը զորքերի շարժման ժամանակ հնարավորություն և ապրիս անցնելու այն հեռավորությունները, վորոնք ցույց են տրվում կանոնադրերով (25—30 կիլոմետր) և ընդ ամին առանց ջրատելու ուժերը: Գրա համար անհրաժեշտ ե պահպանել շարժման հետևյալ կանոնները.

1) Շարժվել ճանապարհի աջ կողմով. հրամատարի թույլատվությամբ կարելի յե շարժվել ճանապարհի ամբողջ լայնությունում կամ արահետներով, ճանապարհի կողմերով: Յեթե զորմասը շարժման ժամանակ զբաղեցրել ե ամբողջ ճանապարհը, այն ժամանակ յետևից յեկողներին կամ հանդիպողներին ճանապարհ տալու համար հրաման ե տրվում «ընդունիր դեպի աջ կամ ձախ»: Այդ հրամանով, վորը տրվում ե զորասյունով, բոլորն արագորեն բնդունում են դեպի ցույց աված կողմը, փոխանցելով միաժամանակ հրամանը—մյուսներին:

Առաջից գնացողներին կանգառման դեպքում, հարկավոր ե փոքրացնել քայլը և կանգ առնել միայն մոտենալով առջևում

կանգնածներին կլալ մոտիկից. շարժման սկզբից նորից պետք ե վերցնել սահմանված հեռավորությունը:

Յեթե պատահաբար յետ ես մնում կամ յետ ե մնացել ամբողջ ջոկը, դասակը, այն ժամանակ չպետք ե վազել, այլ միայն պետք արագացնել և լայնացնել քայլերը ու գրավել իր տեղը:

Անտառով շարժման ժամանակ և ծառերի մոտով անցնելիս պետք ե ճանապարհի սովերոտ կողմով անցնել, վորպեսզի ծածկված մնաս թշնամու ողային դիտողությունից: Նույն այդ նպատակով, կանգառումների ժամանակ հարկավոր ե լավ քողարկվել:

2) Շարքից դուրս չըլալ առանց հրամատարի թույլատվության:

3) Գիշերը և մանավանդ հողնեցուցիչ որակնացքներից հետո, բոլոր կարմիր բանակայինները պարտավոր են սլաքաբել ընի դեմ: Արգելվում ե գիշերը դադարքների ժամանակ մեկն ու մեկին մի կողմը քաշվել իր ջոկից (կհեռանաս՝ կքնես և յետ կմնաս):

Շարքի կանգնելով ստուգել, արդյոք քո ջոկի բոլոր ընկերները են կանգնել շարքի թե վոչ, յեթե վորեե մեկը բացակայում ե, անպայման դեկուցիր այդ մասին ջոկի հրամատարին:

4) Շապի արձակած վզնոցը և քշած թեկնոցներն ողնում են զովացնելու մարմինը և պահպանելու ուժերը շողին. միայն չպետք ե թեկերն այնպես պինդ քշտել, վորպեսզի չճնշեն արյան շրջանառությունը:

Յեթե զգում ես վոր շոգ ե, դիմիր հրամատարին և թույլատվություն խնդիր վզնոցը արձակելու և թեերդ քշտելու:

Յերթի ժամանակ պետք ե շնչել քթով, փակ բերանով: Այդ բանը նվազեցնում ե բերանի չորությունը և ուշ ես ծարավություն զգում, իսկ ցուրտ յեղանակին պահպանում ե մրսելուց: Շարժման ժամանակ փնտաղար և ծխել և արգելվում ե: Կարելի յե ծխել դադարքներում միայն հրամատարի թույլատվությամբ: Գիշերը ծխելն արգելվում ե:

«Ազատ» հրամանով կարելի յե քայլել առանց պահպանելու վորքը և յեթե հրամատարը չի արգելել, կարելի յե յերգիլ և խոսակցել:

5) Ողնել ճանապարհին սայլերին և մանավանդ հրետանուն ու ավամոթիկներին:

Յերթի ժամանակ ամենից հաճախ խափանումներ են լինում դուժակի սայլերի կանգառման պատճառով: Կտրված կամ փչա-

ցած սայլը պետք է ճանապարհի մի կողմն անցնել, տեղ տալով մյուսներին, վորպետի շառաղանա ալապետ կոչված խցանում:

Ոգնիր ցելից հանելու թաղված սայլը կամ ճանապարհից հեռացանելու ջարդված սայլերը, առանց սղասելու դրա համար հրամատարի հատուկ հրամանին այնտեղ, վորտեղ այդ հրամատարը բացակայում է:

Առանձնապես հարկավոր ե ոգնության հասնել հանգստի ժամանակ դժվար ճանապարհներով անցնող հրետանուն, ավտոմոբիլներին, խոհանոցներին:

Յերթային շարժման կանոնների պահպանումը կոչվում է յերթի կարգապահութուն: Յուրաքանչյուր կարմիր բանակայինի պարապահանութունն է ինքը հետևի յերթի կանոնների պահպանմանը և մանավանդ հանդերձանքի, վորտամանների, ղինասարքի և ջուր խմելու կանոնավորման ու հարթարման տեսակետից և ոգնել ջոկի հրամատարին հոկելու յերթի կարգապահության պահպանմանն ամբողջ ջոկի կազմի կողմից:

Փոխադարձ ոգնությունն ու բուքտիրը յետ մնացողներին, պետք է լայն դործադրություն գտնեն յերթի ժամանակ:

15. ԻՆՉՊԵՍ ԿՈՎԵԼ ԷԱԿԱՌԱԿՈՐԳԻ ԷԱՆԿԱՐԾԱԿԻ ԷԱՐՉԱԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՅԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ.

Յերթում ընթացող դորքերին հակառակորդի հանկարծակի հարձակումներից ապահովելու համար ուղարկվում է յերթային պահպանութուն, վորի հիմնական խնդիրն է կասեցնել հակառակորդին այնքան ժամանակ, մինչև յերթային զորասյունը կապտրաստվի մարտի համար:

Ոտևուն հնարավոր է նաև այն դեպքերը, յերբ յերթային պահպանութունը չի կարող կասեցնել հակառակորդին և ժամանակ չի ունենա նույնիսկ զգուշացնելու յերթային զորասյունին թոնամու հարստվելու մասին և վերջինս կողմից կհաջողվի «հանկարծակի հարձակումը»:

Հանկարծակի հարձակումն ամենից ավելի հավանական է սպասել՝ ա) թշնամու ավիացիայի, բ) հեծելազորի, գ) մոտորացված և մեքենայացված միավորութունների կողմից, վորոնք կազմված են տանկետաններից, տանկերից, զրահապատներից և հետևակից, վորը նստած է լինում ավտոմոբիլի վրա:

Հանկարծակի հարձակումները սարսափելի յեն միայն սակա-

վակայուն շվարժված հեռակի համար: Այդ հարձակումները սարսափելի չեն այն դորքերի համար, վորոնց յուրաքանչյուր կարմիր բանակայինն առանձին վերցրած և զորամասն ամբողջությամբ, սովորել են թե ինչպես պետք է կռվել հանկարծակի հարձակումների դեմ:

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԱՎԻԱՑԻԱՑԻ ԷԱՐՉԱԿՈՒՄՆԵՐԻ ԳՆԻՄՈՒՄ ԵՄԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ

Հակառակորդի ավիացիան կարող է զորքերի վրա ուժերը նետել, գնդակոծել գնդացրային կրակով և շաղ տալ կայուն թունավոր նյութեր (ԿԹՆ): Թույլ վարժված զորքերը, վորոնք չգիտեն ավիացիայից պաշտպանվելու ձևերը, կարող են տասն անգամ ավելի կորուստներ տալ, քան այն զորքերը, վորոնք պատրաստ են զիմավորելու սղային թշնամուն:

Հակառակորդի ավիացիայի դեմ կռվելու լավագույն յեղանակը քողարկումն է: Յեթե թշնամին չհայտարերի զորքերի շարժումը, նա չի կարող նաև հարձակվել նրանց վրա:

Բաց տեղամասերը, վորտեղ դժվար է քողարկվել, զորքերն անցնում են ճակատով ու խորությամբ ապակենտրոնացված ձևով, այնպես, վորդետեղի հակառակորդի մեկ ուժերը չկարողանա հարվածել ամբողջ դասակին:

Թշնամու սավառնակները վոչնչացնելու համար կրակ են բաց անում հրետանին, գեներթային գնդացրերը, ջոկերի հրաձիգները, վորոնք հատկապես նշանակված են այդպիսի հրաձգության համար, և սնայպերները:

Ռումբերից, գնդակներից ու դաղերից կորուստները նվազեցնելու համար, յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է պահպանի շարժման կարգը և քողարկման կանոնները, վորոնք ցույց են տրված հրամատարի կողմից. հարձակման դեպքում չպետք է կուտակվել և փախչելու փորձ անել: Սավառնակների հարձակումը տեղում է մեկ րոպեից ել քիչ, փախչել չես կարող, իսկ փախչող խումբը շատ ավելի կորուստներ է տալիս, քան կազապահ զորքերը:

Ռումբերից պաշտպանվելու համար ավելի լավ է պառկել, ողտադործելով փոսերը, խրամները, և այլն, բեկորներից ծածկվելու համար:

Կայուն թն-ից պաշտպանվելու համար, ծածկվիր հակախորթ-տային թիկնոցով, իսկ յեթե այդպիսին չկա, յերթային վրանի քա-

Թանով և հազիր հակազար: Յեթե այդ վրանի վրա ԹՆ շաղ տված լինի, հանիր և նետիր մի կողմը (հատուկ խումբը կվերցնի այն), իսկ ինքզ մի կողմը դնա հրամատարի ցուցումով, վորանդ կայուն ԹՆ շաղ տված չի: Յեթե ճանապարհը շաղ են տվել խորտով, հա-
 Գիր «գուլպաները»: Պետք է հիշել, վոր լավ յուզած կոշիկները պաշտպանում են իպրիտից նաև ստանց գուլպաների:

ԻՆՉՊԵՍ ԿՈՎԵԼ ՀԵԾԵԼԱԶՈՐԻ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԴԵՄ:

Յուրաքանչյուր կարմիր բանակային չպետք է մոռանա, վոր գնդացրերի, հրացանների և ձեռքի նոնակների կրակը հանդիսա-
 նում է անհաղթահարելի մի արգելք դրոհող հեծելազորի համար:




Նկ. 7. Մի տասնյակ ձիավորներ հեշտուրքյամբ կարող են կոտորել հարյուրավոր փախչող հրաձիգների:

«Հեծելազորն աջից (ձախից, քիկումից)» հրամանով կամ սպրանչանով գնդացրերն ու հրաձիգներն արագորեն ընդունում են այն կարգն ու դրուժյունը, վորոնք հարմար են հրաձգության հա-
 մար և կրակ են բաց անում՝ գնդացրերը 2000 մետրից, իսկ հրա-
 ձիգները 500—700 մետրից 4 նշանոցով, նշան բռնելով ձիու գլու-
 ին:

Մի տասնյակ ձիավորներ հեշտուրքյամբ կարող են կոտորել հարյուրավոր փախչող հրաձիգների, յեթե միայն այդ հրաձիգ-
 ներից յուրաքանչյուրն իր գլուխը չի կորցնի և իր դիպուկի ձիգե-

րով կխիի ձիավորներին, սկսած թեկուզ 600 մետրից: Այդ 600
 մետրը քշելով անցնելու համար ձիավորից պահանջվում է մի բո-
 պե, այդ ժամանակում յուրաքանչյուր հրաձիգ ժամանակ կունե-
 նա արձակելու սասը գնդակ, իսկ գնդացրը 500 գնդակ, այդպիսի
 դեպքում, նույնիսկ վատ հրաձիգը վրիպում չի տա այնպիսի թի-
 րախի վրա արձակելիս, ինչպիսին ձիավորն է: Կարելի չե հարյուր
 գնդակ արձակել մեկ նկատելի ձիավորի վրա և չհարվածել նրան



Նկ. 8. Հագարավոր հեծյակներ չեն կարող հաղթահարել անասան
 նշանաձիգների մի հարյուրակ:

և միևնույն ժամանակ հարյուրավոր քիչ նկատելի ձիավորներ կա-
 րող են չստանալ վոչ մի գնդակ. այսպիսի դրուժյուն չստեղծելու
 համար հետևիր հրամատարների ցուցումների կատարմանը, կրա-
 կը ճակատով բաշխելու մասին:

Հիշիր նույնպես, վոր բավական է միայն, վոր յուրաքանչյուր
 կարմիր բանակային սպանի թեկուզ հակառակորդի յերկու ձիա-
 վորի և հակառակորդի հեծելազորի վոչ մի գրոհ հաջողություն
 ունենալ չի կարող:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԳ Ե ԿՈՎԵԼ ԶՐԱՀԱՄԱՍԵՐԻ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԴԵՄ:

Ժամանակակից բանակներն ունեն խոշոր թվով զրահապա-
 ներ, տանկետիաներ և տանկեր: Այդ մարտական մեքենաներից
 ավտոմոբիլների վրա նստեցրած հետևակի հետ միասին կազմում
 են ամբողջ միավորություններ:

Այդ բոլոր գրահամեքենաների հիմնական ուժը նրանց արագութեան մեջ է և, բացի դրանից, նրանք բոլորն ունեն գրահ, վորը պաշտպանում է հրացանային և զնդացրային զնդակներից: Չրահապատի, տանկետիայի և տանկի հիմնական թուլութեանը վատ տեսանելիութեանն է և ուսմբերից, ականներից և նույնիսկ ձեռքի նոնակներից խոցելիութեանն է. ավտոմոբիլը խոցելի յե նույնիսկ սովորական հրացանային զնդակով:

Տանկից, տանկետիայից և զրահապատից զնդացրերի կրակը 400 մետրից հեռու դործոն չի, սակայն նույնիսկ 400 մետրից ավելի մտահեռավորութեանները վրա նրանց կրակի ուժը շատ ավելի պակաս է, քան վերերկրյա զնդացրերի ուժն է, իսկ 20 մետրից պակաս հեռավորութեաններից, նրանք բոլորովին չեն կարող կրակել (մեռյալ տարածութեան): Տանկի, տանկետիայի և զրահապատի ամենից ավելի գործոն կրակով կարելի յե խփել փախչող հետեակին:

Այդ բանն իմանալով, յուրաքանչյուր կարմիր բանակային թշնամու մտտմեքենամասերի դեմ կովելու համար յերթում պետք է հիշել հետևյալը.

1) զրահապատները, տանկետիաները, տանկերը շարժվում են մի ժամում մինչև 30 կիրոմետր արագութեամբ և նրանցից չի կարելի փախչել նույնիսկ ձի հեծած:

3) տանկետիաների, տանկերի և զրահապատների հայննելու դեպքում նրանց վրա կրակ կբանան մեր հրետանին և զնդացրերը զրահահար զնդակներով:

Չրահապատների կրակից կորուստները կըճատելու լավագույն ձևն է պռոկել և ալգալիտով փոքրացնել նշանն ու նրա տեսանելիութեանը թշնամու համար:

Յեթե մտտիկում զրահամասերի համար արդելք կա (ծառեր, խրամներ և այլն), այն ժամանակ ոգտակար է թաղնվելով նրա մեջ, պատրաստվել հակահարվածի համար: Յեթե մտտիկում ծածկարան չկա, հարմարվիր տեղանքին այնպես, վորպեսզի թեզ տաննետել ձեռքի նոնակների կապոցը և կրակ բանալ դիտածեղքերի վրա:

Յեթե զրահամասերի հետ շարժվում է նաև հետևակը, նստեցնակ հրաձիգներն ու զնդացրորդներն առաջին հերթին պետք է կրակ փարեն ավտոմոբիլների և հետևակի վրա:

4) Թշնամու մտտմեքենայի կական մասերը սարափելի յեն միայն այն մարդկանց համար, վորոնք խուճապի յեն յենթարկվում: Կայուն հետևակը միշտ կարող է յեա մղել զրահավոր հակառակորդի հարձակումը:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ԴԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՐԹՈՒՄ

16. ԶՈՐԹԵՐՆ ԻՆԶՊԵՍ ԵՆ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ ՅԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ

Հետևակի մի գումարտակ յերթային զորայունի մեջ, ընկնելով դարանից զնդացրի կրակի տակ, մի բուպեյում կարող է կորցնել մի քանի հարյուր սպանվածներ և վիրավորներ: Սակայն նույն գումարտակը, վորը ժամանակին նախազգուշացված է հակառակորդի մտտիկութեան մասին, ժամանակ կունենա մարտակարգ ընդունելու և թշնամին, վորը դարան է կազմակերպել, կվոչընչացվի: Ժամանակին հայտարարել դարանները, իսկ խոչորոսների հարձակման դեպքում՝ կասեցնել նրանց, նպատակ ունենալով ժամանակ տալ յերթային զորայունին մարտակարգ ընդունելու, — այդ կազմում է յերթային պահպանութեան պարտականութեանը:

Գումարտակը յերթում պահպանվում է յերթային ուղեկարներով մեկ հրաձգային դասակի ուժով, վորոնք ուղարկվում են դեպի առաջ կամ կողմերը մտտավորապես մեկ կիրոմետրի վրա. ուղեկարներն իրենցից ուղարկում են դետքեր մինչև մեկ ջոկ թով զեպի առաջ կամ դեպի մի կողմը 400—500 մետր հեռավորութեան վրա: պահպանող զորամասերի և շարժվող գործերի զորայունի միջև կապի համար կիրառվում է կապավորների շղթա:

17. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ԽԵՒԻՐՆԵՐԸ ՅԵՐԹԱՅԻՆ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Դետքի խնդիրն է՝ հայտարարել թշնամուն և թույլ շտալ հանկարծակի զնդակոծում ուղեկալի վրա հրացանների ու ձեռքի գրնդացրերի գործոն կրակով: Ուղեկալի խնդիրն է՝ պահպանել պահպանվող գործերին հանկարծակի զնդակոծումից հաստոցավոր գրնդացրերի գործոն կրակով և ժամանակ տալ նրանից հետո յեկող գումարտակին անցնելու յերթային կարգից մարտակարգի: Շըղ-

Թայի խնդիրն և կանոնավորել պահպանող դորամասերի շարժումը և թույլ չտալ, վոր նրանք կտրվեն պահպանվող գործերից կամ վերջինները չզան կիտվեն պահպանութան վրա:

Կարմիր բանակայինի պարտականութունները յերթային ուղեկալում այնքան ել բարդ չեն և հիմնականում նրանում են, վոր նա կարողանա արագորեն շարժվել առանց ճանապարհների, իսկ թշնամու հետ ընդհարման դեպքում կայուն կերպով մարտնչի, հարվածելով նրան կրակով, իսկ վորտեղ հարկավոր լինի, նաև սվինով:

18. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՐԹԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՏԲՈՒՄ

Յերթի ժամանակ նշանակվելով դետքում, հիշիր, վոր քո աշալը շուրջ յուրեց և կախված այն գործերի անվտանգութունը, վորոնք յերթ են կատարում և քո շարժման արագութունից և կախված ամբողջ յերթասյունի շարժման արագութունը:

Նշանակվելով դետքի մեջ, յուրացրու քո խնդիրը, պատասխանելով հետևյալ հարցերին.

- 1) Վ՞որտեղից ե սպասվում հակառակորդը:
- 2) Վ՞որտեղ են քո գործերը:
- 3) Ի՞նչ ուղութան վրա (արեղակով, կողմնացույցով կամ անզանքի համեմատ) դու պետք ե շարժվես:
- 4) Ի՞նչ պիտի պայմանական նշաններով պետք ե զգուշացնես ուղեկալին թշնամու հետևակի խոչոր ուժերի հայտնվելու մասին, նրա հեծելազորի և մանավանդ զբահապատ մասերի ու ավտոմոբիլների հայտնվելու մասին:

5) Ի՞նչ անել հակառակորդի հետևակի, հեծելազորի և զրա համասերի խոչոր ուժերի հայտնվելու դեպքում:

Յեթե դու չես կարող այս հարցերից վորեն մեկին պատասխանել, նշանակում ե դու չես յուրացրել քո խնդիրը և պետք ե զիմե՞ գտասկի կամ ջոկի հրամատարին, վոր քեզ բացատրեն: Առանց յուրացնելու դետքի խնդիրը, դու չես կարող վոչ միայն փոխարինել դետքի պետին՝ յերբ նա շարքից դուրս ե գալիս, այլև չես կարող նույնիսկ սզնել նրան աշխատանքի ժամանակ:

19. ԻՆՉՊԵՍ Ե ԴԵՏԲԸ ԶՆՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆՏԱՌԱԿՆԵՐԸ, ԶՈՐԱԿՆԵՐԸ, ԱԳԱՐԱԿՆԵՐԸ, ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ՆԱ ԱՆՑՆՈՒՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՎ

Հակառակորդն առանձին անտառակները, ագարակները, ձորակները, գյուղերը կարող ե ողտադործել իր հետախուզութունը ծածկելու համար և վոր ամենից կարևորն է՝ դարաններ կառուցելու համար յերթ կատարող գործերին հանկարծակի զնդակոծելու նպատակով: Առանձնապես վտանգավոր են այն վայրերը, վորտեղ կարող ե թագնվել հեծելազորի, տանկերի և տանկետկանների դարանը: Դետքերի և ուղեկալների պարտականութունն ե զննել իր շարժման ճանապարհին յեղած բոլոր կասկածելի տեղերը, նաև հարևան դետքերի և ուղեկալների միջև ընկած տեղերը: Տեղական կասկածելի առարկաները զննելու համար, վորոնք ուղեկալների և դետքերի շարժումից հետո դասավորված են մի կողմում, ուղեկալի պետի կարգադրությամբ ուղարկվում են հեծելազուց և հեծանվորդներ:

Յեթե դու շարժվում ես դետքի կազմում և առաջադրութունն ես ստացել զննել ձորակը կամ ագարակի առանձին շենքը կամ անտառակը, ապա զննիր ուշադրությամբ, թույլ մի տա, վոր հակառակորդն այնտեղ թագնված մնա, չմնա առանց հայտարարվելու, վորը կարող ե խորտակել հարյուրավոր քո ընկերներին, վորոնք ընթանում են զորասյունում և վորոնք հույս են դրել քո աշալըրջության վրա:

20. ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ԳՈՐԾԻ ԴԵՏԲԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ ՀԱՆԴԻՊԵԼԻՍ

Հանդիպելով հակառակորդի անհատ մարդկանց, չբնապատիր նրանց քո ընկերների հետ միասին և դերի վերցրու: Դրանով դու կարող ես ողնել մեր հետախուզությանը՝ իմանալու թե հակառակորդն ի՞նչ զորամասեր ունի մեր առջևում, վո՞րտեղ են նրանց և ի՞նչ մտադրություն ունեն:

Հայտարերելով հակառակորդի դետքը կամ պահպանությունը, զգուշացրու դետքին պետի պայմանական նշանով: Վերջինս կզուշացնի իր յետևից ընթացող ուղեկալին, իսկ ինքը դետքը պետք ե առաջ շարժվի դիտողության և հրաձգության համար հարմար կետ գրավելու, հակառակորդին ստիպել առաջ կրակ բա-

նալու համար և այդպիսով հայտարարելու նրա ուժերն ու մտա-
դրությունները:

Յեթե հակառակորդի ուժերը գերազանցում են և դեռ քը չի
կարող այլևս առաջ շարժվել, այն ժամանակ նա կանդ է առնում,
հարմարվում է տեղանքին և պաշտպանվում է մինչև կմոտենա ու-
ղեկալը:

Յեթե հակառակորդը հարձակում է գործում վաշտից ավելի
ուժերով, դեռ քերն ու ուղեկալը կարող են դանդաղ յետ քաշվել,
համառորեն կառչելով յուրաքանչյուր թիվից, յուրաքանչյուր փո-
սից ու հարվածելով թշնամուն իրենց դիպուկ կրակով:

Հեծելազորի խոշոր ուժեր հայտարարելով և մանավանդ տան-
կերի, դրահասպատները ու ավտոմոբիլների վրա հետևակի հայտ-
նելու դեպքում դեռ անմիջապես դուռ շարժում է ուղեկալին
պայմանական նշանով, իսկ յեթե ուղեկալը նշանը չի տեսնում,
իսկ թշնամին արագ մոտենում է, այն ժամանակ, նրա ուշադրու-
թյունն է հրավիրում հրաձգութայմբ և ձեռքը նոճակի պայթյու-
նով:

21. ԻՆՁՊԵՍ Ե ԳՈՐԾՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԸ
ԿԱՊԻ ՇՂԹԱՅՈՒՄ

Նշանակվելով կապի շղթայի մեջ, լավ յուրացրու քո հրամա-
տարի հրամանը, գրի առ քեզ մոտ հիշելու համար.

1) Ի՞նչ հեռավորութայն վրա (արանքով) ընթանալ զորքերի
առջևից և յետևից ընթացողից կամ կապավորներից.

2) Ի՞նչ աղբանշանով պետք է կանգնեցնել կամ առաջ շարժել
առջևից և յետևից ընթացող զորքերին կամ կապավորներին:

3) Ի՞նչ պայմանական նշան է սահմանված յետևից ընթացող
զորքերին դուռ շարժելու համար պահպանութայն՝ հակառակորդի
հետ հանդիպելու մասին:

Շարժվելով կապի շղթայում, ուշադրութայմբ հետևիր առջև-
ից դնացողներին, յետ մի մնա և մի կորցնիր տեսողութայնից յե-
տևից ընթացողին:

Յեթե առջևից ընթացող պահպանութայնը կամ կապավորը
կանդ է առնում, իսկույն կանդ առ և՛ ինքք և՛ համապատասխան
աղբանշան տուր յետևից ընթացող կապավորին:

Յեթե յետևից ընթացող զորքերը կամ կապավորը կանդ է առ-
նում, դուռ շարժու այդ մասին քո առջևում ընթացող կապավորնե-
րին կամ ինքք կանդ առ:

Ճանապարհի ոլորաններում, յաջմերուկներում շուռ արի առ-
ջևից ընթացող պահպանութայն կամ կապավորների յետևից և հե-
տևիք, վոր յետևից ընթացող կապավորները նկատեն, վոր դու-
ռու ես յեկել, և դալիս են քո յետևից:

Յեթե յետևից ընթացող կապավորները կարվել են, դնում են
վոջ այն ճանապարհով, քո պարտականութայնն է անմիջապես
հասնել նրանց և ցույց տալ ճիշտ ճանապարհը, վորից հետո կըր-
կին պետք է դրավես քո տեղը:

Յետևից կամ առջևից ընթացող կապավորների տված պայմա-
նական աղբանշաններն ինքք կրկնիր, հակելով, վոր քո աղբանշանն
ընդունողները ճիշտ կրկնեն:

Յեթե սխալ ես նկատում, միջոցներ ձեռք առ անմիջապես այդ
սխալը վերացնելու:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

22. ՎՈՐՈՆԻՔ ԵՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Պաշտպանութայն նպատակն է գնդացրերի ու հրացանների
կրակով կորուստներ հասցնել հակառակորդին, թուլացնել նրան,
իսկ հետո, անցնելով հակադրոհի, ջախջախել նրան սվինով:

Գտնվելով կրակային խնդիր ունեցող ջոկի կազմում, հիշիր քո
հետևյալ պարտականութայնները.

1) ջոկի հրամատարի ցուցման համաձայն ընտրիր քեզ համար
հրաձգութայն տեղ, հենարան կառուցիր, փոքրիկ խրամատ փորիր
և քողարկիր խրամատն ու քեզ:

2) Վորոշիր առաջ ընկած տեղանքում մինչև ամենից նկատելի
առարկաները յեղած հեռավորութայնները և նշումներ արա հիշու-
ղութայն համար: Հակառակորդի այդ առարկաների մոտ հայտ-
նելու դեպքում դու կարող ես իմանալ թե ինչ նշանոց պետք է
դնել (իսկ գնդացրողները համար նաև ուղղան):

3) Քո փոքրիկ խրամատում հարմարութայն ստեղծիր գիշե-
րային հրաձգութայն համար. դրա համար պետք է հրացանը (գլն-
դացրը) նշան դնել այն ուղղութայն վրա, վորտեղից ամենից
հավանական է հակառակորդի հայտնվելը: Թե վորոտեղից է սպառ-
վում հակառակորդը և թե ո՞ւր նշան դնել հրացանը, այդ քեզ ցույց

կտա ջոկի հրամատարը: Յեթե չես հասկացել կամ չես լսել հրամատարի ցուցումները, անպայման կրկին հարցրու:

4) Ձոկի հրամատարի ցուցման համաձայն ընտրվի քեզ համար պահունի դերք, յերբ անհրաժեշտ կլինի մի այլ ուղղութեան վրա կրակել, հարմարեցրու այդ դերքը հրաձգութեան համար, քողարկիբ այն և մտածիր թե կարիք յեղած դեպքում ինչպես ե լավ անցնել այդ դերքը, առանց հայտարարելու քեզ:

5) Հիշիր քիմիական և ողային տազնապի աղբանշանները և ինչ պետք ե անել այդ աղբանշանների համաձայն: Յեթե դու չես լսել կամ չես հասկացել թե ինչ աղբանշաններ ե սահմանել հրամատարը, անպայման կրկին հարցրու նրան:

6) Հետևիր քո հրամատարին, նրա հրամաններին ու նշաններին:

Հետևիր ձեռքի գնդացրին և պատրաստ յեղիր ամեն բոպե փոխարինելու շարքից դուրս յեկած հրամատարին կամ գնդացրի նշանառուին:

7) Յեթե քեզ փամփշտակիր են նշանակում, միշտ իմացիր թե վորտեղ ե գտնվում դասակի փամփշտակայանը, և նշիր դեպի այդ կայանը տանող հակառակորդի կրակից ծածկված ուղին:

Յեթե ջոկի հրամատարը կամ գնդացրի նշանառուն փամփուշտներ են պահանջում, տար անմիջապես փամփուշտներ, վորքան հնարավոր ե ավելի և արագ:

Սովորիր լցնել գնդացրային պահեստարաններն ու ժապավենները:

23. ՎՈՐՈՆՔ ԵՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԿԱԳՐՈՋԻ ԺԱՄԱՆԱԿ

Գտնվելով ջոկի կազմում, վորը նշանակվել ե հակազրոհի համար (դասակի կազմում կամ յերկրորդ շարանի վաշտի կազմում), հիշիր քո հետևյալ պարտականութունները.

1) ջոկի հրամատարի ցուցման համաձայն ընտրվի քեզ համար առանձին տեղ կամ ամբողջ ջոկի հետ միասին և խրամատ փորվի այնպես, վորպեսզի պատահական գնդակները կամ թշնամու շրայաները քեզ չհասնի:

2) Ձոկի հրամատարի ցուցման համաձայն ընտրվի քեզ համար դերք, անհրաժեշտ դեպքում կրակելու համար և առաջուց խրամատ փորվի և քողարկիբ այն:

3) Հակազրոհին սպասելու ժամանակ լավ գննիր շարժման ճանապարհը, վոր նշված ե լինում ջոկի հրամատարի կողմից, և վորտեղ թե ինչպես լավ ե այդ ճանապարհով շարժվել հակառակորդի կրակի տակ և վորտեղ կարելի յե ծածկարան ընտրել շունչ առնելու կանգառման համար:

24. ԻՆՉՊԵՍ ԴԻՐՔ ԸՆՏՐԵԼ ՅԵՎ ԽՐԱՄԱՏՆԵՐ ՓՈՐԵԼ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Կարմիր բանակայինը պաշտպանութեան ժամանակ պետք ե գործի ջոկի կազմում: Դերքի ընտրութեան, խրամատներ կառուցելու և քողարկման վերաբերյալ կարգադրութունները տալիս ե ջոկի հրամատարը:

Սակայն մարտում յուրաքանչյուր կարմիր բանակային պետք ե պատրաստ լինի փոխարինելու շարքից դուրս յեկած հրամատարին: Բացի դրանից, կատարելով խրամատներ կառուցելու և քողարկման վերաբերյալ հրամատարի հրամանները, կարմիր բանակայինը պետք ե իր աշխատանքը տանի այնպես, վորպեսզի կարողանա ոգնել իր հրամատարին, և վոչ թե խանդարի նրա մտադրութունների կատարմանը իր անկարող գործողութուններով: Իսկ դրա համար յուրաքանչյուր կարմիր բանակային պետք ե հասկանա թե ինչպես պետք ե տեղ ընտրել խրամատի համար, կարողանա այդ խրամատը կառուցել և քողարկել թե՛ խրամատը և թե՛ իրեն:


Դասակի հրամատարը խնդիր առաջադրելով ջոկին պաշտպանութեան համար, ցույց ե տալիս նաև այն ուղղութեանը, թե ուր պետք ե ուղղված լինի կրակը: Խրամատի համար տեղ ընտրելիս առաջին պայմանը կլինի այն պահանջը, վոր այդ տեղից կարելի յե լավ գնդակոծել ցույց տրված ուղղութեանը և միևնույն ժամանակ անտեսանելի մնալ, իսկ ավելի լավ՝ չհարվածվել գնդակներով մյուս ուղղութեաններից:

ՈՐԻՆԱԿՆԵՐ.

Հակառակորդն սպասվում ե Ա. Բ. Գ. կողմից (նկար 9 և 10). № 1 ջոկին հրամայված ե տեղ ընտրել սարի վրա, խնդիր ունենալով գնդակոծել դեպի Դ բարձրութեանը տանող մատուցները: Ձոկի հրամատարը կարող ե դերք ընտրել Ե-ի ամենավերևի մա-

սում: Այդտեղից ջուրը կարող է կրակել վոչ միայն Գ-ի կողմի վրա, այլև զնդակոծել հակառակորդին, վոչ հարձակում է դործում Բ-ի կողմից և նույնիսկ Ա-ի կողմից: Կարծես ամեն ինչ լավ է: Սակայն իրականում այդ վատ դերը է: Ջուրը կարող է կրակել բոլոր կողմերի վրա, բայց և նրան ել կարող են տեսնել և զնդակոծել նույնպես բոլոր կողմերից. և ամենից վատն այն է, վոչ դասավորվելով Գ. ամենավերևի մասում, ջուրը հեշտությամբ կարող է հայտարերվել և վոչնչացվել հակառակորդի հրետանու կողմից: Վորպեսզի այդ բանը տեղի չունենա, ջուրը հրամատարը դերը է ընտրում վոչ թե սարի ամենավերևի մասում, այլ կատարի յետևում, ինչպես ցույց է տրված նկարում: Այդտեղից նա տեսնում ու զնդակոծում է Գ-ից Ե-ի վրա հարձակվող


Հ Ա Կ Ա Ռ Ա Կ Ո Ր Դ



Նկար 9. Թևահարող զնդացրեր

հակառակորդին, իսկ ինքը ծածկված է Գ կատարի տակ հակառակորդի և՛ տեսողությունից և՛ ձրվերից Ա և Բ կողմից: Այդպիսի դերքը չի կարող հարվածվել նաև թշնամու հրետանու կողմից նախ նրա համար, վոչ հրետանական դիտողները չեն կարող տեսնել ջուրին, վոչ թաղնված է Գ սարի յետևում, և յերկրորդ՝ ջուրը վրա արձակած արկերը կընկնեն սարի վրա կամ սարից մյուս կողմ կանցնեն: Այդպիսի տեղը ջուրը և նրա զնդացրի համար լավ է, բայց և այնպես ունի իր խոշոր թերությունը. այդ այն է, վոչ

կրակելով Բ կողմի վրա № 1 ջուրը հարվածում է այն հակառակորդին, վոչը հարձակվում է № 2 ջուրը վրա Ե բարձունքի վրա, և չի կարող հարվածել այն թշնամուն, վոչը կտողա դեպի Գ-ն՝ Ա և Բ կողմերից:




Նկար 10. Թևահարող զնդացրերի դասավորումը

Այդ բանը տեղի չունենալու համար, դասակի հրամատարը հրամայում է № 2 ջուրին այնպիսի դերք ընտրել խրամատի համար, վոչտեղից կարելի լինի կրակ վարել Ա և Բ կողմից: Ահա ջուրերի այդպիսի դասավորման և նրանց կրակի այդպիսի ուղղության դեպքում է, վոչ ստեղծվում է «խաչածե կրակ»: Այդպիսի դասավորումը ամենից ձեռնտուն է. բայց կարող է պատահել և այն, վոչ թշնամին յերբեք չի հարձակվել Ե-ի վրա, այլ ամբողջ ուժերով կտողոսի դեպի № 1 ջուրը, վոչ դասավորված է Գ բարձունքի յետևում և վոչը չի կարող կրակել հարձակվող հակառակորդի վրա: Այդ բանը տեղի չունենալու համար, առաջին ջուրը հրամատարը, բացի Գ-ի վրա հրաձգություն կատարելու համար ընտրած դերքից, ընտրում ու սարքավորում է իր համար ևս մեկ պահունի դերք Գ սարի վրա կամ նրա առջևում, վոչտեղից կարելի յե հարվածել թշնամուն, վոչը հարձակում է դործում Գ սարի վրա: Թշնամու հրետանու կրակով չվոչնչանալու համար, պահունի դերքը լավ է դրավել այն ժամանակ, յերբ հակառակորդի հետևակը կմոտենա 200 մետրի վրա, կանդ կառնի լարացանցների սլատառուով և յերբ նրա հրետանին չի կարող կրակել Գ սարի վրա, վախենալով, վոչ կարող է հարվածել իր հետևակին:

Սրամատներն այնպես պետք է փորել, վոչպեսզի նրանք բաց լինեն միայն այն կողմի վրա, վոչտեղից անհրաժեշտ է հրաձգել,

և ծածկվել տեղանքով կամ հողաթմբով այն կողմերից, վորտեղից հրաձգելու հարկ չկա:


Կարմիր բանակայինը ամենից հաճախ խրամատ ե փորում ջր-կի հրամատարի ղեկավարութամբ, վորը ցույց ե տալիս թե՛



Նկար 11. Թևահարող զնդացրի խրամատը

խրամատի չափերը, և թե ինչպես պետք ե փորել ու ինչպես ջր-ղարկել այն: Սակայն խրամատներ կարելի յե փորել վոչ միայն 2-3 հոգու համար, այլև ամեն մի կարմիր բանակայինի համար առանձին: Սյուլիսի դեպքերում, ինքը կարմիր բանակայինը պետք ե կարողանա և՛ խրամատ փորել, և՛ ջրղարկել այդ խրամատը այնպես, վորպեսզի հակառակորդը չհայտաբերի: Խրամատ փո-վոր պետք ե կիտել այն կողմի վրա, վորտեղից հարկավոր ե ծածկված մնալ հակառակորդի զնդակներից (նկար 12): Խրամա-տը չըջապատող կանաչը մի տըրրի, մի կեղտոտիը հողով, այլ թարմ կիտած հողը պետք ե ծածկել կանաչով, քաղած վորևե տեղ խրամատից հեռու մի կողմում և խրամատը տեսքով և գույնով նմանեցրու չըջապատող տեղանքին: Սյու նշանակում ե

«Բողարկել խրամատը»: Խրամատից հիմնական պահանջն այն ե, վոր նա հնարավորություն տա կրակելու հակառակորդի վրա պառկած, ավելի լավ ե ծնկից կամ կանգնած և միևնույն ժամանակ ծածկի հակառակորդի զնդակներից: Ամենից հեշտն ե խրամատ



Նկար 12. Հողը կիտիը այն կողմի վրա, վորտեղից պետք ե ծածկվել թշնամու զնդակներից

փորել պառկած կրակելու համար. սակայն նա վատ ե ծածկում զնդակներից և մանավանդ հրետանական արկերից: Նշանավոր չա-փով դժվար ե խրամատ փորել կանգնած կրակելու համար. բայց դրա փոխարեն նա ծածկում ե վոչ միայն հրացանների ու զնդա-ցրերի զնդակներից, այլև շրայների զնդակներից և հրետանական արկերի ու ավիացիոն ուռմբերի բեկորներից:

Խրամատներ փորելու մասին հրամատարից հրաման ստանա-լով, գործադրիը բոլոր ջանքերդ՝ շուտ և լավազույն ձևով փորե-լու խրամատ: Սյու կողմի քեզ ավելի լավ հարվածել թշնամուն և ծածկված մնալ նրա կրակից:

Վորպես ընդհանուր կանոն, կարմիր բանակայինը պաշտպանության ժամանակ մարտ ե մղում ջոկի կազմում, կատարելով հրամատարի հրամանները:

Մտտիկ հեռակալություններից (300—400 մետր) հրաձիգները կրակ են վարում վոչ միայն իր ջոկի հրամատարի հրամանով, այլև ինքնուրույն կերպով, ընտրելով ամենից ավելի կարևոր նշաններ՝ առաջին հերթին հակառակորդի հրամատարական կազմին, նրա նշանառուներին և դիտողներին, խնամքով նշան բռնելով, անվրենջ խիբլու համար:

Ամենից լավ ե կրակ բանալ, յեթե կարելի յե հարվածել նշանը հանկարծակի, յերբ հակառակորդի հրաձիգները կուտակվում են, իրենց թևը դնում են կրակի տակ կամ վեր են բարձրանում ամբողջ հասակով: Յեթե հայտնի յե, թե յերբ և վո՛ր կետում պետք ե հայտնվի նշանը, կարելի յե նախորդ նշան բռնել ա՛յդ կետին:

Հակառակորդի կողմից գրոհի ժամանակ հրաձիգները և ձեռքի զնդացիները կրակում են մինչև վերջին փամփուշտը, թեկուզ հակառակորդը հայտնվի թիկունքում: Գրաված դիրքից նահանջել թույլ ե տրվում միմիայն դասակի հրամատարի հրամանով:

Գերազանց հրաձիգները կրակ են բացում մինչև 600 մետր հեռավորության վրա: Մնայլերները կարող են կրակ վարել հակառակորդի հրամատարական կազմի վրա, նրա զնդացիների նշանառուները վրա, նրա դիտողների ու կապավորների վրա մինչև 800 մետր հեռավորություններից, իսկ ուղտիկական նշանոցի զնդուքում նաև 1000 մետրից:

Ձեռքի կամ հաստոցավոր զնդացիները կորցնելու համար պատասխանատու յեն ամբողջ ջոկը և յուրաքանչյուր մարտիկ առանձին: Ձեռքի զնդացիի փչացումը ջոկին չի պատում առաջադրված խնդիրը կատարելուց: Ձեռքի զնդացիի վոչնչացման կամ փչացման դեպքում կարմիր բանակային-զնդացորդները բաց են անում դիպուկ հատ-հատ կրակ, կատարելով շարքից դուրս յեկած ձեռքի զնդացիի խնդիրը: Գնդացորդների շարքից դուրս գալու դեպքում վերցրու զնդացիները և կրակ բաց արա, շարունակելով կատարել զնդացորդների խնդիրը: Քանի դեռ ջոկում կենդանի

յե մնում թեկուզ մեկ կարմիր բանակային, նա պարտավոր ե վերցնել ձեռքի զնդացիները և հարվածել թշնամուն: Վճռական մոմենտին բոլոր մարտիկները մինչև փամփուշտակիրները և կապավորները պետք ե պատրաստ լինեն բռնամարտի համար, հիշելով, վոր այդ բռնամարտում ե վճռվում մարտի յեղը:

Նահանջի ժամանակ (հրամանով) մի դջիր զնդացիները, թեկուզ նրա մեջ փամփուշտներ ել չլինեն, թեկուզ նա սարքին ել չլինի: Յեթե դեն ձգես զնդացիները, կողտադործեն մեր թշնամիները, մահ բերելով քեզ և քո ընկերներին:

Գիշերը և ծխի մեջ հրաձգության համար յուրաքանչյուր հաստոցավոր և ձեռքի զնդացի պետք ե նշան դնել և ամրացնել հրաձգության համար վորոչ ուղղության վրա, այնպես, ինչպես և հրացանները: Կրակ պետք ե բանալ կամ հրամանով կամ առաջավոր պոստերի պղպնդանի համաձայն, վորը ցույց կտա, վոր հակառակորդը հայտնվել ե այն տեղերում, վորտեղ զենքը նշանառության ե տրված: Ապագա պատերազմում հաճախակի կլինեն դերային մարտեր և մանավանդ ծխի մեջ:

Սովորիք դիպուկ կրակել վոչ միայն ցերեկով, այլև գիշերը, ծխի մեջ և հակազազ հազած:

26. ԻՆՉՈՒ ՊԵՏՔ Ե ԽՆԱՅԵԼ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ, ՅԵՐԲ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ԿԵՍԸ ԾԱԽՍՎԵԼ Ե

Թշնամուն հարվածելու համար հարկավոր են փամփուշտներ: Իդուր մի ծախսիր փամփուշտները: Կրակիր այնպես, վոր քո յուրաքանչյուր գնդակը դիպչի նշանին: Լրացրու փամփուշտներդ, վերցնելով վերավորներից և սպանվածներից:

Ծախսելով փամփուշտները կեսը, զեկուցիր այդ մասին քո հրամատարին:

Մինչև մարտի վերջը վորպես անձեռնմխելի պաշար պետք ե մնա մի ծրար փամփուշտ և մի ժապավեն զնդացիի համար: Այդ պաշարը պետք ե ծախսել միայն այն ծայրահեղ դեպքում, յերբ պետք ե պաշտպանես քո կյանքը կամ ազատվես գերությունից:

27. ԳԻՏՈՂԻ ԳՎԽԱՎՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1) Արթուն դիտել մարտադաշտն առանց գրավվելու վորևե բանով, զեկուցելով հրամատարին հայտնված նշանների (մանա-

վանդ դնդացրերի) և հակառակորդի դրուժյան ամեն տեսակ փոփոխութեան մասին :

2) Ընտրելի քեզ համար այնպիսի տեղ, վորտեղից ավելի լավ կարելի չե զիտել ցույց տրված շերտը, վորտեղից հարմար ե գեկուցել տեսածների մասին, և վորտեղ քեզ թշնամին չի տեսնում և չի գնդակոծում :

3) Յեթե յերկդիտակ (բինոկլ) ունես, հարմարեցրու քո աչքերին. թե ինչպես պետք ե այդ անել, հարցրու հրամատարին, նա քեզ ցույց կտա :

4) Գիշերը, լսելով թռչունի, դադանի ձայն և ամեն տեսակ կասկածելի ձայն, նշան արա թե այդ ձայնը վորտեղից ե դալիս, այդ համարիլ թշնամու արտասանածը, մինչև վոր կհամողվես, վոր դու սխալվում ես :

5) Նկատելով դադեր թողնելու նշաններ կամ հայտարերելով դադային արկերի սլայթյուն, տուր տազնապի նշանը—«գադեր» :

6) Հայտարերելով տանկեր, անմիջապես գեկուցիլ քո պետին :

7) Սալառնակներ հայտարերելիս կամ լսելով մոտորի ձայն, գեկուցիլ այդ մասին և դրանից հետո վորոշիլ ում սալառնակն ե, դարձյալ գեկուցիլ :

8) Հրանոթի ձիգի բռնկում նկատելով, հաշվիլ, թե քանի վայրկյան ե անցնում մինչև ձիգի ձայնի լսվելը¹⁾ նշիլ տեղանքով կամ կողմնացուցով բռնկման ուղղութիւնը և հաղորդիլ այդ մասին քո հրամատարին :

9) Հատուկ ուշադրութիւն դարձրու քո միավորութեան թեի վրա և գեկուցիլ պետիդ այն ամենի մասին, ինչ կարող ե սպառնալ այդ թեին :

10) Ուշադրութիւն դարձրու այն մատուցների վրա, վորոնցով հակառակորդը կարող ե մոտենալ դիւրբին :

11) Անտառում կանգնելով, ուշադրութեամբ վորսա ամեն տեսակ ձայն և ուշադրութեամբ գննիլ անտառի ուղատները և բացատները, վորտեղ շատ հեշտութեամբ կարելի չե հայտարերել մոտեցող թշնամուն :

28. ԿԱՊԱՎՈՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Կապալորը պաշտպանութեան ժամանակ տեղավորվում ե իր

1) Ձայնը մի վայրկյանում անցնում ե 335 մետր. յեթե հաշված վայրկյան-

հրամատարին մոտիկ, բայց այնպես, վորպեսզի չդրալի հակառակորդի ուշադրութիւնը, և տեղավորվում ե այնպիսի տեղում, վորպեսզի հակառակորդը չկարողանա տեսնել վոչ կապալորին և վոչ տրվող ազդանշանները, վորոնք միևնույն ժամանակ պետք ե լավ տեսանելի լինեն այն դիտողներին, վորոնք ընդունում են այդ ազդանշանները :

Ուշադրութեամբ հետեիլ այն դրամատերի ազդանշաններին, վորոնց հետ կապ պետք ե պահպանել : Հարցրու հրամատարին, թե ո՛ւր պետք ե առաջ շարժվել, և նշան արա քեզ համար շարժման ծածկված ճանապարհը և այն տեղերը, վորտեղ կարելի չե կանդ առնել շունչ առնելու համար :

Հրաման ստանալով, կրկնիլ և ապա արագորեն և ըստ հնարավորութեան ծածկված տեղ հասցրու այդ հրամանը այն անձնավորութեանը, վորի մոտ դու ուղարկված ես : Զեկուցադիլ տեղ հասցնելով, հարցրու, թե ինչ պետք ե գեկուցես քո հրամատարին, և առանց ուշանալու յետ վերադարձիլ : Վերադառնալիս գեկուցիլ քո հրամատարին հրամանը կատարելու և ստացած հանձնարարութիւնների մասին : Յեթե հրամատարին վտանդ ե սպառնում, զուշացրու նրան և պաշտպանիլ, չխնայելով քո կյանքը :

Վիրավորվելու դեպքում հանձնիլ ստացած հրամանը կամ գեկուցադիլը հենց առաջին հանդիպած հրամատարին կամ մարտիկին՝ խնդրելով, վոր տեղ հասցնեն ըստ նշանակման :

Զեկուցադիլ կամ հրաման տանելիս, ընտրիլ շարժման համար այնպիսի ճանապարհ, վորպեսզի չհայտարերես այն պետի տեղը, վորից դու գնում ես, և այն պետի տեղը, գեպի վորը դու ուղևորվում ես :

Մարտադաշտում հանդիպած հրամատարներին պետք ե գեկուցես՝ վո՛րտեղ ե քո գործատը (վաշտ-դասակ), ի՛նչ ե անում, վո՛րտեղ ե հրամատարը, վո՛րտեղ ե հակառակորդը, ո՛ւր ես ուղարկված դու :

Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք ե պատրաստ լինի կատարելու կապալորի պարտականութիւնները :

Ների թիվը բազմապատկենք այս թիվով, կտանանք մարտկոցի ե դիտողի միջև յեղած հեռավորութիւնը :

Յեթե թեթև վերավորված ես և կարող ես յոյա գնալ առանց
ուրիշների ոգնութեան, ազմուկ մի բարձրացրու, կապիր վերքդ
և շարունակիր կատարել քեզ առաջադրված խնդիրը:

Յեթե վերքդ քեզ հնարավորութիւն չի տալիս կովելու, դե-
կուցիր այդ մասին քո հրամատարին և նրա թույլութեամբ ու-
ղևորվիր դեպի վերահասպական կայան, կրկին հարցնելով հրամա-
տարին, թե ի՞նչ ճանապարհով կարելի յե այնտեղ գնալ: Յեթե
վերքը կապելու համար հարկավոր ե ուրիշի ոգնութեանը, ղեկու-
ցիր այդ մասին հրամատարին. նա կամ ինքը վերքդ կկապի, կամ
կհրամայի մի ուրիշին կապելու: Յեթե հրամատարդ հեռու յե,
խնդրիր՝ թող կապի հարևանդ:

Վերահասպական կայան գնալիս հանձնիր փամփուշտներդ հա-
րևանիդ, խակ հրացանդ, յեթե կարող ես, վերցրու հետդ:

Վերքը կապելու ժամանակ հատուկ ուշադրութիւն դարձրու
ժաքրութեան վրա: Հիշիր, վոր կեղտը վերքը կապելու ժամանակ
գնդակից վտանգավոր ե:

Չմոռանաս, վոր արգելւում ե՝ ով ել ուղտու ե լինի, բացի սա-
նիտարից, ուղեկցել վերավորներին դեպի թիկունք:

Պետի հրամանը կամ վերավորի խնդիրն ստանալով ողնիր
նրան, կապիր նրա վերքը, ողնիր նրան մի ծածկված տեղ գնալու
և իսկույն վերադարձիր քո տեղը, կատարելու քո խնդիրը:

Հիշիր, վոր պաշտպանութեան ժամանակ վերավորին հաճախ
ավելի անվտանգ ե թողնել խրամատում մինչև մարտի վերջը, քան
գնալ թիկունքը բաց տեղանքով, թշնամու կրակի տակ:

30. ԻՆՁՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻ ԿԱՐԵԼԻ
ՆԱՀԱՆՁԵԼ ԱՌԱՆՅ ՀՐԱՄԱՆԻ

Մարտում ընդհանրապես և առանձնապես պաշտպանութեան
ժամանակ վոչ վոք չպետք ե թողնի իր ջուղը կամ գնա թիկունք՝
նույնիսկ փամփուշտներ բերելու, յեթե այդ մասին չկա պետի
հրամանը:

Նույնիսկ յեթե բշմամիմ քեզ շրջապատում ե, շրջանցում և
ճեղքում ե քեզի դիրքը, առանց հրամանի նահանջել արգել-
վում ե:

Յեթե հակառակորդը շրջապատում ե ջուղը, ամուր պաշտպա-
նիր քո տեղը և գնդակոծիր հակառակորդի թեև ու թիկունքը:
Այդպիսով դու ուժեղ չափով ոգնած կլինես հարվածող խմբակի
հակադրահին, վորը քեզ կողնի: Աչքիցդ բաց չթողնես քո հրամա-
տարին և գնդացրորդին և նրանց՝ շարքից դուրս դալու դեպքում
բռնիր նրանց տեղը, ղեկավարելով ջուղի կրակը, հարվածելով
թշնամուն գնդացրային կրակով:

Առանց հրամանի նահանջը վերջանում ե ընդհանուր պարտու-
թեամբ: Փախչող վախկոտներն իրենք են կորչում թշնամու գըն-
դակներից և կործանում են ընդհանուր գործը:



Նկար 13. Նոնակ չկա, խոցիր սվինով

Գերի չընկնես. հիշիր, վոր մեր շարքերի թուլացումը, թե-
կուղ մի մարդով, ուշացնում ե վերջնական հաղթանակի ժամը:
Վերջին գնդակով սպանիր մերձակա թշնամուն: Գնդակ չկա—
խփիր նոնակով: Նոնակ չկա—խոցիր սվինով:

31. ԻՆՁ ՊԵՏՔ Ե ԱՆՆԷԼ, ՅԵԹԵ ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱԿ
ԳԵՐԻ ՅԵՍ ԸՆԿՆՈՒՄ

Յեթե դու դժբախտութիւն ես ունենում վերավորված գերի
ընկնել, հակառակորդին տեղեկութիւններ մի տա քո զորամասի
անվան ու տեղավորման մասին, նրա կազմի ու մարտական խընդ-
րի մասին, դավաճան մի՛ յեղիր: Մեկ հատիկ անզղույշ խոսքով

գու կարող ես կործանել հաղարավոր կարմիր բանակայիններ :
Հրաժարվիր հարցերին պատասխանելուց : Յեթե դու այնքան կամ-
քի ուժ չունես լուելու, այն ժամանակ ձևացրու քեզ միամիտ,
չհասկացող, թե ինչ են քեզանից ուզում իմանալ, կամ ավելի լավ
ե, ասա, վոր շատ ժամանակ չե ինչ դուրս ես յեկել հիվանդա-
նոցից կամ նոր ես վերադարձել արձակուրդից, և այդ պատճառով
վոչինչ չգիտես : Քո անունն ու աղբանուկը կարող ես ասել : Սու-
սափիր նաև հայտնել ճակատի դուրբյան մասին քո բախտակից
ընկերներին, գերիներին : Հավատացած յեղիր, վոր ձեզ լուծ են,
վորովհետև հետևում են ձեզ, և վոր յերբեմն պատերն ել ականջ-
ներ ունեն (կան այդպիսի ասպրատներ ծածուկ լսելու համար) :
Յեթե ընկերներդ սկսում են շատախոսել, զգուշացրու նրանց, վոր
լեզուն իրենց քաչեն :

32. ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ԿՐԱԿԻՑ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հրետավորներն ասում են՝ «ինչ վոր մենք տեսնում ենք, վո-
չնչացնում ենք» : Չմոռանաս այդ, և դանիլով պաշտպանության
մեջ, աշխատիր այնպիսի տեղ ընտրել և այնպես քողարկվել, վոր-
պեսզի հրետանական դիտողները քեզ չհայտարերեն :

Պարզ չտեսնելով նշանները, թշնամու հրետանին կարող ե գըն-
դակոծել ամբողջ մակերեսներ, նկատի ունենալով, վոր մեկնում ե-
կին կռիպցնի : Այդպիսի կրակը հարյուր անգամ թույլ ե նշանո-
ցային կրակից, բայց և այնպես նա ևս կարող ե թույլ վարժված
հետևակի համար մեծամեծ կորուստների պատճառ դառնալ :

Հաղարավոր պայթող արկերից դժվար թե յերկուսը պայթեն
միևնույն կետում : Այդ բանն իմանալով, ողտադործիր արկերի
պայթյունից առաջացած ձաղարները արկերի բեկորներից պաշտ-
կամ խրամատ փորելու :

Կենդանի ուժի նկատմամբ, այսինքն՝ հրաձիգների նկատ-
մամբ, հակառակորդը դործադրում ե շրայնելը, վորը հարվա-
ծում ե նշանավոր չափով ընդարձակ տարածություն գնդակների
խրճով վերևից :

Այդ գնդակներից պաշտպանվելու համար հարկավոր ե ունե-
նալ խրամատ ծնկից, կրակելու համար, իսկ ավելի լավ ե ունենալ
կանդնած կրակելու խրամատ : Կպչելով այդպիսի խրամատի

առջևի յեղրին, դու կարող ես հուսովի պաշտպանություն գտնել
վոր միայն շրայնելի գնդակներից, այլև նոնակների բեկորներից
փորոնք պայթում են դեանին հարվածվելու դեպքում :

Պատկան կրակելու համար խրամատը չի պաշտպանում շրայ-
նելի գնդակներից . այդ պատճառով անհրաժեշտ ե ոգտվել ամեն
ազատ բողբոյից՝ խրամատը խորացնելու և կանդնած կրակելու
խրամատ գարձնելու համար :

33. ԻՆՉՊԵՍ ԿՈՎԵԼ ԱՎԻԱՑԻԱՑԻ ԴԵՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿ

Հարձակվողի ավիացիան ձգտում ե .

ա) հետախուզել պաշտպանությունը հարձակվողի հրետանու
նշաններ ցույց տալու համար .

բ) հարվածել պաշտպանվողին ուժեր նետելով և գնդացրերի
գնդակոծմամբ .

գ) շարքից դուրս հանել պաշտպանության մարտիկներին կամ
հարկազրել նրանց հագնել հակազագերը, դադային ուժեր նե-
տելով, մանավանդ արտասովաբեր դադային ուժեր :

Սափառնակի հարձակումից պաշտպանվելու համար գործա-
դրվում ե գնդացրերի կամ հրացանների կրակը : Հաստոցավոր
գնդացրը կարող ե խփել մինչև 1000 մետր բարձրության վրա
թույլ թշնամու սավառնակներին, իսկ մեղքի գնդացրը—մինչև
600 մետր, նույնիսկ 800 մետր : Հրաձգային ըսկի կրակը կարող
ե խփել ցած թույլ սավառնակներին (մինչև 400—500 մետր
բարձրության վրա) ավելի լավ, քան գնդացրերն ու հրետանին
Սակայն ընդամին պետք ե հիշել, վոր առանձին հրաձիգների չղե-
կավարվող կրակը փոանգավոր ե իր գորքերի համար, վորովհե-
տև դեպի վեր արձակած գնդակը դետին ընկնելիս կարող ե ազա-
նել մարդուն :

Սովորելը կրակել սափառնակների վրա դեռևս խաղաղ ժամա-
նակ :


Սավառնակներից արձակած գնդացրային կրակից և ուժեր-
բեց կորուստները նվազեցնելու համար լավագույն միջոցն ե ապա-
կետորոնացված դասավորումը և ուժերի պայթյունից պաշտ-
պանվելու համար ողտադործել ամեն տեսակ ձորակ, փոս, ձա-
ղարներ, խրամներ, և այլն : Լավ կառուցված խրամատը հուսալի
կերպով պաշտպանում ե ավիոուժերի բեկորներից :

ԹՆ պաշտպանվելու համար ծառայում և հակադադր, թղթի թիկնոցները և ծակարանները, վորոնք կառուցվում են փոքրիկ խրամատների գլխին, ընդվորում պետք է նկատել ունենալ, վոր հակառակորդը կարող է մեր պաշտպանութան դեմ գործադրել կայուն ԹՆ, վախենալով, վոր կարող է թունավորել իր հարձակվող հետևակին:

34. ԻՆՉՊԵՍ ԿՈՎԵԼ ՏԱՆԿԵՐԻ ԴԵՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Մեզ հետ կռիվ մղելիս գրոհի ժամանակ հակառակորդը հաճախ կարող է գործադրել տանկեր և տանկետակներ (նկար 14): Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է իմանա, թե ինչ թույլ կողմեր ունի տանկը, վորպեսզի հաջողութամբ կռվի նրա դեմ: Տանկը ղեկավարված է գնդացրով կամ թնդանտթներով, բայց պրանցով նա հարկադրված է կրակել շարժման ժամանակ. այդ պատճառով ավելի սակավ վտանգավոր են, քան գնդացրերը հետևակի ձեռքում, վորը հարմարվել է տեղանքին:

Տանկը չի կարող հաղթահարել 40 աստիճանից ավելի դիքսթրոն, չի կարող անցնել մի մետրից ավելի խոր գետով, չի կարող անցնել անտառով կամ կտրտած հաստ կոճղերի վրայով, խրուս ճահիճներով:



Նկար 14. Տանկետակ

Խրամատներում կամ արկերի ձողաբներում թաղնված մարտիկների համար դժվար չէ դուրս նետվել տանկի ճանապարհից մի կողմի վրա, վորովհետև նրանք ընթանում են շատ լայն, մեկ-մեկուց 75—100 քայլի վրա ճակատով:

Ամենից շատ վտանգավոր են նրա յետևից շարժվող հետևակին


ու գնդացրերը. իսկ տանկերին կործանելու մասին պետք է հարթ տանի մեր հրետանին, գնդային, դումարտակային թնդանտթները:

Յեթե տեսնում ես քո վրա յեն գալիս տանկերը, խուճաղի մի մատնվիր, մի վաղիր դեռ ու դեն, այնպես մի շարժվիր, վոր տանկից տեսնեն, գլուխդ մի կորցնի, մի կարծիր թե տանկերն անպայման քո վրա յեն գալիս: Ինչպես այդ քեզ թվում է հետվից:

Հիշի՛ր, վոր յեթե տանկը գալիս է ուղղակի քո վրա, ամենավերջին վայրկյանում անգամ դու ժամանակ կունենաս մի կողմ քաշվել, ինչպես մի կողմ ես նետվում անցնող ավազուկի առջևից:

Յեթե մոտիկում ծածկարան չկա, չիախչես, վորովհետև միևնույն է, տանկից արձակած գնդակը կհասնի քեզ. ծածկվիր ամեն պոպոտահամ արկի ձողարում, ամեն տեսակ ձորակում, խրամում, սկիռում: Տանկերի կրակը գործոն է միայն մինչև 400 մետրի վրա և այն էլ փոքր արագություններով: Բացի դրանից, տանկը վատ է տեսնում, և յեթե դու անշարժ պառկած մնաս, տանկը կարող է անցնել 3 մետրի վրա քեզանից հեռու և չնկատել քեզ:

Տանկի կրակից պաշտպանվելու համար ավելի լավ է օտյուր մոտիկ դեպի նա, միաժամանակ աշխատել փչացնել նրա բրքուրը ձեռքի նռնակների կապրցով (նկար 15):



Նկար 15. Վաշխուցելու տանկերը նռնակներով

Չմոռանա այն, վոր տանկը չի կարող գնդակոծել այն նշանները, վորոնք նրան շատ մոտ են գտնվում: Չվախենա տանկի

մասենալուց: Համարձակ թրթուրի ասակ կօխիր յերկոսինը տանկը կանդնեցնելու համար. կանդ առաջ տանկը, նա ըս հաստատուն տղարն է: Կրակիր գիտածեղքերն վրա, խփիր զնդացրերն անցքերին:

Նույնիսկ թրկուեք ներխուժած տանկերն անխամող են թեղ համար: Թրկուեքում տանկերը կվոջնչանան մեր հրետանիով և նրանք հարկադրված կլինեն յետ նահանջել, յեթե կնահանջի կամ վոջընչացված կլինի նրանց յետևից ընթացող հետևակը, և այդ պատճառով ամենից առաջ հենց այդ հետևակի դեմ պետք է կռվել:

Հիշիր, վոր նույնիսկ տանձին հրաձիգն էլ կարող է խանդաբել թշնամու տանկին քանդելու պաշտպանվողի լարացանցերը:

ՈՐԻՆՍԿՆԵՐ.

Կարծիր բանակայինն իր համար փոս է փորել իր հասակից մի քիչ պակաս խորութեամբ և այնպիսի լայնութեամբ, վոր հաղիվ հնարավորութեան է տալիս կանգնել և պոպել: Նա զինված է ձեռքի նոնակների միջանի կապոցներով, ամեն կապոցում 5 հատ: Կարծիր բանակայինը գիտե, վոր տանկն անցնելով զլիսի վրայով, նույնիսկ չի կարող քանդել փոսի յեղբերը, իսկ ինքը տանկը կվոջնչացվի նոնակների կապոցի պայթյունից, վոր նետում է մարտիկը տանկի ստիկը կամ նրա թրթուրներն տակ: Իրենց փոքրիկ խրամաններում թաղնված անհատ կարծիր բանակայինները կոչվում են տանկերի կործանիչներ: Զգտիր դեռևս խողաղ ժամանակ ընկնելու այդ կործանիչների թվի մեջ:

Տանկերի դեմ կռվի հաջողութեան համար հիշի՛ր, վոր նրանից նահանջելը կորուստի պատճառ է դառնում: Տանկերը մարդուց արագ են շարժվում, նրանցից խուսափել-փախչել չես կարող, իսկ տանկի համար հեշտ է կրակել վազողի վրա, քան պառկածի վրա:

35. ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԵԼ ԶՄԵՌԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Զմեռը կարծիր բանակայինը պաշտպանութեան ժամանակ նախքան հարձակվող թշնամիներին հանդիպելը, նա հարկադրված է կռվել ժամերով, նույնիսկ որբերով մի այլ թշնամու դեմ: Այդ պատճառով, յուրաքանչյուր կարծիր բանակային, հաստատվելով պաշտպանութեան մեջ, պետք

ն իրկույն և եթ թիջոցներ ձեռք առնի սառնամանիքից պաշտպանվելու համար:

Սառնամանիքից պաշտպանվելու լավագույն միջոցն են գետնատները. սակայն ձմեռը միշտ չի հաջողվում կառուցել այդպիսի գետնատներ: Սառնամանիքից վատ չեն պաշտպանում նաև խուրոչներով վրանները. բայց նրանք էլ խիտ հայտարերում են (ապաքողարկում են) պաշտպանվողի դասավորումը և միշտ հնարավոր չե կրակ անել: Մայրահեղ դեպքում սառնամանիքից պաշտպանվելու, և մտնալանդ ուժեղ քամիով սառնամանիքից պաշտպանվելու միջոցն է հանդիսանում սովորական փոսը—խրամառը, այնպիսի միջոցն է հանդիսանում սովորական փոսը—խրամառը, ձյան մեջ փորած: Յեթե այդ փոսը լավ ծածկինք յերթային վրանի քաթանով, իսկ հատակին փռենք հարդ կամ թեկուղ ծառերի ճյուղեր, կտապցվի այնպիսի մի տանկի սպաստարան, վորը կարող է պաշտպանել վոջ միայն զնդակներից ու սառնամանիքից, այլև կայուն թՆ-ի ցալքուններին:

Ավելի լավ է այդպիսի խրամառ-բլիջներ կառուցել վոջ թե անհատ մարտիկի համար, այլ ջոկի համար կամ թեկուղ 2—3 մարդու համար: Մի ծուլանա, բնդհանուր ջանքերով կառուցիր քեզ համար վրան:

Զմեռը պաշտպանութեան ժամանակ հող տար պահպանելու հրացանի փողանցքը ձյունոտվելուց:

Պաշտպանութեան ժամանակ, ինչպես յերթում, յուրաքանչյուր կարծիր բանակային պետք է հսկի իր ընկերներին և, նկատելով, վոր գոռնատվել են մեկնումեկի քիթը կամ այտերը, զոռտելուց նրան՝ ցրտահարութեան դեմ միջոցներ ձեռք առնելու համար: Վտքերը ցրտահարութեանից պաշտպանելու համար նախ պետք է փաթաթվել լրագրի թղթով, և հետո փաթաթաններով:

Զմեռը, յեթե ձյունը խորն է, քիչ հավանականութեան կա, վոր տանկերը կարող են հանկարծակի զրոհել, միանգամայն անհնար է հեծելադրի գրոհը, և զժվարանում է հետևակի հարձակումը: Սակայն ձմեռը հնարավոր է հակառակորդի դահկավաքների հանկարծակի հարձակումը:

Դահուկները հնարավորութեան են տալիս հակառակորդին հարձակում դործելու և միևնույն ժամանակ այդ դահուկները դժվարացնում են հակառակորդի իսկական գրոհը:

Արիութեամբ դիմավորիր դահկավորների գրոհին, խնայելով վերջին զնդակն ու ձեռքի նանակը այն մոմենտի համար, յերբ

Հարձակվողը պատրաստվում է դրոշի, կնեսի փայտերը, իսկ կորոզն է պատահել և կնեսի դահուկները և կկորոզն շարժման արագությունը:

Հիշի՛ր, վոք թե՛ դահակվորի և թե՛ վոտավորի համար դըժ-վար է սարը բարձրանալ սառցապատ ձյունի վրայով:

Յեթե անդանքն ու սառնամանիքը թույլ են տալիս, նույնպես և, յեթե ջուր կա, այն ժամանակ ոգտակար է ձյան վրա ջուր շաղ տալ թշնամու կողմի լանջերի վրա և այդպիսով այդ լանջերը դարձնել դահակվորների համար սառցե անմատչելի բլուրներ:

ՎԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՒԻ ԴԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

36. ԻՆՁ Ե ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

Միայն պաշտպանությունը մարտադաշտում հաղթություն է հանում չես բերի. պաշտպանությունը ժամանակ է շահում, իսկ կրվում հաղթությունը տալիս է միայն հակառակորդի դեմ կատարած շարժումը, նպատակ ունենալով լիովին վոջնչացնել նրա ուժերն ու միջոցները: Այդ խնդրի կատարումը կոչվում է հարձակում:

Մարտում հաղթում է նա՛, ով ավելի յե պատրաստված հարձակվի համար:

Հարձակման ժամանակ կարժիր բանակայինի հիմնական խըն-դիքն է վորքան հնարավոր է շուտ մոտենալ թշնամուն ավինով հարված հասցնելու համար: Միայն թշնամուն կրժքով դիմավորելու պատրաստակամությունը, նրան ավինով հարված հասցնելու պատրաստակամությունը կարող է հաղթանակ տալ: Հարձակման ժամանակ հարկ է լինում կրակել միայն այն դեպքում, յերբ հա-կառակորդի կրակը խանգարում է հետագա շարժումը կամ յերբ հարկավոր է ոգնել հարևանին դնդակներով:

Առաջ շարժվելով, առանց կարիքի մի կրակիր, հոգ տար մի-այն այն մասին, վորպեսզի թշնամին քեզ չդնդակահարի ըս ան-փութություն պատճառով: Հարձակման ժամանակ, յերբ հարկ է լինում ուղղակի գեանին պռակել, և մանավանդ այն ժամանակ, յերբ հարկ է լինում սողալ, պահպանիր դնդակներն ու հրացանը ափսոսով և ցեխով կեղտոտելուց:


37. ԻՆՁՊԵՍ Ե ՎԱՏԱՐՎՈՒՄ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

Յերբ կարժիր բանակայինը, առաջ շարժվելով, փոխում է իր տեղը, նա պետք է նախորդը ընտրի այդ տեղը, յեթե պետք այդ ցույց չի տվել:

- 1) այն նոր տեղը դեպի ուր պետք է տեղափոխվել:
- 2) այն ճանապարհը, վորով ավելի հեշտ է աննկատելի շարժ-վել և միևնույն ժամանակ չխանգարել իր դնդակներին դնդակո-ծելու թշնամուն:
- 3) միջնական կանգաման տեղերը, ծածկված հակառակորդի տեսողությունից և ձիգերից:
- 4) առաջ շարժման յեղանակները (վազելադրով, քայլով, վա-զով, սողալով):

Հակառակորդին մտանալիս հիշիր հետևյալը:

- 1) Այն տեղերը, վորոնք ծածկում են ամբողջ հասակով լմ-թացազ հրաձիգներին հակառակորդի տեսողությունից և ձիգե-րից, ավելի լավ է անցնել քայլով, ոգտադործելով շնչաման հա-մար ժամանակը (նկար 16):



Նկար 16. Գեպի հակառակորդը շարժվելիս հարմարվիր տեղանքին:

- 2) Ի՞նչ ծածկված տեղերը (քարակույտեր, թփուտներ, կանաչ խոտ, տարեկան և այլն) ավելի լավ է սողալով անցնել:

3) Կանգնած ժարդու մինչև կուրծքը և մինչև դուռին ծածկող անդերը ավելի լավ է անցնել կուղեկուղ կամ չորեքթաթ :

4) Բուրբուլին բաց տեղերը ափելի լավ է անցնել վազելով :

5) Վազելվազքի և սողալով անցնելու ժամանակ կանգ առնել չունի բաշխու համար, ընտրելով այնպիսի տեղեր, վորոնք ծածկված են հակառակորդի դիտողությունից և ձիվերից : Բաց տեղերում ավելի լավ է բուրբուլին կանգ չառնել, վորովհետև կանգառ միայն հեշտացնում է թշնամու գնդացրորդների և հրաձիգների գործը քո վրա դիպուկ կրակ բանալու համար :

6) Շարժման ժամանակ լայնորեն ոգտազործիր բաշխ ծածկարաններն ուժեղացնելու համար (խորացնել փոսը, մեծացնել հողակտորը) այն տեղերում, վորոնք ընտրված են շնչաման համար, և մանավանդ այն տեղում, վորտեղից ջեղ հրամայված է կրակ վարել :

Իրանով դու վոչ միայն կպաշտպանես ջեղ թշնամու գնդակներից, այլև կողենես այն մարտիկին, վորը հարձակում է գործում քո յետևից և կողտազործի քո պատրաստած ծածկարանը, իր հերթին լավացնելով այն : Այսպես թե այնպես՝ խրամառացումը չպետք է կատենի հարձակումը :

7) Ժամանակավոր կանգառների համար (շնչաման համար) և հրաձգության համար (վորտեղ կհրամայի ջոկի հրամատարը) լայնորեն ոգտազործել ամեն տեսակ փոսեր, հողաթմբեր և առաջին հերթին արկերի ձագարները (խուսափելով այն ձագարներից, վորտեղից թՆ հոտ է գալիս) :

Հիշի՛ր հրաձգության համար և շնչաման համար կանգառումների միջև յեղած տարբերությունը : Հրաձգության համար ընտրիր այնպիսի տեղ, վորտեղից յերևում է հակառակորդը և վորտեղից նրան կարելի յե գնդակոծել, իսկ հանդատի համար ընտրիր այնպիսի տեղ, վորտեղ դու ծածկված ես մնում վոչ միայն հակառակորդի տեսողությունից, այլև նրա կրակից :

38. ԻՆՉՊԵՍ ՎԱԶԵՎԱԶՔԻ ԿԱՏԱՐԵԼ

Հարձակման ժամանակ վազելվազք պետք է կատարել մի ծածկարանից դեպի մյուսը (առանձին թիփեր, հողակտուր, փոսեր, խրամատներ և այլն) : Վորպիսի դեպքում անհրաժեշտ է կռանալ դեպի առաջ վազելու ժամանակ, իրանով արագանում է վազքը և միաժամանակ փոքրանում նշանը թշնամու համար : Վազելվազքը

լավ է փոխելիտի կատարել սողալով ու վազելով, դրա համար ոգտազործելով բարենպաստ տեղանքը (բարձր կանաչ, թիփեր, խրամներ և այլն) : Այդպիսի վազելվազքի դեպքում հակառակորդը միաժամանակ կորցնում է մարտիկին տեսողությունից և նրա համար դժվար է միանգամից նկատել և նշան բռնել վազելվազք կատարողի վրա : Այդ նույն նպատակի համար, ոգտակար է նոր վազելվազքից առաջ, փոխել իր տեղը, սողալով ծածկված մի յերկու բայլ դեպի մի կողմը և այդպիսով նորից կհետանաս նշանառությունից, վորը վերցրել եր թշնամին մարտիկի վրա : Հարձակման ժամանակ մարտիկը միշտ պետք է գործի այն հաշվով, վոր թըշնամին գիտում է իրեն, վոր թշնամին նշան է բռնում նրա վրա : Թշնամուն խարելը պաշտպանություն լավագույն միջոցն է հարձակման ժամանակ :

Պատրաստվելով վազելվազքի՝ հակառակորդի ուշադրությունը մի գրավի քո վրա :

Վազելվազքը պետք է կատարել ամենահարավոր արագությունից և վորքան հնարավոր է կարճ հեռավորությունների վրա :

Ջիզի պատրաստվելու և կատարելու համար հակառակորդի լավ հրաձգին հարկավոր է առնվազն 5 վայրկյան : Այդ 5 վայրկյանում մարտիկը պետք է վեր բարձրանա, վազի և նորից ծածկվի : 20-30 քայլ 3-6 վայրկյանում—ահա մոտավոր նորման այն վի : միջակ հրաձիգ : Վազելվազքի վրա ծախսած ավելորդ վայրկյանի կորուստը կարող է մարտիկի կյանքին վտանգ սպառնալ :

Տեղից արագ կտրվելն ու արագ վազքը (գնդակի նման) կորուսում են վազելվազքի վտանգը :

Հաճախ այնպիսի տեղանք կպատահի, վորտեղ հարյուրավոր քայլի վրա չես պատահի վոչ մի ծածկարանի, վորից կարելի լիներ ոգտվել շնչաման համար : Այդպիսի դեպքերում, վազելվազքի համար հարկավոր է ոգտազործել ամեն դեպք, վոր կարող է իր վրա գրավել հակառակորդի ուշադրությունը (արկի պայթյուն, մեր գնդացրերի ուժեղ գնդակոծը, կրակով հարեանին ոչնչելը և այլն), իսկ յերբեմն ել հարկ է լինում գիմելու արհեստական ծածկարաններ ստեղծելուն : որինակ՝ հողով լի պարկ : Այդպիսի տեղանքում հարձակում գործելու ժամանակ հաճախ գործադրվում են ջխաղաններ :

Սովորիր գործել ծխի մեջ, առանց կորցնելու շարժման ուղ-

դուժխուժը, առանց կորցնելու կապը իր հրամատարի հետ, յետ
չմնալով գնդացրից (գնդացրորդը պետք է գտնի իր ջոկը)։ Յերբ
ծուխ է բաց թողած, արագացրու շարժումը դեպի առաջ։

30. ԻՆՉՊԵՍ ԱՆՑՆԵԼ ԲԱՑ ՏԵՂԵՐԸ

Հտկառակորդի համար լավ նկատելի շերտերով անցնելը, որի-
նակ՝ բարձունքների կատարով, անասունների բոլորքով, դյուղից
դուրս գալիս, ավելի լավ է կատարել հակառակորդի համար ան-
սպասելի միաժամանակյա ամբողջ ջոկի և նույնիսկ դասակի վա-
զեմազքով, վորովհետև մաս-մաս վազեմազքից իր վրա յե դրա-
ված հակառակորդի հրետանու, գնդացրերի ու հրաձիգների
(անայտերների) կազմակերպված կրակը։ Այդպիսի դեպքերում,
յերբ հրաման ես ստանում «ջոկ, ինձ հետևիր, հառա՛ջ վազո՛վ»,
արագորեն պոկվիր տեղիցդ ու, դիտելով գնդացրերը, վազիր ա-
ռաջ։ Գնդացրորդի՝ շարքից դուրս գալու դեպքում վերցրու գլն-
դացրին ու շարունակիր վազեմազքը։

Յերբ կհասնես նոր դիրքին, միանգամից այդ տեղը մի գրա-
վի, վոր նշված է դիտողութան և կրակ վարելու համար, այլ
կանգ առ ժամկարանի յետևում և դանդաղ ու զգուշութամբ սողա
դեպի մարտական տեղը։

Բաց տեղով, յերբ կան բարձր կանաչ, ցորենի արտ, մանր
թփուտներ, պետք է շարժվել շատ զգուշ, վորպեսզի կանաչի և
ճյուղերի տատանումները Հայտարերեն քեզ թշնամու համար-
յեթե քամի յե, ոգտակար է ուղովել շարժման համար նրա թա-
փից, յերբ առտանվում է կանաչը և շարժվում են ճյուղերը։

40. ԻՆՉՊԵՍ ԾԱՐԺՎԵԼ ԳԻՇԵՐԸ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Գիշերը հարձակման ժամանակ պետք է խուսափել այն ամե-
նից, ինչ կարող է ազմուկ բարձրացնել, վորով հայտարերվում
է հարձակվողը։ Գիշերը ավելի լավ է խուսափել վազքից, չթուշել
խրատների, ցանկապատների, ցանկերի վրայով, այլ անցնել և
սողալով անցնել նրանց վրայով։

Նախքան գիշերային հարձակումը հարկավոր է զինատարքի բո-
լոր իրերը, վորոնք շարժվում են, խնամքով հարդարել և կապել
ախպետ, վորպեսզի մեկ մեկու չխփվեն։ Փամփշտի պայուսակի
մեջ չպահել առանձին փամփուշտներ կամ պահուսակներ։ Իրերի

տարակներում չունենալ մեկմեկու խփվող և գրնդոց հանող իրեր։
Կաթսայիկի մեջ լցնել և փաթաթել դրսի կողմից կանաչ խոտ
Գիշերը խուսափել ամբողջ հասակով շարժվել բարձունքի կա-
տարի վրայով, այլ այդ կատարով անցնել միայն սողալով, այլ
կերպ թշնամին կհայտարերի հրաձիգների շարժումը և կգնդակոծի
առաջուց նշան դրած գնդացրերով։

41. ԻՆՉՊԻՍԻ ՍԵԱԼՆԵՐԻՑ ՊԵՏԻ Ե ԽՈՒՍԱՓԵԼ
ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼԻՍ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Շատ հաճախ տեղաշարժելիս բոլորովին ծածկված տեղան-
քում մարտիկը վազեմազք է կատարում քայլով անցնելու փոխա-
րեն։ Ել ավելի հաճախակի բոլորովին բաց տեղանքում շարժվելու
ժամանակ հակառակորդի աչքի առաջ և նրան մոտիկ մարտիկը
դանդաղ սողալով է անցնում մի ժամկարանից դեպի մյուսը արագ
վազեմազք կատարելու փոխարեն։

Առաջին դեպքում սխալը պատճառ է դառնում ավելորդ հոգ-
նածուլթյան, իսկ յերկրորդ դեպքում հաճախ պատճառ է դառնում
վերավորվելու կամ մահվան։ Բաց տեղանքում սողացող մարտիկը
հակառակորդի աչքի առաջ և նրա կրակի տակ, իրենից ներկայաց-
նում է ժամանակավորապես հայտնվող թիրախ, վորը բավական
է միջանի ձիգեր կատարելու համար։ Մինչդեռ այդ տարածու-
թյունը կարելի յեր անցնել վազելով այնպիսի կարճ ժամանակում,
վոր հակառակորդը ժամանակ չեր ունենա նույնիսկ մի գնդակ ար-
ձակել։

Տեղաշարժելու և մանավանդ սողալու ժամանակ, գենքը հա-
ճախ կեցատամբ է ախպոյ և փչանում է։ Պետք է կարողանալ
պահպանել դրանից։

Տեղաշարժելու ժամանակ մարտիկները հաճախ շփոթում են
չնշանման համար կանդաղը հրաձգության համար՝ կանդաղում
չնշանման համար կանդաղը հրաձգության համար՝ կանդաղում
հետ և հետևանքն այն է չինում, վոր իրենց ցույց են տալիս հա-
կառակորդին հանգստի ժամանակ և կրակում առանց տեսնելու
հակառակորդին։

Պատահում է, վոր կարմիր բանակայինները կանգ են առնում
չնշանման համար լանջի վրա, վորը դարձած է դեպի հակառակոր-
դի կողմը, նրա կրակի տակ է։ Այդպիսի կարմիր բանակայինները
հաստատապես կսպանվեն։

Ավելի լավ է շարունակել վագել մինչև ծածկարանը, քան թե սպասել գնդակին բաց տեղում, իրենից անչարժ թիրախ ներկայացնելով:

Հաճախ կարմիր բանակայինները մոռանում են իրենց բուհի մասին և, կանգ առնելով հրաձգության համար բաց տեղանքում, իրենց համար ծածկարաններ չեն պատրաստում:

Մարտիկները, հաճախ ավելի լավ հարմարվելու համար տեղանքին, շարժվում են չափազանց դանդաղ և այդպիսով իսկ կասեցնում են յետևից ընթացող գործերի շարժումը:

Առաջարժման մասին հրաման ստանալով, յուրաքանչյուր մարտիկ պետք է, նախքան առաջ շարժումը, պարզի իր համար շարժման նպատակը, լավ նկատի վերջնական կետը և նշի շարժման ամենից ավելի փակ ճանապարհը և հանգստի համար կանգառումների տեղերը: Այդպիսի դիտակցական վերաբերմունք ցույց տալու դեպքում գեպի իր գործողութունները, վերջ կամ մահ ստանալու վտանգը նշանավոր չափով նվազում է:

Միայն սրանով է բացատրվում այն, վոր փորձված հին մարտիկները կարողանում են դիմանալ առանյակ մարտերում, իսկ անփորձ յերիասարդութունը հաճախ կործանվում է հենց առաջին մարտում:

Կարմիր բանակի մարտիկներ, սովորեցեք խաղաղ ժամանակ, վորպեսզի հաղթեք հակառակորդին մարտում:

42. ԻՆՉՊԵՍ ՀԱՐՄԱՐՎԵԼ ՏԵՂԱՆՔԻՆ

Վագելագի կատարելիս կամ աղալիս ժամանակավորապես շնչառման ժամանակ, մարտիկը պետք է այնպես տեղավորվի, վոր ծածկված մեռ հակառակորդի աչքից ու կրակից:

ՈՐԻՆԱԿՆԵՐ.

Մարտիկը հարձակման ժամանակ հրաման էր ստացել առաջ շարժվել հաջորդ կրակային բնագիծը, վորը դանվում էր առջևում 150 քայլի վրա: Պատկերով, մարտիկը հաշվեց, վոր 150 քայլ տարածությունը նա կանցնի վագելով 5 նվազում, 4 անգամ կանգ առնելով շնչառման համար: Նա վաղորդ ճշեց իրեն համար կանգառումների տեղերը.—արկից առաջացած ձայնը 40 քայլի վրա,

առաջ 75 քայլի վրա և աղա հաղակաշտեր: Վագելով—հասնելով ձաղաքին, մարտիկը մոռնում է նրա մեջ և թաղցնում է հրացանն ու դուլերը: Հետագայում նույնպես այդպես վարվելով, նա վաղում հասնում է կրակային բնագծին, դրախում է դիրք ու կրակ է բացում:

Մի այլ մարտիկ, նույնպիսի խնդիր ստանալով, սկսեց վագել առանց կանգառումների. վագելով 50 քայլ, նա վերավորվեց: Այն կերպ էլ սպասել չեր կարելի, մինչև վոր նա վաղում է 50 քայլ հակառակորդը ժամանակ է ունենում և՛ կրակի պատրաստվել և՛ կրակել:

Յերրորդ մարտիկը, նույնպիսի խնդիր ստանալով, վճռեց վագելագը կատարել շնչառումներով, բայց վաղորդ կանգառումների համար տեղեր չնշեց: Վագելով 30 քայլ, նա կանգ առավ շնչառման համար բաց տեղում և 10 վայրկյան անց վիրավորվեց:

Շարժման բոլոր դեպքերում, ինչպես նաև տեղում դասավորվելիս մարտիկները պարտավոր են հոգ տանել՝ իրենց համար լավագույն տեղ ընտրելու մասին, տեղանքին հարմարվելու և հոգաբերվելու մասին, վորպեսզի դժվարացնեն հակառակորդի դիտողությունն ու հետախուզությունը, պաշտպանեն իրենց գնդակներին և այդպիսով իսկ հնարավորություն ստանան կատարելու խնդիրը:

Տեղանքին հարմարվելու համար տեղանքի դույնի ողտագործման ելությունն այն է, վոր մարտիկն իր գործողութունների համար ընտրի այնպիսի տեղանք, վորն իր դույնով նմանվում է մարտիկի հազուստին:

Պաշտպանական հազուստ հազած այն մարտիկը, վորն իր շարժման համար ընտրում է հնձած արտը, հարմարվում է տեղանքի դույնին:

Սպիտակ կիսամուշտակ հազած այն մարտիկը, վորը շարժվում է ձյունով, նույնպես ճիշտ է վարվում: Բայց սպիտակ հազած հազած այն մարտիկը, վորը շարժվում է կամ կանգ է առնում կանաչ մարդագետնում, կամ կանաչ թանաքի ֆոնի վրա, վոր ձիայն չի ծածկում իրեն, այլև մինչև իսկ հայտարարում է իրեն (նկար 17):

Սև հազուստ հազած մարտիկը պետք է իր դասավորությունն ու շարժման համար ընտրի հերկած արտը:

Յերր տեղանքը խայտարեկտ է (չալ) և բժավոր է, հակառա-

կորզի զխառուժյունը գծվարանում է, — չգլխի տեղանքին հարձարվելն ավելի հեշտ է:

Միապաղաղ գույն ունեցող տեղանքում հակառակորդի դիտողությունը հեշտանում է, և այդպիսի տեղանքին հարձարվելն ավելի գծվար է:

Ճեղս

Սիւռ



Նկար 17. Տեղանքի գույնի ոգտագործումը շարժման ժամանակ

Իբր ընկերների հետ ունեցած յերկարատե պրակտիկայի միջոցով, փոխեփոխ պատկերացնելով մեկ հարձակվող մարտիկ, մեկ պաշտպանվող թշնամի, յուրաքանչյուր կարծիք բանակային պետք է վարժվի հարձարվել տեղանքին ու թողարկվել:

43. ՎՈՐՈՆՔ ԵՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՅԱՄԱՆԱԿ

Հարձակվող զորքերի հիմնական խնդիրն է՝ վորքան կորելի յն արագ հասնել թշնամուն՝ սվինով զու նոնակով հարված հասցնելու համար:

Հարձակման մեջ կրակը դարձադրվում է կռվելու համար թշնամու այն կրակային կետերի դեմ, վորոնք խանդարում են մեր հարձակմանը:

Հիմնականում հարձակման մեջ կրակային խնդիրները բուժելու յնն հրետանին ու գնդացրերը:

Յուրաքանչյուր հրետավոր, յուրաքանչյուր գնդացրորդ պետք է ուշադրությամբ գիտի իր հետեակի առաջխաղացումն ու թըշնամու կրակը: Հայտարերելով թշնամու այն գնդացրերը, վորը խանդարում է մեր հետեակի առաջխաղացմանը, գնդացրորդը, հրետավորը թշնամու դեմ են ուղղում կրակը և կրակային համարձակի հարձակումով վոշնչացնում են նրան: Հետեակի հետ կապ պահելու համար, վորպեսզի ավելի հեշտ լինի հետեակին կրակով ողնելը, գնդացրորդներն ու հրետավոր-գիտողները պետք է վորքան հնարավոր է մոտ գտնվեն հարձակվող հետեակի առաջավոր մասերին: Ձեռքի գնդացրորդները հարձակվում են հրաձիգների հետ միասին և կրակ են բացում, յերբ չնայած մեր գրեղացրերի ու հրետանու կրակին հրաձիգները հետագա առաջխաղացումը կասեցվում է թշնամու կրակով: Հարձակվելով հրաձիգների հետ միասին, ձեռքի գնդացրորդները գնդակների տարած են տեղում հակառակորդի հայտարերած կրակային կետերի վրա և ճնշելով նրանց կրակը, հնարավորություն են տալիս հրաձիգներին առաջ շարժվելու:

Հարձակման մեջ հրաձիգի հիմնական հոգսը պետք է լինի՝ չխանդարել ողնող գնդացրերի կրակին, չփակել այն արանքները, վորոնցով գնդացրերը գնդակոծում են թշնամուն, ողնել իրենց գնդացրերին ու հրետանուն՝ նշաններ ցույց տալով:

Հարձակման մեջ հրացաններով կրակը բացում են այն մասերում, յերբ թշնամու կրակը, կորուստներ պատճառելով, թույլ չտալիս հետագա առաջխաղացումը՝ չնայած հրետանու ու գնդացրերի ողնությամբ: Հրաձիգները կրակ են բացում այն բնադձեցրեց, վոր ցույց է տալիս շոկի հրամատարը, հաղթահարելով այդ բնադձեցրի միջև յեղած տարածությունները ձեռքի գնդացրերի կամ հին բնադձի վրա մնացած հրաձիգների պաշտպանության տակ:

Հարձակման մեջ հիմնականում ու գլխավորն է հասնել թշնամուն՝ մինչև սվինով, նոնակով մարտի համար: Հրաձիգությունը հարձակման մեջ ծայրահեղ միջոց է, վորը գործադրվում է այն դեպքերում, յերբ առանց նրան անհնար է առաջ շարժվել:

Գերազանց հրաձիգի հիմնական պարտականությունն է հարձակման մեջ՝ կռվել թշնամու թեահարող գնդացրերի դեմ: Այդ ձևի մեջ՝ կռվել թշնամու թեահարող գնդացրերի հակառակ բանջերին, գնդացրերը, տեղավորվելով բարձունքների հակառակ բանջերին,

անտեսանելի ու անխոցելի յեն մեր հրետանու ու զնդացրերի կրակի համար: Հայտարարելով թեահարող կրակը, հրաձիգը պետք է լավ դիտի այն կողմը, վորտեղից թշնամին կրակ է վարում և հայտարարելով ջողարկված թշնամուն, պետք է դիտուել զնդակով վոչնչացնի նրան: Պետք է հաստատապես հիշել, վոր թշնամու մեկ թեահարող զնդացրը կարող է յերբեմն կասեցնել մի ամբողջ վաչախ գրոհը:

44. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿՍՐՄԻՐ ԲՈՆԱԿԱՅԻՆՆԵՐԸ ՀԱՐՁԱԿՎՈՒՄ ՏԱՆԿԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

Տանկը հարձակման ժամանակ իր ծանրությամբ պատուում է հակառակորդի լարավակոցները, ճանադարհ է բացում մեր հետևակի համար, իսկ իր կրակով վոչնչացնում է թշնամու զնդացրերն ու հրաձիգներին:

Ոգնելով կարմիր բանակայինին, տանկն ինքը նրա ոգնության կարիքն է զգում: Տանկիստները, նստած լինելով պողպատե արկղի մեջ, վատ են տեսնում, ոգնի՛ր նրանց նշաններ գտնելու մեջ:

Տանկը թո առաջին բարեկամն ու ոգնականն է, փրկի՛ր նրան վառնդից: Նկատելով թշնամու այն հրանոթը, վոր կրակում է մեր տանկի դեմ, անմիջապես թո կրակն ուղղիր այդ հրանոթի սպասարկողների դեմ: Իսկ ավելի լավ է, վոր դու այդպիսի նշանը ցույց տաս թո զնդացրորդին:

Նկատելով, վոր տանկը գնում է դեպի հակառակորդի պատարասած խոչընդոտը կամ թակարգը, փրկի՛ր տանկին, զգուշացրու նրան վառնդի մասին:

Յերբ տանկը հարվածված է թշնամու կրակով և ոգնության կարիք է զգում, բարձրացրել և կարմիր դրոշակ, աշխատիր, ինչ չի՛ր այն ազդանշանները, վոր սահմանել է հրամատարը տանկերի հետ կապի համար:

Յերբ տանկը թո մոտերքում թաղվել է խրամատում, կամ խրամում և նրան թշնամուց դրոհվելու վտանգ է սպառնում, նետվիր առաջ և թո կրակով պաշտպանիր տանկը, և ժամանակ առաջ նրան առաջ շարժվելու ու քեղ ոգնելու:

Ոգնելով տանկին թո կրակով, մի՛ վախեցիր, թե հանկարծ

կրիպցնես նրան, — սովորական գնդակը վտանգավոր չէ առնկի համար:

Տանկը չի կարող մնալ մի տեղում: Շտապիր ոգտագործել նրա աշխատանքի արդյունքները, արագ առաջ շարժվիր նրա յետևից հրամատարի ցույց տված հեռավորության վրա, այսպես տանկը, գրավելով թշնամու խրամատը, ստիպված կլինի թշնամու հրետանու և զնդացրերի կրակի պատճառով հեռանալ, և դու ստիպված կլինես կրկին գրոհելու այն կետը, վորը դու կարող եյիր գրավել առանց մարտ մղելու և առանց կորուստների:

Յերբ տանկերը կանգ են առել կամ յետ են քաշվում, շարունակիր ե՛լ ավելի յեռանդով հարձակվել առաջ, վորպեսզի վոչնչացնելով թշնամու հակառակային թնդանոթները, հնարավորություն տաս մեր տանկերին կրկին մարտի զնալու և հետևակին ոգնելու:

45. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿՍՏԱՐՎՈՒՄ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԳԻՇԵՐՈՎ

Հարձակումը դիշերով կատարվում է, նստատակ ունենալով հարձակվել թշնամու վրա հանկարծակի: Իրեն վաղաժամ չհայտարարելու համար հարձակման ժամանակ կրակ ամենևին չեն բացում, բացառությամբ այն դեպքերի, յերբ կրակում են կիպ մոտից:

Վորպեսզի հակառակորդը չիմանա, թե վորտեղ է հասցրվում զլիսավոր հարվածը, դիշերով գրոհը կատարվում է առանց «ուռա» ղոչելու:

Հիշի՛ր, վոր դիշերով հակառակորդը կրակում է, առանց քեղ տեսնելու, վաղորոք հաստված գեներով: Գնդակների սուրցով նկատելով հակառակորդի ձիգերի ուղղությունը, յետ քաշվիր կամ յետ սողա դեպի մի կողմը և շարունակիր շարժումը դեպի թշնամին: Այդ ժամանակ մի՛ շեղվիր ճանապարհից, մի՛ կտրվիր թո ջոկից:

Հարձակվողին հայտարարելու համար պաշտպանվողը հաճախ դորձադրելու յե լուսարձակներ ու հրթիռներ: Ընկնելով լուսարձակի ճառագայթի տակ, մնա այն գրությամբ, վորպիսի դրուձակի ճառագայթի տակ, մինչև վոր վերջինս թյամբ քեղ գտել է լուսարձակի ճառագայթը, մինչև վոր վերջինս կանցնի մի այլ տեղ, կամ մինչև վոր շարժումը շարունակելու համար կարգադրություն կտրվի: Նույն ձևով վարվիր, յերբ համարին կարգադրություն կտրվի: Նույն ձևով լուսատու հրթիռներ: Յերբ ժամա-

նակին նկատում ես ճառագայթի մոտենալը, ավելի լավ ե պատ-
կիր:

Յերբ լուսարձակները շատ են, և նրանց ճառագայթներն ան-
ընդհատ վորոնումներ են կատարում, կամ տեղանքը լուսայոր-
վում ե հաճախակի արձակած հրթիռներով, հարձակումը կատար-
վում ե առանց դադարեցնելու, այնպես ինչպես ցերեկով են կա-
տարում: Այս դեպքում յուրաքանչյուր մարտիկ առաջ ե շարժ-
վում ու շնչառման համար կանգ ե առնում, ըստ հնարավորին
ծածկվելով փիերի, ծառերի սավերում կամ ձորակներում:

Սուսափիր լուսարձակի կամ լուսատու հրթիռի պայծառ լույ-
սին նայելուց, քանի վոր դրանից հետո դու կարծես կուրացած
ես լինում և մի քանի վայրկյան վոչինչ չես տեսնում:

Գիշերով հարձակման և մանավանդ դրոհի ժամանակ անխու-
սափելիորեն հարձակվողները խոնավում են պաշտպանվողների
հետ:

Իմանալու համար, թե ովքեր են մերոնք և ովքեր հակառու-
կորդի մարդիկ, յուրաքանչյուր գիշերվա համար սահմանվում ե
ասք: Այդ մի հատուկ բառ ե, վորը դժվար կարտասանեն նրանք,
ովքեր չեն իմանում մեր լեզուն: Յերբ կասկածում ես, թե ո՞ւմ ես
հանդիպել մթուժյան մեջ, բարձր ասա քո նշանաբանը («պարոլ»)
և յերբ վորպես պատասխան չես լսի նույն բառը մաքուր արտա-
սանությամբ, իմացիր, վոր Ղիմացիդ թշնամի յե: Յերբ կան այն-
պիսի հարևաններ, կամ զորամասում այնպիսի մարտիկներ, վո-
րոնք չեն տիրապետում քո զորամասի լեզվին, հրամատարները
միջոցներ են ձեռք առնում, վորպեսզի դրանք խոնավեն յուրա-
յինների հետ հանդիպելուց:

Առաջ շարժման ժամանակ հիշիր, թե ով ե նշանակված ուղ-
ղապահ, մի՛ կորցրու նրան աչքից և հավասարվիր նրան:

46. ԻՆՁՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԸ ԳՈՐԾԻ ՁՄՐԱՆԸ
ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ձմրանը ձյունը կարող ե զգալի խոչընդոտ հանդիսանալ հե-
տևակի շարժման համար, բայց դրա հետ միասին ձյունը հնարա-
թյամբ և արագ խրամատավորվելու, իսկ դահուկների ոգոտ-
զործման դեպքում ձյունը հետևակ մարտիկին դարձնում ե արա-
զաչարժ հեծելակ:

Յերբ ձյունը խորը չե ($\frac{1}{4}$ մետրից վոչ ավելի), կարմիր բա-
նակայինը կարող ե հարձակվել այնպես, ինչպես ամառը:

Սովորական, մինչև իսկ չամրացած ձյունը լավ ե պաշտպա-
նում թչնամու գնդակներից: 2-3 մետր լայնությամբ ճնակույտը
սրղեն հուսալի պաշտպան ե գնդակներից: Բահը կարող ե ողնել
ձնի մեջ ավելի հեշտությամբ ծածկարաններ պատրաստելու քան
թե ամառը:

Սոր ձյունի ժամանակ ($\frac{1}{4}$ մետրից ավելի) հարձակումն առանց
դահուկների դժվարանում ե, այդ պատճառով յուրաքանչյուր
կարմիր բանակային պետք ե կարողանա ողավել դահուկներից:

Վորպես կանոն, դահուկներ հագած կարմիր բանակայինը և՛
հարձակվում ե և՛ դրոհի յե գնում դահուկներով:

Սովորելը վոչ միայն շարժվել դահուկներով, այլև կրակել
շարժվելիս, արագ պտուկել, հարմարվելով տեղանքին, արագ
վտաքի ցատկել և նոնակներ նետել:

Հակառակորդի ուժեղ կրակի դեպքում կարող ե հրաման տըր-
վել՝ «հանել դահուկները»: Այս դեպքում յուրաքանչյուր ջոկ կար-
ծես ձիաթափվում ե, հանձնելով բոլոր դահուկները և փայտերը
Ֆեկին՝ «դահկակրին»: Դահուկներից ազատված մարտիկները
հարձակում են կատարում, դանդաղ առաջ շարժվելով ձյունի
պաշտպանության տակ, իսկ դահկակիրը տեղավորվելով մի
ծածկված վայրում, սպասում ե ջոկի հրամատարի ազդանշանին
և այդ ազդանշանով վորքան կարող ե արագ ջոկին ե հասցնում
դահուկները:

Յերբ հնարավորություն կա, դահկակիրը զդուշությամբ ա-
ռաջ ե շարժվում իր ջոկի յետևից, վորպեսզի առանց ուշացնելու
դահուկները տա ջոկին, յերբ հակառակորդը կոկսի նահանջել:

Դեռ խաղաղ ժամանակ յուրաքանչյուր կարմիր բանակային
պետք ե սովորել վոչ միայն շարժվել դահուկներով, այլև կարո-
ղանա տեղափոխել մի տասնյակ դույզ դահուկներ ու նրանց փայ-
տերը:

Հարձակման մեջ ավելի մեծ չափով քան պաշտպանության
ժամանակ ու յերթում պետք ե հող տանել՝ իրեն և իր ընկերնե-
րին ցրտահարությունից պաշտպանելու մասին:

Յուրաքանչյուր հարձակում ավարտվում է առաջ նետումով զեպի հակառակորդը՝ նրան հարվածելու համար նոնախներով ու սվիններով: Այդ ել հենց կոչվում է գրոհ:

Գրոհի հաջողութան համար պետք է, վոր ամենից առաջ մարտիկները պատրաստակամություն ունենան ինչ ել վոր լինի հասնել թշնամուն և բռնամարտում վոչնչացնել թշնամուն:

Այն մարտիկը, վորը նետվում է գրոհի, պետք է վստահ լինի, վոր ինքը կարողանում է տիրապետել սվինին: Հիշի՛ր այդ և զեռ խաղաղ ժամանակ վարժվիր խրտվիլակներին վրա դիպուկ և ուժեղ հարվածներ հասցնել սվինով:

Գրոհից առաջ մարտիկները կուտակվում են հակառակորդից անմիջական մոտիկության վրա (գրոհի համար յեղման դրություն) և այնպիսի տեղերում, վորտեղից արդեն կարող են գրոհի նետվել հակառակորդի այս կամ այն կրակային կետերի վրա, կամ այդ կետերի արանքները, նպատակ ունենալով շրջապատել նրան և գերի վերցնել կամ վոչնչացնել:

Ամենից լավ է, յերբ գրոհի համար յեղման դրությունն ընտրված է հակառակորդին այնչափ մոտիկ, վոր գրոհողը կարող է մի նետումով հասնել նրան, պահպանելով իր Ֆիզիկական ուժը՝ սրազենով հարված հասցնելու համար:

Գրոհը սկսվում է կա՛մ ջոկի հրամատարի հրամանով, կա՛մ առանձին մարտիկների նախաձեռնությամբ, կա՛մ ընդհանուր աղբանջանով: Յերբ հրետանական պատրաստություն է կատարվում, այդ զեպըում գրոհի աղբանջան է հանդիսանում հրետանու կրակի տեղափոխումը զեպի թշնամու դիրքի խորքը:

Այն հեռավորությունը, վորից հարկավոր է գրոհի նետվել, կախված է նրանից, թե ինչպիսի տեխնիկա յե ոգնում գրոհին: Յերբ գրոհին ոգնում են տանկերո, ապա նրանք յերեալով թշնադացրերի ու հրացանների կրակը և հնարավորություն են տալիս վելի հեռավորությունից, ինի հետադա նետումն, «ուռա» բացատանու կրակը, գրոհի համար յեղման դրությունը գրավում են մոտ 150—200 մետր հեռավորությունից: Այս զեպըում ավելի լավ է յենթարկվել իր հրետանու առանձին դիպումներին, քան թե

գրոհի համար յեղման դրությունն ընտրել ավելի հեռվում, ընկնել գրոհի ժամանակ հակառակորդի զնդացրերի վոչնչացնող կրակի տակ, վորոնք ժամանակ կունենան ուշքի գալու նրանից հետո, յերբ մեր հրետանին կտեղափոխի իր կրակը զեպի խորքը:

Գրոհի համար նետման հեռավորությունը նվազեցնելու համար անհրաժեշտ է ոգտադարձել շարժման համար արկերից առաջացած ձագարներն ու ծածկարանները, վորոնք գտնվում են գրոհի համար նշանակված ընդհանուր յեղման դրության և գրոհվող կետի միջև:

Վարժվիր ծածկված անցնելու գրոհի համար յեղման դրությունը:

Ծխածածկույթը հնարավորություն է տալիս առանց կանգ առնելու շարժվել գրոհի նաև 200 մետրից ավելի հեռավորություններից:

Առանց տանկերի ու հրետանու ոգնության գրոհի համար յեղման դրությունը գրավվում է ձեռքի նոնակի նետման հեռավորության վրա, այսինքն՝ 30—40 մետրից: Այս զեպըում հաստացավոր զնդացրերը գլխավերևից կատարած հրաձգությամբ (վորտեղ տեղանքը թույլ է տալիս), ինչպես նաև արանքներով կատարած հրաձգությամբ մինչև վերջին հնարավորությունն անցնում են հարձակվող ջոկին հակառակորդի գրոհվող ու հարևան կետերի դեմ՝ նրա դասավորության խորքով:

Գրոհի սկզբից հաստացավոր զնդացրերը վրակը տեղափոխում են թշնամու հարևան կետերի դեմ և զեպի նրա դասավորության խորքը: Գրոհող ջոկերի մարտիկներին պարտականությունն է խստիվ պահպանել ջոկերի միջև նշանակված միջանցքները (արանքները) և այդպիսով հնարավորություն տալ հաստացավոր զնդացրերին կրակ վարել նաև արանքներով:

Սկսած գրոհը պետք է անընդհատ շարունակվի: Կանգնեցնել հարձակումն ու գրոհը կարելի յե միայն՝ կատարելով հրամանը, կամ հրամատարի կարգադրությամբ: Յերբ հրամատարը սպանված կամ վերավորված է, բացականչի՛ր «Իմ յետևից գրոհի» և ինքդ նետվիր գրոհի: Գո որինակով և արիությանամբ դու կվոզեւոբես ջոկի մնացած մարտիկներին և թշնամին կվոչնչացվի:

Գրոհի շարժման ժամանակ հավատարմիք միայն առաջավորներով: Նկատելով, վոր թշնամին հակադրոհի յե անցնում գերա-

զանց ուժերով, անցիր պաշտպանութեան և զիպուկ կրակով ու ձեռքի նոնակներ հետեւով յետ մղիր գրոհը:

Յերբ հակառակորդը հակադրոհի յե անցնում, արգելվում է յետ քաշվել առանց հրամատարի հրամանի, մինչև իսկ, յերբ հակառակորդը տանն տնդամ ավելի ուժեղ է թեզանից: Յերբ հակառակորդը շրջապատում է, շարունակիր կռվել մինչև վերջին փամփուշտը, հիշի՛ր, վոր թեղ ողնութեան են դալիս մյուս դրոհող դասակները, վաշտերն ու գումարտակները: Մինչդեռ դու, գտնվելով թշնամու թևում կամ թիկունքում, ջլատում ես նրա արևությունը, ստիպում ես նրան նահանջել և նպատում ես ընդհանուր հաղթանակին:

Տիրապետելով հակառակորդի խրամատին, ջախջախիք փակուղի թշնամիներին սվինով, գնդակով ու նոնակով և կրնկակով նրանց յետևից ներխուժիր հաջորդ խրամատները:

48. ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ, ՅԵՐԲ ՅԵՐԵՎՈՒՄ ԵՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՏԱՆԿԵՐԸ

Յերբ հակառակորդը հակադրոհի յե անցնում տանկերի ողնութեամբ, ծածկվիր տանկից՝ նրա համար անհաղթահարելի խոչընդոտի յետևում, կամ թեկուղ հենց արկից առաջացած մոտակա ձաղարում, մոտակա խրամում և շարունակիր թշնամու հետևակի դեմ զիպուկ կրակը:

Հիշի՛ր, վոր տանկը կիսակույր է, վոր մոտիկից նա կրակել չի կարող, — կրակի՛ր հակադրոհող հետևակի վրա, յետ մղիր նրան, իսկ տանկերն իրենք կհետանան, կամ նրանց կվոչնչացնի մեր հրետանին:

49. ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀՐԵՏԱՆՈՒ ԿՐԱԿԻՑ

Թշնամու հրետանին ձգտելու յե խանդարել մեր հարձակմանը, խափանիչ կրակ բանալով մեր հարձակվող հետևակի առջևվում և գնդակոծելով տեղանքը նրա թիկունքում:

Հրետանու խափանիչ կրակը մի տեսակ պարիսպ է հանդիսանում, վորն ստեղծվում է հարձակվող հետևակի առջևում պայթեղ տասնյակ ու հարյուրավոր արկերից: Խափանիչ կրակի նպատակն է՝ կասեցնել մեր հետևակի հարձակումը:

Հրետանու ըստ տեղանքի հրաձգութեանը բարկացած է նրանից, վոր արկեր են նետում մի վորևէ տեղանքի «մակերեսի» վրա այն հաշվով, վոր արկը կամ նրա կտորը կըխաչի մեկն ու մեկին: Այդպիսի հրաձգութեան նպատակն է քայքայել և կորուստներ պատճառել մեր հետևակին, վորը կանգ է առել թշնամու խափանիչ կրակի պատճառով:

Հակառակորդի հրետանակալ կրակից պաշտպանվելու համար հիշի՛ր հետևյալը. —

1) Հարձակման ժամանակ կարմիր բանակայինի համար թըշնամու հրետանու կրակից պաշտպանվելու լավագույն միջոցն է առաջխաղացումը դեպի հակառակորդի հետևակը, վորտեղ հրետանին, վախենալով հարվածել իր զորքերին, կգաղաթեցնի կրակը մեր հետևակի դեմ:

2) Առաջարժման ժամանակ պաշտպանություն փնտրիր արկերի կտորտանքից (բեկորներից): Հիշի՛ր, վոր թշնամու հրետանու արձակած հարյուրավոր արկերից միայն մեկը կարող է ուղղակի մարդու զիպչել, մինչդեռ մեկ արկի կտորները, վորոնք թռչում են տասնյակ և մինչև իսկ հարյուրավոր մետրեր, կարող են հարվածել տասնյակ մարտիկներ: Ընկնելով հրետանական գնդակոծի տակ, դեռ ու դեռ մի վազվիլի դաշտում, համառորեն առաջ շարժվիր, ծածկվելով շնչառումների ժամանակ արկերից առաջացած ձաղարներում, փոսերում ու ձորակներում:

Կրակի յուրաքանչյուր ընդհատում լողտադործիր առաջխաղացման համար: Հիշի՛ր, վոր մինչև իսկ անընդհատ գնդակոծման ժամանակ կարելի յե անվտանգ առաջ շարժվել կարճ վազեվադքերով:

Թշնամու մարտկոցները կրակում են հերթերով, ունենալով հերթերի մեջ 6-ից մինչև 10 վայրկյան ընդմիջումներ: Մի հերթի արկերի պայթյունից հետո առաջ նետվիր վաղորդ նշած ծածկ կարանը և դու ժամանակ կունենաս վազել-հասնել մինչև այդ ծածկարանը մինչև նոր պայթյունները, յեթե մինչև հաջորդ ծածկարանը յեղած հեռավորութեանը 40—50 մետրից ավելի չես:

Հրետանական դիտողներն ստիպված կլինեն դուրս սողալու իրենց պաշտպանութեան ամենաառջևի յեղը: Ուշադրութեամբ դիտիր հակառակորդին, գտիր նրա դիտողներին, վոչնչացրու նրանց, — դա թշնամու հրետանու կրակից պաշտպանվելու լավագույն միջոցներից լավագույնն է:

Հարձակվող զորքերի դեմ հակառակորդը հաճախ գործադրելու յե թունավորող նյութեր (ԹՆ) հետևյալ ձևով.

ա) վաղորդք վարակելու յե տեղանքը կայուն ԹՆ.

բ) զնդակոծելու յե կայուն ու սակավակայուն ԹՆ հրետանական արկերով.

գ) ուժրակոծելու յե դադանետերից զաղառումներով.

դ) դաղ և բաց թողնելու զաղաղաներից.

ե) ԹՆ և ցրելու սավառնակներից (առավելապես կայուն ԹՆ — իսկրիտ) :

Հակազգազը հանդիսանում է ԹՆ պաշտպանության հուսալի միջոց բոլոր դեպքերում, սակայն, բացի դրանից, կարմիր բանակայինը պետք է գիտենա և կարողանա կատարել հետևյալը.

1) Հաղթահարել կայուն ԹՆ (իսկրիտով) վարակված վայրերը:

Հակառակորդը կայուն ԹՆ կարող է գործադրել այնտեղ, վորտեղ կնքը թույլ է: կայուն ԹՆ ներկայությունը նշան է, վոր այդ տեղում հակառակորդի հակազրուհը սակավ հավանական է:

Հիշի՛ր, վոր թո յետևից հարձակվում են թո ընկերները: Ողնիք նրանց պաշտպանվել իսկրիտից, նշելով դեղին թղթերով այն տեղերը, վորտեղ հայտարարված է իսկրիտ և սպիտակ թղթերով այն տեղերը, վորտեղ գտնված է կամ պատրաստված և անցք: Թղթերը մարտից առաջ կոտանա քիմիական հրահանգչից:

Յերբ վարակված վայրում անցք չես գտնում, հաղթահարի՛ր այն, հաղնելով հակազաղը և պաշտպանելով վորտեղից: Վորտեղից պաշտպանություն համար հաղի՛ր պաշտպանական դուրպաններ, բայց առանց այդպիսի դուրպանների ել սովորական կոշիկները լավ խիմված են ճարպով, կամ դուրապին է քսված (մանալի տա, հենց նոր վորտեղում են) պետք է վաթաթել սպիտակեղենով ու լաթով, դեն նետելով այդ լաթերն ու սպիտակեղենը թունավորված տարածությունից դուրս դալուց հետո:

Վորտեղումնի ու հագուստի վրա ընկած իսկրիտն աստիճանա-

բար կարող է մարմնին հասնել. այդ պատճառով, դուրս դալով իսկրիտով վարակված տեղանքից, դեմի՛ր հրամատարիդ կամ քիմիական հրահանգչին, նա կողմից քեդ անվնաս դարձնել (դադահանել) վարակված առարկաները կամ կհրամայի փոխարինել այն ուրիշ առարկաներով:

Մարմնի բաց ու քրտնած տեղերն ավելի արագ և ուժեղ չափով են վնասվում իսկրիտից: Դեմ առնելով իսկրիտի, քսի՛ր մարմնիդ ամենից շատ քրտնող կոնատակերն ու աճուքն անցք ~~անցք~~ վոր կտա քեդ քիմհրահանգչի՛չը:

2) Պաշտպանվել ԹՆ հրետանական գնդակոծման ու գազանետերի ուժրակոծման ժամանակ:

Հրետանական արկերը (նկար 18) և ականները կարող են լցվել կայուն ու սակավակայուն ԹՆ: Քիմիական արկերի գնդապետի տակ ընկնելով, անմիջապես հաղի՛ր հակազաղը, իսկ յեթե հայտարարվում են կայուն ԹՆ (իսկրիտ), վարվի՛ր այնպես, ինչպես վերևումն է ասված:

Քիմիական արկերով զնդակոծման ժամանակ խուսափի՛ր այդ արկերից առաջացած ձագարները մտնելուց, ինչպես նաև մի պահի՛ր այդ արկերի պայթած տեղերի մոտերքում, վորպեսզի պահվի՛ր իսկրիտով, վորը ցրված է պայթյունի ժամանակ: Հվարակվես իսկրիտով, վորը ցրված է պայթյունի ժամանակ: Քիմիական արկի պայթյունից առաջացած ձագարները նշի՛ր դեղին թղթով. դրանով դու կողնես ընկերովդ:

3) Պաշտպանվել գազագնդային ալիքից, զաղաղին Հակառակորդը կարող է դիմավորել մեր դրոհին, զաղաղին ալիք բաց թողնելով, սակայն այդպիսի դրոհ մեր կողմն է փչում: այն այնպիսի թամու ժամանակ, վորը դեպի մեր կողմն է փչում: Գաղաղին ալիքից պաշտպանվելու լավագույն միջոցն է հակազաղը և ըստ հնարավորին արագ առաջխաղացումը դեպի հակառակորդը, վորտեղ նա չի կարող գաղեր գործադրել, վորպեսզի չվնասի իր գորքերին:

4) Պաշտպանվել քշմանու սավառնակներից ցրվող իսկրիտից: Հակառակորդի սավառնակներից վորմանք ուժերի ու գընդացրերի փոխարեն գործիքներ կունենան հարձակվող զորքերի վրա անձրևի ձևով իսկրիտ շող տալու համար: Այս դեպքում պաշտպանություն միջոց են ծառայում հակազաղը, հակաիսկրիտային թիկնոցն ու դուրպանները և վերջապես՝ սովորական անձտային թիկնոցն ու քրտնաքի՛չները:

Քեզ վարակվելուց պաշտպանելու համար ծածկվիր յերթա-
կան վրանի սովորական քաթանով և անմիջապես դեն նետիր այն,
յերբ նրա վրա կթափվի խլրիտ: Յեթե ժամանակ չես դտել ծածկ-
վելու համար վրանով և հազուստով վրա խլրիտի կաթիլներ են
թափվել, անմիջապես դեն դցիր վրայիցդ դրատը (չինելը) և շա-
րունակիր շարժումդ դեպի հակառակորդը: Իր դորքերի մոտեր-
քում հակառակորդը չի կարող խլրիտ շաղ տալ, վախենալով,
վոր կվնասի յուրայիններին:



Նկ. 18. Քիմիական նոմակ

Հիշի՛ր, վոր սարքին հակադադը և հակաքիմիական պաշտպա-
նության միջոցների դերադանց յուրացումը հուսալիտրեն պաշտ-
պանում են դորքերին ԹՆ-ից: Հազնելով հակադադը, մի հանիր
այն, մինչև վոր աղբանչան չի լինի, կամ չես տեսնի, վոր ուրիշ-
ներն արդեն հանել են հակադադերը:

51. ԻՆՁՊԵՍ ՊԵՏՔ Ե ԳՈՐԾԻ ՀԵՏԵՎԱԿԻ ԿԱՐՄԻՐ
ԲԱՆԱԿԱՅԻՆԸ ԹՇՆԱՄՈՒ ՍԱՎԱՌՆԱԿՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿ

Սավառնակների հարձակումներից աղատվելու լավ միջոցն է
նրանց՝ թեկուզ մի մասին մեր կրակով վայր նետելը և այդպիսով
նրանց մեջ հարձակման ցանկությանը վերջ տալը: Այդ առանձ-

նասես վերաբերում է այսպես կոչվող «Տնձող» («брейший»
թուխքներին, վորոնք կատարվում են 10-ից մինչև 100 մետր
բարձրությունից և առանձնապես անխորժ են հարձակվող հետե-
վակի համար:

Թշնամու սավառնակների վոչնչացման խնդիրը հիմնականում
դրվում է դնիթային թնդանոթների ու գնդացրերի վրա, իսկ
ցածր բարձրություններից՝ նաև հրացանային նռնաձիգների վրա:
Սակայն մինչև 600 մետր բարձրությունների վրա սավառնակներին
վրա կրակելու վարժեցված ջոկի կրակը հանդիսանում է հաճախ
ավելի գործոն միջոց՝ վոչնչացնելու համար թշնամու սավառնակ-
ներին, քան թե թնդանոթները և գնդացրերը: Ամենախորք պրակ-
տիկա յե պետք, ջոկին պատրաստելու թշնամու սավառնակների
վոչնչացման խնդիրներ կատարելու համար: Զգտի՛ր ու հասի՛ր,
վոր քո ջոկը դառնա այդպիսի կործանիչ:

Հիշի՛ր, վոր միայն հատուկ նշանակված ջոկերն են կրակում
սավառնակների դեմ: Մնացած ջոկերը շարունակում են կատարել
իրենց խնդիրները: Սավառնակների դեմ անհմուտ հրաձգուի յու-
նը հնձող թուխքի ժամանակ ավելի մեծ կորուստներ կպատճառի
իր դորքերին, քան թե հակառակորդին: Մի՛ կրակիր սավառնակ-
ներին վրա, առանց մոտակա հրամատարի ցուցումների:

Յերբ հակառակորդի սավառնակները ուռներ են նետում,
պետք է նկատի ունենալ հետևյալը.

- 1) Սավառնակից նետվող ուռքերը դեպի դետին թռչելու ժա-
մանակ յերևում է հասարակ աչքով:
- 2) Ռումբի ուղղակի ընկնելը վտանգավոր չէ, քանի վոր մի
ուռքը, խնչպես և գնդակը կարող է սպանել միայն մի մարդու
և այն էլ պատահաբար:
- 3) Վտանգավոր է վոչ թե ուռքը, այլ նրա կտորտանքը, վո-
րոնք ցրվում են հարյուրավոր մետրերի վրա և կարող են հար-
վածել տասնյակ մարտիկներին:
- 4) Պակած մարտիկների հարվածման վտանգը ուռքի կտոր-
տանքներով հինգ անգամ ավելի պակաս է, քան թե կանդնած մար-
տիկների հարվածման վտանգը:
- 5) Ավիոտումբի կտորտանքներից հուսալիտրեն պաշտպանում
են բլրակներն ու ձորակները 20 սանտիմետր (քառորդ արշին)
բարձրությամբ կամ խորությամբ:
- 6) 2000 մետր բարձրությունից նետած ուռքը թռչում է մոտ

36 վարչական. այդ ժամանակամիջոցում միշտ ել կարելի չե ծածկարան դռնել և պաշտպանվել նրա մեջ:

Սովառնակները հարձակման դեմ պաշտպանութեան հուսալի միջոցներից մեկն է քողարկումը: Շարժման ժամանակ ծածկվելը առարկաների ստվերում, իսկ կանգառումների ժամանակ՝ քողարկվելը անտառի ու թփուտի մոտերքում՝ ճյուղերով, դաշտում՝ խուրճերով, մարգագետնում՝ կանաչ խոտի փնջերով, չհնձած արտով շարժվելիս՝ հասկերի փնջերով և այլն:

Թշնամու սովառնակներից ազատվելու լավագույն միջոցն է՝ շարժումը դեպի առաջ, դեպի հակառակորդի հետևակը, վորտեղ սովառնակը չի դորձի, վախենալով, թե կհարվածի իր հետեվակին:

52. ԻՆՁ ՊԵՏՔ Ե ԱՆՆԷԼ, ՅԵՐՐ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ԵՍ

Յերբ վերավորված ես՝ կապիր, առանց կեղտոտ ձեռքերով զիպչելու վերքից և մինչև իսկ չանդամվածքին: Ձեկուցիլը հրամատարիդ, և նրա թուլություններից հետո կարող ես շարժվել դեպի թիկունք՝ հանդիպելու սանիտարներին: Փամփուռները սուր հարևաններիդ, հրացանը տար հետը:

Յերբ ծանր ես վերավորված և ինքդ շարժվել չես կարող, ծածկվիր վորտե փոսում, պաշտպանվիր զեղակներից ու արկերից և սպասիր մինչև վոր մարտի արիքն առաջ կշարժվի, կմոտենան սանիտարները և քեզ կվերցնեն, իսկ յեթե ինքդ կարող ես, կամաց-կամաց ինքդ շարժվիր դեպի վերակապական կայանը: Բժըշկակներն ողնութեան կայանի տեղն ու դեպի այն տանող ճանապարհը դու պետք է խմանաս (հարցրու հրամատարիցդ, յեթե նա քեզ այդ ցույց չի տվել):

53. ԻՆՁՊԵՍ ԼՐԱՑՆԵԼ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՊԱՇԱՐԸ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հարձակման ժամանակ աշխատիր ավելացնել փամփուռներինդ պաշարը: Հիշի՛ր, վոր փամփուռները հարձակման ժամանակ տվելի դժվար է հասցնել թիկունքից: Ինքդ լրացրու փամփուռներդ, թե վոր չես ուզում առանց փամփուռների մնալ թշնամու հակադրոհների ժամանակ, յերբ դու ստիպված պիտի լինես պաշտպանվել, և փամփուռներն առանձնապես պետք են լինելու քեզ:

Ծախսելով փամփուռներինդ կեսը, զեկուցիր հրամատարին: Լրացրու փամփուռներդ, վերցնելով փամփուռներ սպանվածներից ու վիրավորվածներից: Յերբ այլևս բոլորովին փամփուռ չունես, զինվիր թշնամուց խլած հրացանով ու փամփուռներով տարին, վոր նա սովորեցնի կրակել այն հրացաններով, վորոնցով զինված են մեր հարևանները, և պատերազմի ժամանակ շտապ վարժվիր կրակել այն զենքով, վորով զինված է մեր թշնամին:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԱԽՈՒՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

54. ԻՆՁ Ե ՀԵՏԱԽՈՒՂՈՒԹՅՈՒՆԸ

Թշնամու դեմ կռվելն ավելի հեշտ է, յերբ զիտես, թե վորտեղ ե նա գտնվում, զիտես նրա թվական քանակը, ինչ չափով ե նա մարտունակ ու քաղաքականապես կայուն, ինչպես ե զինված: Ինչ ե անում և ինչ է մտադիր անելու: Գիտենալով այս բոլորը, ավելի հեշտ է նրա համար թակարդ պատրաստել, ավելի հեշտ է շարխախել նրան:

Այն միջոցառումները, վոր ձեռնարկում են մարտիկներն ու հրամատարները հակառակորդի մասին այս բոլոր տեղեկություններն ստանալու համար, կռվում է եսկառակորդի հետախուզութեամբ:

Ավելի ես հեշտ է մարտ մղել, յերբ զիտես այն տեղանքը, վորտեղ կռվելու յես: «Մեկական խրճիթում անկյուններն ել են քեզ ողնում»: Չխմանալով տեղանքը, կարելի չե հանկարձ դեմ առնել այնպիսի խոչընդոտների, վորոնց դժվար կլինի հաղթապետել առանց նախնական պատրաստութեան: Տեղանքի մասին տեղեկություններ հավաքելը նշանակում է կատարել տեղաճի հետախուզութեամբ:

Աշխատավոր բնակչությունը կարող է լավ վերաբերվել դեպի հարձիք բանակը, կարող է ողնել նրան մարտում, հետախուզութեան մեջ: Բայց բնակչության ունեւոր մասում կարող են լինել թշնամական տարրեր. նրանք ողնութեան ցույց կտան թըշնամու թշնամական տարրեր. նրանք կարող են լինել բանջարեղենի, խոտի նամուն: Բնակչության մոտ կարող են լինել բանջարեղենի, խոտի (Փուրթի), հացի պաշարներ, վորոնք կհեշտացնեն զորքերի պա-

ընտել մատակարարման խնդիրը, բայց այդպիսի պաշարներ կարող են և չլինել: Բնակչության մեջ կարող են լինել այնպիսի հիվանդություններ, վորոնք հնարավորություն չեն տա դյուրին ոգտագործելու գորքերի դիչերոթի համար: Հավաքել բնակչության ու նրա՝ դեպի մեզ ունեցած վերաբերմունքի մասին այդ տեղեկությունները՝ նշանակում է կատարել բնակչության հետախուզություն:

55. ՈՎ Ե ՎԱՐՈՒՄ ՀԵՏԱԵՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

Հետախուզությունը վարում են հատուկ հետախուզական ջոկատները (ՀՁ) և առանձին հետախուզական դասակները:

Հրաձգային ջոկը հետախուզություն է վարում հետախուզական դասակի կազմի մեջ կամ ինքնուրույն: Սեփական ապահովման և առանձին առարկաները զինելու համար ջոկին ուղարկում է հետախուզական դետո (2—3 հրաձիգ):

Հետախուզական ջոկի հեռացումը դասակից սովորական տեղանքում լինում է մոտ 500 մետր: Դետքի հեռացումը ջոկի կորից լինում է 300—400 մետր:

Հետախուզական ջոկի կորիցի մեջ նշանակվում են առանձին մարտիկներ՝ դիտելու համար դետքերին, տեղանքն ու դասակի կորիցին:

Հակառակորդի հետ սերտ շփման մեջ մտնելու ժամանակ ցերեկով դետքեր ուղարկելը հաճախ անհնար է լինում: Այս դեպքում հետախուզությունը վարում են դիտողական պոստերով՝ 1—3 հոգու կազմով: Յերը դիտողները 3 հոգի յեն, մեկը վարում է դիտողությունը, մյուսն ոգնում է, հետադրուելով մանրամասներն կասկածելի տեղերը, իսկ յերրորդը զրի յե առնում բոլոր նկատածը: Դիտապոստերը դրվում են կամ պաշտպանություն առջևի յեզրում, կամ մարտական պահպանության ռայոնում:

Բացի դրանից, յուրաքանչյուր կարմիր բանակային ամեն մի խնդիր կատարելիս պարտավոր է հետևել հակառակորդին և բոլոր նկատածի մասին զեկուցել իր հրամատարին:

Այս բոլոր խնդիրները կատարելու համար յուրաքանչյուր կարմիր բանակային զեռ խաղաղ ժամանակ պետք է վարժվի հետախուզություն և դիտողություն վարել և պետք է դործնական սովորքներ ու ճարտարություն ձեռք բերի այդ աշխատանքում:

56. ԻՆՉՊԵՍ ՊԵՏԻ Ե ԴԻՏՈՂՆ ՈՒ ՀԵՏԱԵՈՒԶՈՐ ՏԵՂ ԸՆՏՐԵՆ ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հակառակորդին ու տեղանքը դիտելու համար տեղ ընտրելիս հարկավոր է ծայր աստիճան դիտել լինել՝ իրեն չհայտարարելու և հակառակորդի հետախուզյունքի ու դիտողների ուղադրություն իր վրա չգրավելու համար:



Սխալ
Ուղիղ
Նկ. 19. Դիտիր պտուկած, առանց դուրս ցցվելու, և այնպես՝ վոր աչքի չընկնես յերկնքի փոնի վրա: Նայիր Բ-փի, հողակոշտիկ կամ ծառի աչ կողմից և միայն ծայրահեղ դեպքում՝ ծածկարանի գագաթից:

Դիտողութեան համար լավագոյն տեղը կլինի այն, վորտեղից ավելի լավ ե յերևում հակառակորդը, իսկ հակառակորդը քեզ նկատել չի կարող (նկար 19):

Չանգակատունը, գործարանային ծխնելույզը, աշտարակը, բարձր ծառը, բարձունքը սքանչելի կետեր են տեսածիրի համար: Բայց նրանց հիմնական թերութիւնն այն է, վոր նրանք գրավում են հակառակորդի ուշադրութիւնն և հաճախակի կգնդակոծվեն շրայնելով ու քիմիական արկերով:


Ավելի լավ ե ընտրել պակաս նկատելի, թեկուզ և սակաւ հարմար կետ: Յուրաքանչյուր տան կտուրը դուրսում ավելի լավ ե գանգակատնից և այլն: Ընտրելով թեկուզ և չափազանց լավ տեղ, հարկավոր ե դիտել այնպես, վոր իբր ինքը գտնվում ես հակառակորդի գիտողութեան տակ:

57. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԴԻՏՈՂՆ ՈՒ ՀԵՏԱԵՈՒԹՅՈՒՆԻ ԴԵՏՔՈՒՄ
ԻՐԵՆՑ ԾԱԾԿԵՆ ԹՇՆԱՄՈՒ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ

Անշարժ մարդը, մինչև անգամ տեղավորված լինելով բաց տեղում, չի գրավում թշնամու ուշադրութիւնը և մնում ե չհայտարեւոյթ: Ընդհակառակը, մինչև իսկ թփերը, վորոնց յետևում ծածկվում են հետախույզներն ու դիտողները, գրավում են թըշնամու ուշադրութիւնը, յեթե այդ թփերը չարժւում են:

Կախաչիկի կամ սփինի փայլը յերևում ե մի կիլոմետրից ել հեռու, պայծառ բիծը կամ վառ դույնի լաթը յերևում են 1/2 կիլոմետր և ավելի հեռու: Արևի տակ մի՛ դուրս հանիր սպառազինման ու հանգեցմանքի փայլուն մասերը: Տեղավորվելով դիտակետում, հետևիր, վորպեսզի քո հազուատը չտարբերվի իր դույնով այն տեղանքից, վորի վրա դու տեղավորվել ես: Յերբ հազուատդ խիստ տարբերվում ե, ավելի լավ ե ծածկիր խոտով, ճյուղերով հազուատիդ այն մասերը, վոր յերևում են թշնամուն, նույն ձևով ծածկիր նաև դուրսը: Յերբ տեղավորվում ես նոսր թփուտում, ողտադորձի քողարկ-խալաթը: Այս բոլոր միջոցառումները կողնեն քեզ աննկատելի մնալ, մինչև իսկ յերբ մոտիկ ես գտնվում հակառակորդին:

Դիտելով տեղանքը, աչքերդ անընդհատ մի՛ վաղեցրու ամբողջ դաշտով մեկ: Դաշտը բաժանիր շերտերի (նկար 20) և ուշադրութեամբ դնելիք շերտը քայլ առ քայլ, սկզբում՝ ավից ձախ, հետո՝ ձախից աջ, սկսելով մոտակա շերտից և վերջացնելով հորիզոնի գննութեամբ (հորիզոնն այն գիծն է, վորտեղ կարծես գետինը միանում ե յերկնքի հետ): Փորձառու դիտողի համար բավական ե 1 բույս, վորպեսզի գննի իր ամբողջ տեղամասը:



Նկ. 20. Բաժանիք դաշտը շերտերի

Աշխատիր լավ նկատել այն ամենը, ինչ տեսնում ես քո առջև: Հատուկ ուշադրութիւն դարձրու մանր թփերի վրա, նկատիր այն ճիշտ տեղերը, վորտեղ նրանք տեղավորված են: Հաճախ թփերի յետևում կլինեն հակառակորդի հետախույզը,

գնդացիքը, վորոնք, ծածկվելով կտրված ճյուղի հետևում, կղիտեն կամ կմոտենան քեզ: Նկատելով թիփ շարժումը, կրկնապատկիր նրա դիտողութունը, իսկ յերբ կնկատես, վոր թուփը փոխեց իր տեղը, հաստատ իմացիր, վոր դա քողարկված հակառակորդ է և այլևս բաց մի թող նրան քո դիտողութունից:

59. ԻՆՉՊԵՍ ՀԱՅՏԱՐԵՐԵԼ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԳՆԻԱՑԻՐՆ ՈՒ ԴԻՏԱԿԵՏԵՐԸ

Հարձակվող հետևակի ամենասարսափելի թշնամին հակառակորդի լավ ծածկված գնդացիքն է: Նա կարող է մի բույսում 500 գնդակ նետել հարձակվող ջոկի վրա: Բայց գնդացիքն էլ պակաս ուժեղ թշնամիներ չունի. հրետանին, դիվիզիական, գնդային ու գումարտական հրետանին, ակնանետները, նոնանետները, սնայպերները (լավագույն հրաձիգները) և, վերջապես, հրաձիգները: Մի հաջող դիպում գնդացիքն բավական է, վոր նա շարքից դուրս դա: Ահա թե ինչու գնդացիք համար սովորաբար ընտրվում է այնպիսի տեղ, վորը լավ է ծածկված դիտողութունից: Յե՛վ ահա թե ինչու դիտողի ու հետախույզի առաջնակարգ խնդիրն է՝ հայտարերել թշնամու գնդացիքի դասավորութան վայրերը, ցույց տալ նրանց մեր հրետանուն, մեր նոնանետներին, մեր գնդացիքին և այդպիսով իսկ ոգնել վորքան կարելի յե շուտ անվնաս դարձնել հակառակորդի գնդացիքը:

Հակառակորդի գնդացիքը կարող են դասավորվել բաց դիրքում, կրակելով ուղիղ իր առջևը, ծածկվելով մեր դիտողներից թփերով, հողակոշտերով, խոտով: Այդպիսի գնդացիքը համեմատաբար հեշտ է հայտարերել: Հենց վոր նա սկսեց կրակել, կարելի յե նկատել կա՛մ փոշին գնդացիքի փողաբերանի առջևում, կա՛մ ծխային ամպը, կա՛մ յեռացող ջրի գոլորշին: Գիշերով գնդացիքը հայտարերվում է նրա փողաբերանի առջևում առկայծող կրակի ցուլերով:

Ուշադիր դիտողը կարող է հայտարերել գնդացիքը բաց դիրքում նաև մի՛չև գնդացիքի կրակ բանալը:

Թիփ, բլրակի, դեղի յետևում դիտողը նկատեց հակառակորդի 2—3 հոգուց մի խումբ: Յուրաքանչյուր կարմիր բանակային դիտե, վոր մարտում հրաձիգներին չի թույլատրվում խմբվել մի տեղ: Այստեղից ել նա յեզրակացութուն է հանում, վոր հայտարերած խմբակը հավաքվել է միասին աշխատելու համար և խմբ

վում է կա՛մ գնդացիքի մոտ, կա՛մ դիտակետում: Բայց վճռել, թե ինչ է այդ՝ դեռևս դժվար է: Եարունակելով դիտողութունը, հետախույզը նկատեց, վոր այդ խմբակին մոտեցավ մի մարդ: Մի քանի բույսից հետո նա թիփունքը գնաց: Փոքր անց այնտեղից վազեց յեկավ մի շուն: Դիտողը յեզրակացութուն է հանում, վոր հայտարերած խմբակը կարող է լինել միայն հակառակորդի դիտակետը: Նկատելով այդ և այդ մասին հաղորդելով իր հրամատարին, հետախույզը կշարունակի փնտռել գնդացիքը մի նոր տեղում և այնուամենայնիվ կգտնի նրան:

Յուրաքանչյուր հրաձիգ դեռ խաղաղ ժամանակ պետք է վարժվի գտնել թշնամու գնդացիքը:

Վաշտային, ջոկատային պարապմունքներում յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է ձգտի հայտարերել «թշնամու» ըստ հնարավորին շատ գնդացիք: Պարապմունքի վերջում հաշվելով, թե հակառակորդը քանի գնդացիք ուներ, և քանիսն է հայտարերել հետախույզութունը, մենք կիմանանք, թե ինչ չափով մեր գնդացիքը կարողանում են ընտրել ծածկված վայրեր, և ինչ չափով ենք մենք կարողանում հայտարերել նրանց:

60. ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՈԳՏՎԵԼ ՆՐԱՆՑԻՑ ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Չորամասը հեռվից նկատելի յե այն պատճառով, վոր նա հազած է հատուկ տարադ, զինված է և շարժվում է հատուկ շարքերով ու կարգերով: Նրա այդ հատուկ տեսքը հենց հանդիսանում է այն հատկանիշը, վորով հետախույզը կամ դիտողը, վորը հեռվից նկատում է մարդկանց կուտակում, կարող է միանգամից վորոշել, թե ինչ է այդ՝ զորամաս է, թե ուղղակի տեղական բնակիչների ամբոխ:

Այդպիսով՝ սպառազինումը, հագուստը, շարժման շարժն ու կարգը հանդիսանում են ռազմական կարևորագույն նշաններ:

Յուրաքանչյուր վաշտ, յուրաքանչյուր դունդ ունի յերթական կոհանոցներ: Այդ նույնպես ռազմական կարևորագույն նշաններից մեկն է: Հետախույզը հայտարերեց անտառի յեզրին մի տասնյակ ծխացող յերթական խոհանոցներ և նրանց մոտ մի յերկու տասնյակ մարդկանցից վոչ ալիլի: Այդ միանգամից հնարավորութուն է տալիս հետախույզին յեզրակացնելու, վոր ինչ՝վոր մո

տեղում դասավորված է մի ամբողջ գունը, վորի համար և խոհանոցները կերակուր են պատրաստում:

Փոշու ամպերը կարող են ցույց տալ գորգերի շարժումը. յերբ շարժվում է հեծեկազորը, փոշու ամպը բարձրանում է շատ բարձր, յերբ հետեակին է շարժվում, փոշին փոխվում է ցածր և ավելի խիտ է լինում: Հրետանու և դումակների բարձրացրած փոշին անհավասարաչափ է բարձրուլթյամբ և միապաղաղ ամպ չի կազմում: Այլտոմոբիլը բարձրացնում է արագ շարժվող ամպում խիտ ամպ:

Մինչև իսկ փոքր պրակտիկայից հետո հեշտուլթյամբ փոշու ամպով կարելի յե վորոշել, թե ով է փոշին բարձրացնողը:

Բացի փոշուց շարժվող զինվորական մասը և մինչև իսկ զորքերի կազմը կարելի յե հայտարերել ձայնով: Հետեակի զորասյունի շարժման ժամանակ լսվում է հավասար, խուլ աղմուկ, վոր

Հագուստի տարագր նույնպես լավ ոժանդակում է հետախուզությանը: Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է կարողանա հակառակորդի հագուստի տարագրով (Ֆորմայով) վորոշել, թե զորքերի վոր տեսակին է պատկանում հայտարերած հակառակորդը (հետեակ, հեծեկազոր, հրետանի և այլն) և ինչ կոչում ունի նա (սոսկական, սպա):

Պրակտիկ ծանոթացումը հագուստի տարբերման նշանների հետ կամ թեկուզ հենց դրանց ուսումնասիրությունն աղյուսակներով կոզնի կարմիր բանակայինն այդ խնդրի լուծման մեջ:

Միզրի համար բավական է ուսումնասիրել ՆՍՀՄ մոտակա հարևանների տարագրը:

61. ԻՆՁՊԵՍ ՊԵՏԻ Ե ՀԱԳԻՎԵԼ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԵԼԻՍ

Դեռ խաղաղ ժամանակ դասակի հետ կամ ջոկով հետախուզության մեկնելիս՝ մի վերցրու հետք ավելորդ իրերը, վորոնց թվում նաև ամեն տեսակ փաստաթղթերը, նամակները, ծոցատետրերը և այլն:


Հանդերձանքը հարգարիւր այնպես, վոր վոչինչ չթափահարվի, չխանդարի շարժմանը ու ձայն չհանի:

Այլատի՛ր, վոր վոչ ճեղ վրա, վոչ ել ընկերներիդ վրա չլինեն այնպիսի իրեր, վորոնք իրենց փայլով կարող են ողնել հակառակորդին հայտարերելու հետախուզությունը: Ունեցիր ջողարկման պատկանելիքներ (ճյուղեր, խոտի փնջեր, խալաթ, ցանց): Յերբ մեկնում ես դրատով՝ ստուղիւր, թե կա՞ն արդյոք կեռեր (չափրաստներ), վորոնցով դրատիդ փեշերն ամրացնես դոտուդ, այդ կոզնի ճեղ հետախուզության մեջ անաղմուկ շարժվել:

Մրտտիր սվինդ, վորպեսզի նա իր փայլով չմատնի ճեղ:

Ստուղիւր փամփուշտներիդ առկայությունը և լրացրու պաշարդ, հետախուզի համար դժվար է հույս դնել թե թիկունքից նրան փամփուշտներ կհասցնեն, իսկ թշնամու հետ հանդիպումը նա պետք է շարունակ նկատի ունենա:


Վերցրու պարենավորման անձեռնմխելի պաշար և պահպանիր այն:



Նկ. 21. Սավառնակների տարբերման նշանները:

րից պարզ ջոկնվում է սայլերի դրդոցը. հեծեկազորի շարժումն իմացվում է ամբակները քափյունով. հրետանու շարժման ժամանակ հեռվից լսվում է ծանր դղրդոց և յերկաթի դրնդոց. ավտոմոբիլների ու տանկերի շարժումն իմացվում է մոտորների ձայնով: Քայլող մարդկանց ձայնն ավելի լավ է լսվում, յերբ մարդ տկանջը դնում է գետնին, կամ լարափակոցների ցցին:

Խնդիրը և ուղղութիւնը հետախույզին մատնանշում է հետախուզական ջոկի պետը: Տեղանքում հետախույզին ինքը ճշտում է իր շարժման ուղին, մանաւանդ յերբ դեռ ինքից է ստանում: Այսպիսի դեպքերում նա վաղորդը նշում է շնչառումների, դիտակետերի տեղերը և նրանց միջև յեղած տարածութիւններով շարժվելու յեղանակները:



Նկ. 22. Ավելի լավ է շարժվել ցանկապատերի ու ցանկապարիսպների յերկայնքով:

1) Նշելով շարժմանը ուղին, գործելը այնպես, վոր իբր հատառտապես դիտես, թե գտնվում ես հակառակորդի դիտողութեան տակ, վորը քո դեմ դավեր է նյութում, կամ դարան է պատրաստում քեզ համար:

2) Հետախուզութեան մեջ ժամանակը թանկ արժէք է, բայց ձեռք առնելով նախազգուշական բոլոր միջոցները, շարժվել միշտ այնպիսի արագութեամբ, վորը մատնանշել է քեզ քո պետը:

3) Յերեկով ավելի լավ է շարժվել ճորակներով, թիւումներով, ցանկապատերի ու ցանկապարիսպների յերկայնքով: (Նկար 22):

4) Յերբ քեզ դեռ չես պետ են նշանակել, առաջնորդի դեռն այնպես, վոր նա լավագոյն ձևով կատարի ինքիցը և քերի չընկնի: Պատրաստվելով տեղափոխվել մի դիտակետից դեպի մյուսը, վաղորդը նշիր ավելի վտանգավոր տեղերը, վորտեղ հնարավոր է հակառակորդի դարանը, և մտածիր, թե ինչպես ամենից հեշտ ու անվտանգ կարելի յէ անցնել այդ տեղերը և խաբել հակառակորդի աչալընթութիւնը:

5) Ընտրելով շարժման ուղիդ, նշիր նաև շնչառման համար կանգառումների տեղերը, միջնական կետերը դիտողութեան համար և այն տեղերը, վորտեղ տեղանքի պայմաններով դու ստիպված պետք է լինես շարժվել քայլով հասակով մեկ, վորտեղ պետք է անցնես վազով և կզացած և վորտեղ սողալով (խտով ծածկված բաց բլրակները, վորոնք ծածկարան են տալիս սողացող մարդուն): Յուրաքանչյուր տեղանքում դու կգտնես բաց մատուց, ծածկարան շնչառման և դիտողութեան համար: Սամատուց, ծածկարան շնչառման և դիտողութեան կտա ընտրելայն յերկարատե պրակտիկան միայն հմտութիւն կտա ընտրելու շարժման համար ծածկված ճանապարհ, — մարդվիր այդ բանի մեջ դաշտում, պարապմունքներում, յերթում կամ դրոսանքի ժամանակ. տեսնելով վորևէ նկատելի տեղական առարկա, վործիր մանակ. տեսնելով վորևէ նկատելի տեղական առարկա, վործիր լուծել, թե ինչպես դու կմոտենայիր նրան աննկատելիորեն. վարժվիր աննկատելի կերպով մոտենալ թռչունին կամ կենդանուն, — այդպիսի մի հաջող վարժութիւն ավելի շատ ոգուա կտա, քան թե ժամեր տեղ պարապմունքը շնչում:

Յուրաքանչյուր հետախույզ պետք է պատրաստ լինի կատարելու դեռ չես պետի ինքիցը կամ փոխարինելու շարքից դուրս յեկած ջոկի հրամատարին: Դրա համար՝

1) Ծարժման ուղին ավելի լավ է ընտրելը ճանապարհի մի կողմում:

2) Ծարժվելով ճանապարհով, մի գնա նրա մեջտեղով. հակառակորդն ամենից շատ է գիտում ճանապարհի մեջտեղը:

3) Յեթե ճանապարհի կողքերին խրամներ կան, ավելի լավ է ոգովիը նրանցից շարժման համար և կանգառումներին ծածկվելու համար:

4) Յերբ ճանապարհի յեզրերին ծառերն են տնկված, շարժվիր նրանց ստվերում, իսկ կանգառումների ժամանակ ծածկվիր այդ ծառերի ընկերի յետևում (նկար 23):

5) Ծարժման ու կանգառումների ժամանակ խուսափիր այնպիսի վայրերից, վորտեղ հետախույզի հազուստն առանձնապես շատ է աչքի ընկնում (պաշտպանական հագուստը սև հողի կամ ձյունի վրա):

6) Պատրաստվելով փոխելու դիտողութան վայրը, դուրս մի ցցվիր, վորպեսզի վաղաժամ հակառակորդին չհայտնես թո՛ւ մտադրությունները:

Անտառում ուղատները պետք է սողալով անցնել, բացատները պետք է շրջանցել կամ նույնպես սողալով անցնել:



Правильно Неправильно

Ճիշտ

Միայ

Անհրաժեշտ է խուսափել անտառային ճանապարհով շարժվելուց, պետք է շարժվել նրանից վորոչ հեռավորութան վրա:

Անտառով պետք է շարժվել վորքան կարելի յե կամայ, ուշադրությամբ ականջ դնել յուրաքանչյուր ձայնին, շշուկին, չրխկոցին, շրջունին և այլն:

Անտառից հարկավոր է դուրս դալ, ծածկվելով ծառերի ընկերի կամ թփերի յետևում. իսկ յերբ անտառը նոսր է և ծածկված չէ թփերով, պետք է դուրս սողալ անտառի յեղը և դնելով չորս կողմը, դանդաղ ու զգուշությամբ վորտքի կանգնել:

64. ԻՆՉՊԵՍ ԽՈՒՍԱՓԵԼ ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅԱՆ ՄԵՃ ՄՈԼՈՐՎԵԼՈՒՑ

Հետախուզության մեջ կարմիր բանակայինն ամենից հաճախ կաշխատի հետախուզական ջոկի կազմի մեջ. բայց նա կարող է նշանակվել նաև հետախուզական դետքի պետ, իսկ յերբեմն նրան հարկ կլինի փոխարինել շարքից դուրս յեկած ջոկի հրամատարին: Իսկ ավելի հաճախ հետախույզին կվիճակվի շարժվել մենակ, յերբ առաջադրություն է ստանում տեղ հասցնել գեկուցադիրը:

Հետախույզին ու հետախուզական ջոկերին ամենից հաճախ վիճակվում է աշխատելու գիշերով, իսկ յեթե անգամ ցերեկով և նա աշխատում, նրանք շարժվում են առանց ճանապարհների և նա աշխատում, նրանք շարժվում են անտառով: Ամեն մեկն էլ լավ գիտե, այն էլ կարող տեղանքով և անտառով: (ճանապարհը կորցնել) անտառում թե ինչքան հեշտ է մոլորվել (ճանապարհը ևս հետախուզական գիշերը: Բայց հետախույզը, իսկ առավել ևս հետախույզ կան ջոկը վոչ մի դեպքում չպետք է մոլորվի: Յերբ հետախույզը կան մոլորվեց, այդ նշանակում է, վոր նա չի կատարել խնդիրը, իսկ մատթարադույն դեպքում կընկնի հակառակորդի ձեռքը: Վոր վատթարադույն դեպքում կընկնի հետախույզ պետք է կարողանա պեսզի չմոլորվի՝ յուրաքանչյուր հետախույզ պետք է կարողանա ամեն «կողմնորոշվել», այլ կերպ ասած՝ նա պետք է կարողանա ամեն ժամանակ վորոշել, թե վորտեղ է ինքը գտնվում և ինչ ուղղությամբ պետք է շարունակի առաջ շարժվել:

Ծարժման ուղղությունը վորոշելու համար լավագույն է ամենաճիշտ գործիքը կադմեացույցն է: Յուրաքանչյուր հեղափոխական պարտավոր է սովորել կողմնացույցով վորոշել յերկրի խույզ պարտավոր է սովորել կողմնացույցով վրա «բումբը» և կարողանալ կողմերը, վորոշել վորոչ առարկայի վրա «բումբը» ուղղությամբ շարժվել ցույց տված «բումբի» ուղղությամբ:

Ծարժման ճիշտ ուղղությունը պահպանելուն ոգնում են հեղափոխական պարզ տեսանելի առարկաները (գանգակատունը, գործարավից պարզ տեսանելի առարկաները (անտառի ծառեր և այլն): Կողմնացույց չունային ծիսնելույթ, առանձին ծառը և այլն): Կողմնացույց չունային ծիսնելույթ, առանձին ծառը և այլն): Կողմնացույց չունային ծիսնելույթ, առանձին ծառը և այլն): Կողմնացույց չունային ծիսնելույթ, առանձին ծառը և այլն): Կողմնացույց չունային ծիսնելույթ, առանձին ծառը և այլն):

ստուգել իր շարժման ուղղութիւնը՝ ճշտութեամբ (արեգակով, ժամացույցով, աստղերով, ծառերով ու քարերով)։

Արեգակն որով կենին դտնվում ե հարավում։ Կեսօրին, յերեսներս արեգակին դարձնելով, մենք մեր աջ ձեռքի կողմում կունենանք արեամուտքը, ձախ ձեռքի կողմում՝ արեւելքը, իսկ յետ դառնալով, մենք կնայենք ուղիղ դեպի հյուսիս։ Որվա ինչ ժամանակ ել լինի, արեւին նայելով, կարելի յե մտտավորապես ասել, թե վորտեղ ե հարավը, վորտեղ են արեամուտքը, արեւելքը և հյուսիսը։

Յերկրի կողմերը չափադանց ճիշտ կարելի յե վորոշել արեգակով, ձեռքում ունենալով ժամացույցը։ Ժամացույցը դրվում ե դետնին և դարձրվում ե այնքան ժամանակ, մինչև վոր ժամեր նշող սլաքը կնայի ուղիղ արեւին։ Այս դեպքում հարավը ցույց ե տալիս այն գիծը, վորն անց ե կացվում ժամացույցի սլաքի առանցքից դեպի 12-ի ու ժամերը նշող սլաքի մեջտեղում յեղած թվանշանը։ (Ժամի 12-ին հարավը կլինի այնտեղ, վորտեղ 12 թվանշանն ե, ժամի 10-ին հարավը ցույց կտա «11» թվանշանը, իսկ ժամի վեցին հարավը ցույց կտա «3» թվանշանը)։

Գրեվեռային աստղ



Նկ. 24

Գիշերով ուղղութիւնը վորոշվում ե բեռնային աստղով։ Բեվեռային աստղը միշտ ցույց ե տալիս հյուսիսը (նկար 24)։

Մառախուղապատ յեղանակին, յերբ արեւն ու աստղերը չեն յե-

րեվում, յերկրի կողմերը կարելի յե վորոշել այլ նշաններով։ Բարեբն ու ծառերի բները հյուսիսային կողմից ծածկված են մաժուռով։ Առանձին կանգնած խոշոր ծառերի ճյուղերը ավելի շատ ձգվում են դեպի հարավ։ Յեկեղեցիները կառուցվում են այնպես, վոր սեղանները (բեմը) նայում ե դեպի արեւելք, կոտայուները (կաթոլիկների յեկեղեցիների) բեմը՝ դեպի արեամուտք։

Ստանալով խնդիրը, հետախուզական ջոկի հրամատարը, կամ դետքում ավագը և կամ գեկուցադիր տանող հետախույզը կողմնացույցով նշում են տվյալ ուղղութիւնը դեպի հյուսիսի ուղղութիւնը՝ նկատմամբ, — նշում ե «բումբը», վորով պետք ե շարժվել։ Կողմնացույց ունենալով ձեռքում և չմտտանալով յերբեմն նայել կողմնացույցին, հետախույզը չի շեղվի ճառագարհից վո՛չ դեպի հակառակորդը շարժվելիս և վո՛չ ել վերադառնալիս։

Յերբ կողմնացույց չկա, հետախույզը նշում ե, թե դեպի վո՛ր կողմը պետք ե շարժվել ըստ յերկրի կողմերի (արեամուտք, արեւելք, հարավ, հարավ-արեւելք և այլն)։ Մոլորվելով ճանապարհին հետախույզը վորոշում ե թե վո՛րտեղ ե հարավը, վորտեղ ե հյուսիսը և այլն և կրկին վորոշելով ճիշտ ուղղութիւնը, շտկում ե իր սխալը։

Հետախույզին մեծ ոգնութիւն են ցույց տալիս, մանավանդ գիշերը, բարձր, լավ նկատելի առարկաները (զանգակատունը, դործարանի ծխնելույզը, առանձին մեծ ծառը, բարձր թումբը և այլն)։

65. ԻՆՉՊԵՍ ԵՆ ՎԱՐՈՒՄ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՇԵՐՈՎ

Գիշերով հակառակորդն ուշի-ուշով հետևում ե բոլոր ճանապարհներին, կածաններին։ Այդ պատճառով գեկուցադիր տանող հետախույզը կամ դետքը և կամ հետախուզական ջոկը պետք ե շարժվեն գիշերով ճանապարհեց դուրս և պետք ե կարողանան չչեղվել նշված ճանապարհից։

Գիշերով պետք ե կարողանան ոգտագործել ծածկվելու համար ծառերի, թիւռաների, շենքերի և այլ առարկաների ստվերը։ Ըստ հնարավորին պետք ե շարժվել ցածրավայրերով, վորովհետև այստեղ հետախույզն ընկնում ե ավելի մութ տեղեր,

իսկ իրեն մոտեցող հակառակորդը պատկերվում է հորիզոնի պայծառ գծի վրա:

Գիշերով աչքերը վատ ունական են հետախույզի համար, ավելի շատ պետք է հույս դնել լսողություն վրա: Ամեն տեսակ կանգառումների ժամանակ հետախույզը պետք է ուշադրութեամբ դիտի և ականջ դնի:



Նկ. 25. Կոշտ գետնին սկզբում պետք է դնել վառքերի ծայրերը
Նկ. 26. Փափուկ գետնին սկզբում պետք է դնել կրունկը:

Գիշերային հետախույզության մեջ առանձնապես կարևոր է անաղմուկ շարժվելը: Սայթաքելուց և խոտի խշխշոց առաջացնելուց խուսափելու համար ամենից լավ է բարձրացնել վոտքերը սովորականից բարձր և զետիս դնել վոտքան կարելի յե կամաց:

Փափուկ գետնին հետախույզը պետք է առաջ դնի կրունկը և ապա իջեցնի ամբողջ թաթը (նկար 25):

Կոշտ գետնին առաջ պետք է դնել վոտքի ծայրը և ապա սահուն իջեցնել կրունկը (նկար 26):

Յերբ գիշերով հետախույզը լսում է, վոր նրա դեմ շարժվում է հակառակորդը, նա պետք է պատկի, կպչելով գետնին և գառչի այդ դրութեամբ, մինչև վոր կպարզի հակառակորդի շարժումը: Հակառակորդի հետախույզը հավանաբար չի նկատի թագնվածին, թեկուզ և անցնի նրա կողմից:

Գիշերով վազել պետք չէ: Պետք չէ նույնպես ցատկելով անցնել խրամներից, ցանկապատերից, ցանկապարիսպներից:

Անհրաժեշտ է անցնել նրանց վրայից կամաց սողալով, վորովհետև հետև գիշերով յուրաքանչյուր ձայն ավելի ուժեղ է լսվում, քան թե ցերեկով: Չծխել. մութ գիշերով վառած լուցիկու բոցը յերևում է համարյա մի կիլոմետրից, իսկ ծխախոտի կրակը՝ մի յերրորդ կիլոմետրից:

Հետախույզը գիշերով հաճախ դեմ կաննի լարավաղոցների: Գիշերով լարից անցնելու համար հետախույզն այնքան է կուսումնասիրում ցած, վոր կարողանա տեսնել փշալարերի շարքերը: Մի ձեռքով բռնել փշալարի առաջին շարքից, նա մյուս ձեռքով շոշաքով բռնել փշալարի առաջին շարքից, և միևնույն ժամանակ շոշափում է վոտքով և յերկրորդ շարքը և միևնույն ժամանակ շոշափում է և աղմուկ արձագողով տեղը, առանց դիպչելու փշալարին և աղմուկ արձագողով համար նրան ամբողջաժ թիթեղն տուփերին և այլն: Կակելու համար նրան ամբողջաժ թիթեղն տակից յերեսը դեպի վեր, բելի յե սողալով անցնել փշալարի տակից յերեսը դեպի վեր, ձեռքերով բարձրացնելով փշալարի ներքին շարքերը:

